

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ձեռնարկ

Մանկավարժների համար

Երևան – 2023

ՀՏԴ

ԳՄԴ

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների նկարագիրը կրթության կազմակերպման գործընթացում:

Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ մանկավարժների համար / Ա. Հ. Սվաջյան և ուրիշ.: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն. - Եր.: Էդիթ Պրինտ, 2023- 147 էջ:

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից՝ որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ մ. գ. թ., դոցենտ Ա. Հ. Սվաջյան

Գրախոսներ՝

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հովյան Գ. Ռ.

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Սարատիկյան Լ. Հ.

Հեղինակներ՝

Սվաջյան Ա. Հ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ազատյան Թ. Յու., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Բաբայան Լ. Ա., մանկավարժական գիտությունների թեկնածու

Թադևոսյան Է. Ռ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Թադևոսյան Հ. Վ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հարությունյան Մ. Ռ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մանուկյան Ա. Տ., հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Ս. Վ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Օհանյան Հ. Վ.

Համակարգչային ձևավորում՝ Խուդավերդյան Դ. Գ., Դավթյան Հ. Լ.

Խմբագիր՝ Սարգսյան Հ. Ա.

Մույն ձեռնարկի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների միջև համագործակցության ուղիների ներկայացումն է՝ միտված յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

ISBN

ՀՏԴ

ԳՄԴ

Տպաքանակը՝ 150 օրինակ

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	4
Ուսումնական հաստատություն-SՄԱԿ համագործակցությունը մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման համատեքստում.....	5
Մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետների գործունեության էթիկական սկզբունքները	15
Հոգեբանի կողմից հանրակրթական դպրոցում իրականացվող ծառայության նկարագիր	26
Հատուկ մանկավարժի կողմից հանրակրթական դպրոցում իրականացվող ծառայության նկարագիր.....	64
Լոգոպեդի կողմից հանրակրթական դպրոցում իրականացվող ծառայության նկարագիր	65
Օլիգոֆրենոմանկավարժի կողմից հանրակրթական դպրոցում իրականացվող ծառայության նկարագիր.....	73
Մուրդոմանկավարժի կողմից հանրակրթական դպրոցում իրականացվող ծառայության նկարագիր.....	82
Տիֆլոմանկավարժի կողմից հանրակրթական դպրոցում իրականացվող ծառայությունների նկարագիր	97
Էրգոթերապիստի կողմից հանրակրթական դպրոցում իրականացվող ծառայության նկարագիր.....	104
Սոցիալական մանկավարժի կողմից հանրակրթական դպրոցում իրականացվող ծառայության նկարագիր.....	120
Օգտագործված գրականության ցանկ	140

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվող ուսումնադաստիարակչական գործընթացները կարևոր է կառուցել՝ հիմք ընդունելով բոլոր սովորողների առանձնահատկություններն ու կարիքները, որոնց վրա հիմնվելով էլ՝ տրամադրել մանկավարժահոգեբանական աջակցություն՝ նպատակ ունենալով խթանել յուրաքանչյուր երեխայի առավելագույն մասնակցությունը ուսումնական գործընթացին:

Այս համատեքստում իր կարևոր դերն ունի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների (այսուհետ՝ ՏՄԱԿ) և հանրակրթական դպրոցների միջև համագործակցությունը, որի շրջանակներում իրականացվում են հոգեբանի, հատուկ մանկավարժների, սոցիալական մանկավարժի, էրգոթերապիստի կողմից տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները ուսումնական հաստատության սովորողին, ծնողին, մասնագետներին, ուսուցիչներին, ուսուցչի օգնականներին, վարչական աշխատողներին:

Սույն ձեռնարկում մանրամասն ներկայացված են յուրաքանչյուր մասնագետի գործառույթներից բխող աշխատանքների նկարագրությունն ու ուղղվածությունը, գործունեության հիմնական էթիկական սկզբունքները, տարեկան ծրագրերի նմուշօրինակներ:



**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ-ՏՄԱԿ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

Ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:

Համաձայն 2022 թվականի փետրվարի 9-ին Ազգային ժողովի կողմից ընդունված «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ ՀՕ-35-Ն օրենքի Հոդված 1., 10.2-րդ կետի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձը սահմանվում է որպես «խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության և այլ խնդիրներով պայմանավորված՝ ուսուցման հետ կապված դժվարություններ ունեցող, ինչպես նաև բացառիկ ընդունակություններ ունեցող անձ, ում կողմից հանրակրթական հիմնական



ծրագրերի յուրացման համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումներ»:

ԿԱՊԿ ունեցող երեխաների կրթությունն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով ստեղծվել է երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ, որի արդյունքում ԿԱՊԿ ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական (այսուհետ՝ ՄՀ) աջակցություն են ստանում 3 մակարդակում՝

- ուսումնական հաստատության մակարդակ՝ ՄՀ աջակցության խմբի կողմից,
- տարածքային մակարդակ՝ Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի (այսուհետ՝ ՏՄԱԿ) կողմից,
- հանրապետական մակարդակ՝ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի (այսուհետ՝ ՀՄԿ) կողմից (ՀՀ ՀՕ-35-Ն օրենքի Հոդված 17, կետ 1): ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1058-Ն որոշման համապատասխան՝ 2016 թվականից մինչ օրս ըստ համընդհանուր ներառական կրթության ներդրման ժամանակացույցի կազմավորվել են թվով 20 ՏՄԱԿ-ներ ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում: Վերոնշյալ ՏՄԱԿ-ները ձևավորվել են հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների վերակազմակերպման արդյունքում, իսկ Տավուշի, Արարատի և Վայոց Ձորի մարզերում, որտեղ առկա չէին հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ, ծառայությունները դրամաշնորհային մրցույթի միջոցով պատվիրակվել են համապատասխանաբար «Հույսի կամուրջ», «Քեզ համար» և «Մանկական զարգացման հիմնադրամ» ՀԿ-ներին:



Համաձայն 2016 թ. հոկտեմբերի 13-ին ՀՀ Կառավարության N 1047-Ն որոշմամբ հաստատված «Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների օրինակելի կանոնադրությունների» և ԿԳՄՄ նախարարի՝ 2017 թ. ապրիլի 13-ի N 370-Ն հրամանով հաստատված «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգի»՝ ՏՄԱԿ-ները սովորողին, նրա ծնողին և ուսումնական հաստատության մանկավարժներին տրամադրում են ՄՀ աջակցության հետևյալ ծառայությունները.

Կրթության առանձնահատուկ պայմանների գնահատում՝ սովյալ երեխայի համար անհրաժեշտ կրթության առանձնահատուկ պայմաններ սահմանելու նպատակով ծառայությունների մատուցում այն սովորողներին, ովքեր ունեն խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության խանգարումով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք:

1. Խորհրդատվությունների տրամադրում ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողներին և երեխայի ծնողին՝ երեխայի կրթության կազմակերպման, ուսումնառության արդյունավետության բարձրացման, դասապրոցեսին մասնակցության խթանման և սոցիալական ներգրավման վերաբերյալ:
2. Կարողությունների զարգացմանն ուղղված դասընթացների անցկացում ուսումնական հաստատություններում՝ ուսուցիչների, ուսուցչի օգնականների, վարչական աշխատակիցների, ինչպես նաև ծնողների համար:



3. Մշտադիտարկումների իրականացում ուսումնական հաստատություններում՝ նպատակ ունենալով գնահատել ՄՀ աջակցության ծառայությունների արդյունավետությունը, բացահայտել ԿԱՊԿ ունեցող սովորողների ուսումնատության ընթացքում ծագած խնդիրները և կազմակերպել համապատասխան միջոցառումներ:
4. Բովանդակային մշակումների իրականացում՝ նպատակ ունենալով մշակել ԿԱՊԿ ունեցող սովորողների կրթության արդյունավետության բարձրացմանը խթանող մեթոդական նյութեր, դիդակտիկ խաղեր և այլն:
5. Իրազեկման բարձրացմանն ուղղված գործողություններ՝ նպատակ ունենալով նպաստել հասարակության իրազեկվածությանը ԿԱՊԿ ունեցող սովորողների մասին, ինչպես նաև նպաստել համայնքային կյանքում նրանց սոցիալականացմանը:

Վերոնշյալ գործառնությունների իրականացման շրջանակում ՏՄԱԿ-ները բովանդակային և ծավալային մեծ աշխատանք են կատարում:

ՀՄԿ-ը՝ հիմնվելով իր կանոնադրական գործառնությունների վրա, սահմանում է ՄՀ աջակցության և ԿԱՊԿ գնահատման միասնական մոտեցումը, մշակում ՄՀ ծառայությունների ոլորտը կարգավորող իրավական ակտերը և համակարգում ՏՄԱԿ-ների աշխատանքներն ու ԿԱՊԿ ունեցող երեխաների տեղեկատվական համակարգը, իրականացնում տվյալների վերլուծություն և առաջարկություններ անում քաղաքականության մշակման ու իրականացման վերաբերյալ:

ՏՄԱԿ-ի գործունեության նպատակն իր սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում սովորողների կրթության մասնակցային կազմակերպմանը և ԿԱՊԿ ունեցող



երեխաների ներառմանն աջակցելն է (ՀՀ Կառավարության 13 հոկտեմբերի 2016 թվականի N 1058-Ն որոշում, հավելված 2, կետ 16):

Կրթության կազմակերպման ոլորտում ՏՄԱԿ-ը իրականացնում է ՄՀ աջակցության տրամադրում՝ տարածքային մակարդակի ծառայությունների մատուցում, իր սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում ընդգրկված երեխաների կրթության աջակցության ծառայությունների մատուցում, համակարգում և վերահսկում է այդ ծառայությունների մատչելիությունը և արդյունավետությունը, իրականացնում է երեխաների ԿԱՊԿ գնահատում:

Իրեն լիազորված գործառույթներն իրականացնելու համար ՏՄԱԿ-ը սերտորեն համագործակցում է իր սպասարկման տարածքի բոլոր ուսումնական հաստատությունների հետ հետևյալ ուղղություններով.

Մանկավարժահոգեբանական աջակցություն

- Տրամադրում է ՄՀ աջակցության ծառայություններ (հատուկ մանկավարժական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական) սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում սովորող ԿԱՊԿ ունեցող երեխաներին՝ ըստ «Կրթության կազմակերպման ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրման կարգով» սահմանված ծավալի և տևողության:

Գնահատում

- Իրականացնում է ԿԱՊԿ գնահատում, որի հիման վրա սահմանվում են տվյալ սովորողի համար անհրաժեշտ կրթության առանձնահատուկ պայմանները:
- Մուտքագրում է գնահատված երեխաների վերաբերյալ



տվյալները ԿԱՊԿ ունեցող երեխաների տեղեկատվական համակարգ:

- Մասնակցում է երեխայի ԱՌԻՊ-ի մշակման գործընթացին:

Խորհրդատվություն

Տրամադրում է խորհրդատվություններ.

- սպասարկման տարածքում գտնվող ուսումնական հաստատությունների մանկավարժներին, ուսուցչի օգնականներին, վարչական աշխատակիցներին,
- ԿԱՊԿ ունեցող երեխաների ծնողներին,
- սպասարկման տարածքում գործող շահագրգիռ կառույցներին:

Վերապատրաստում

- Իրականացնում է վերապատրաստման դասընթացներ սպասարկման տարածքում գտնվող ուսումնական հաստատությունների մանկավարժների համար՝ ՀՄԿ-ի կողմից տրամադրված մոդուլների համաձայն,
- Իրականացնում է սեմինարներ ՏՄԱԿ-ի կողմից մշակված և ՀՄԿ-ի կողմից փորձաքննություն անցած մոդուլների միջոցով:

Մշտադիտարկում

- Մշտադիտարկում և աջակցում է ԿԱՊԿ ունեցող երեխաների՝ ուսումնական գործընթացին ներգրավվածությանն ու մասնակցությանը,
- Մշտադիտարկում և աջակցում է ԱՌԻՊ-ով իրականացվող աշխատանքներին,
- Մշտադիտարկում և աջակցում է ծնողների հետ և ծնողների կողմից իրականացվող աշխատանքներին,
- Աջակցում է կրթությունից դուրս մնացած երեխաների՝ կրթության մեջ ներգրավման գործընթացին,



- Արագ արձագանքում և համապատասխան կառույցներին տեղեկացնում է երեխաների իրավունքների խախտման հայտնաբերված դեպքերի մասին:

Բովանդակային մշակումներ

Մշակում է.

- սեմինարների մոդուլներ,
- դիդակտիկ նյութեր և պարագաներ,
- ՄՀ ծառայությունների վերաբերյալ ուսումնամեթոդական ձեռնարկներ, հոդվածներ, էլեկտրոնային նյութեր:

ՏՄԱԿ-ի պոտենցիալ շահառու են հանդիսանում սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում ընդգրկված բոլոր երեխաները, սակայն ՏՄԱԿ-ը, մասնավորապես, ծառայություններ է մատուցում հետևյալ խմբերին՝

1. Երեխաներ՝

- ովքեր ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ պայմանավորված հետևյալ հանգամանքներով՝ խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության խնդիրներ և բացառիկ ընդունակություններ:
- Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (այսուհետ ԿԴԻՀ) երեխաներ, որոնց կյանքի դժվարին իրավիճակն անդրադառնում է նրանց զարգացման, կրթության և սոցիալականացման գործընթացների վրա՝
- առանց ծնողական խնամքի մնացած (այսուհետ՝ ԱԾԽՄ) երեխաներ,
- բռնության ենթարկված երեխաներ,
- վարքային խնդիրներ ունեցող երեխաներ,
- սոցիալ-հոգեբանական խնդիրներ ունեցող երեխաներ,



- ոստիկանությունում հաշվառված, ազատազրկման վայրից վերադարձած, պայմանական կամ այլընտրանքային պատիժ կրող երեխաներ,
- փողոցում հայտնված՝ թափառաշրջիկ, մուրացիկ երեխաներ,
- կրթությունից դուրս մնացած երեխաներ,
- արտակարգ իրավիճակում հայտնված երեխաներ՝ պատերազմական իրավիճակից տուժած, ազգամիջյան կամ կրոնական հակամարտությունների, էկոլոգիական կամ տեխնածին վթարների, տարերային աղետների, թրաֆիքինգի զոհ դարձած երեխաներ, փախստականների, ապաստան հայցողների և/կամ հարկադիր տեղահանված ընտանիքների երեխաներ:

2. Մանկավարժներ՝

- ուսուցիչներ,
- նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժներ,
- ուսուցչի օգնականներ,
- ուսումնական հաստատության վարչական անձնակազմ:

3. ՄՀ աջակցություն տրամադրող մասնագետներ՝

- հոգեբան,
- հատուկ մանկավարժ (տիֆլոմանկավարժ, սուրդոմանկավարժ, օլիգոֆրենոմանկավարժ, լոգոպեդ, էրգոթերապիստ),
- սոցիալական մանկավարժ:

4. Ծնողներ կամ օրինական ներկայացուցիչներ,

5. Շահագրգիռ կառույցների մասնագետներ՝

ՏՄԱԿ-ի շահառուները հիմնականում ուղղորդվում են սպասարկման տարածքում գործող ուսումնական հաստատություն-

ներից: ՏՄԱԿ-ը ծառայություն մատուցում է «Կրթության կազմակերպման ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրման կարգով» (այսուհետ՝ ՄՀԱ կարգ) սահմանված դեպքերում հետևյալ ընթացակարգերով.

Գնահատում

- ԿԱՊԿ գնահատման նպատակով ՄՀԱ կարգում նախատեսված ընթացակարգով ՏՄԱԿ-ին կարող են դիմել ուսումնական հաստատությունների տնօրենները՝ կից ուղարկելով ծնողի դիմումը:
- Ծնողը կամ օրինական ներկայացուցչն իր նախաձեռնությամբ և դիմումի համաձայն կարող է դիմել ՏՄԱԿ-ին՝ իր երեխայի ԿԱՊԿ-ը գնահատելու նպատակով:
- ՏՄԱԿ-ը գնահատում է իրավապաշտպան կազմակերպությունների կողմից հայտնաբերված երեխաների ԿԱՊԿ-ը՝ ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումի համաձայն:

Աջակցություն

- ՏՄԱԿ-ը աջակցություն տրամադրում է ԿԱՊԿ գնահատում անցած երեխաներին՝ ՄՀԱ կարգով սահմանված ծավալի և տևողության համաձայն:
- ՏՄԱԿ-ը ՄՀ աջակցության ծառայություններ է մատուցում ԿԴԻՀ երեխաներին, եթե նրանք ուսումնական հաստատությունում ունենում են շարունակական դժվարություններ՝ նպաստելով նրանց՝ կրթության մեջ ներառմանը և ուսումնական գործընթացում մասնակցության բարձրացմանը:
- ՏՄԱԿ-ը ՄՀ աջակցություն է տրամադրում երեխային նրավերաբերյալ շահագրգիռ կառույցներից կամ համայնքի բնակիչներից համապատասխան տեղեկատվության ստացման դեպքում ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումի համաձայն:



Խորհրդատվություն և վերապատրաստում

- ՏՄԱԿ-ը խորհրդատվություններ է տրամադրում և վերապատրաստումներ իրականացնում սպասարկման տարածքում գտնվող ուսումնական հաստատությունների մանկավարժների համար:
- ՏՄԱԿ-ը կարող է իրեն դիմելու դեպքում խորհրդատվություններ տրամադրել և վերապատրաստումներ անցկացնել ոլորտում գործող կազմակերպությունների մասնագետների համար:

Ուղղորդում և համագործակցություն

- ՏՄԱԿ-ի կողմից երեխան կարող է ուղղորդվել շահագրգիռ կազմակերպություններ՝ ելնելով իր կրթական կարիքների գնահատման վերաբերյալ կենտրոնի մասնագետների եզրակացությունից:
- ՏՄԱԿ-ի մասնագետները անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն են փոխանցում և ուղղորդում համապատասխան կառույցներ շահառու երեխայի ընտանիքի անդամներին երեխայի հետ աշխատանքի ընթացքում հայտնաբերված ընտանիքի կամ ընտանիքի անդամների կարիքների նախնական գնահատման հիման վրա:

Ներառական կրթության իրականացման համատեքստում չափազանց կարևոր է ՏՄԱԿ-ուսումնական հաստատություն համագործակցությունը, որի արդյունքում համակողմանի և լիարժեք մասնագիտական աջակցություն են ստանում երեխան, ծնողը և ուսումնական հաստատության կրթության պատասխանատուն: Որքան ակտիվ և բովանդակային է համագործակցությունը, այնքան իրատեսական է յուրաքանչյուր երեխայի առավելագույն մասնակցությունը կրթական գործընթացին:

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԷԹԻԿԱԿԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ**

Մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետների գործունեության էթիկական կանոնների ու սկզբունքների պահպանումը հնարավորություն է տալիս ոչ միայն որակյալ ծառայություններ տրամադրել, այլ նաև իրականացնել դրական և կառուցողական համագործակցություն ինչպես սովորողների, այնպես նրանց ծնողների և մանկավարժների հետ:

Էթիկական սկզբունքները կոչված են ապահովել.

- մասնագիտական խնդիրների լուծումը՝ համաձայն էթիկական նորմերի,
- այն մարդկանց օրինական իրավունքների պաշտպանությունը, որոնց հետ մասնագետը մասնագիտական փոխհարաբերության մեջ է, օրինակ՝ սովորողների, սաների, ուսանողների, մանկավարժների, ծնողների, հետազոտությունների մասնակիցների և այլն,
- մասնագետի և շահառուի միջև վստահության պահպանումը,
- մանկավարժահոգեբանական ծառայության հեղինակության ամրապնդումը սովորողների, ծնողների և մանկավարժների շրջանում:

Հիմնական էթիկական սկզբունքներ են հանդիսանում (Овчарова 2003, Савинков, 2020, Дубровина 2022, Фертикова, 2017).

1. գաղտնապահությունը,
2. կարողունակությունը,

3. պատասխանատվությունը,
4. էթիկական և իրավաբանական իրավասությունը,
5. շահառուի բարեկեցությունը,
6. մասնագիտական համագործակցությունը,
7. վերաբերմունքի դրսևորում և աշխատանքների պատշաճ կազմակերպումը:

Դիտարկենք յուրաքանչյուր սկզբունք առավել մանրամասն:

1. **Գաղտնապահություն** (Овчарова 2003, Савинков, 2020, Дубровина, Фертикова, 2017)
 - Տեղեկությունը, որն ստացվել է մասնագետի կողմից աշխատանքի ընթացքում, ենթակա չէ գիտակցական կամ պատահական հրապարակման, իսկ էթե անհրաժեշտություն կա փոխանցել այն երրորդ անձանց, ապա պիտի ներկայացված լինի այնպիսի տեսքով, որը կբացառի նրա օգտագործումը շահառուի շահերի դեմ:
 - Այն անձինք, որոնք մասնակցում են մանկավարժահոգեբանական հետազոտություններին, դասընթացներին և այլ միջոցառումներին, պիտի տեղեկացված լինեն այն տեղեկության ծավալի և բնույթի մասին, որը կարող է հաղորդվել հետաքրքրված այլ անձանց և (կամ) հաստատություններին:
 - Սովորողների, ծնողների, մանկավարժների մասնակցությունը մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններին պիտի լինի գիտակցված և կամավոր:
 - Եթե շահառուից ստացված տեղեկության մասին հարցում է արվում փորձագետների կողմից, այն պիտի տրամադրվի այնպես, որ բացառվի շահառուի անձի նույնականացումը փորձագետների կողմից: Այդ պատճառով շահառուի մասին

ամբողջ տեղեկույթը գրանցվում և պահպանվում է խիստ գաղտնիության պայմաններում:

- Մասնագիտական գործունեության մասին հաշվետվությունները, հետազոտությունների արդյունքները և հրապարակումները անհրաժեշտության դեպքում կազմվում են այնպես, որ շահառուի նույնականացումը շրջապատող այլ անձանց կողմից բացառվի:
- Հետազոտության և խորհրդատվության ժամանակ երրորդ անձանց ներկայության համար անհրաժեշտ է շահառուի և այն անձանց նախնական համաձայնությունը, ովքեր նրա համար պատասխանատվություն են կրում (այն դեպքում, եթե շահառուի 16 տարին դեռ չի լրացել):
- Ուսումնական հաստատության տնօրենությունը, որի հանձնարարությամբ անց է կացվում մանկավարժահոգեբանական հետազոտությունը, նախապես զգուշացվում է այն մասին, որ իր վրա (տնօրենության) ևս տարածվում է մասնագիտական գաղտնիքի պահպանման պարտավորությունը: Հետազոտության և եզրակացության արդյունքները տնօրենությանը հայտնելիս կարևոր է, որ մասնագետը ձեռնպահ մնա այնպիսի տվյալներ հայտնելուց, որոնք կարող են վնաս հասցնել շահառուին և կապ չունեն կրթական իրավիճակի հետ:
- Անհրաժեշտ է, որ մասնագետը պահպանի սովորողների անձնական տվյալների գաղտնիության պահանջները, գաղտնի պահի մասնավոր կյանքի անձեռնմխելիությանն առնչվող տեղեկությունը, ինչպես նաև նրա կողմից իրեն վստահված գաղտնիքը՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, անձին վերաբերող տեղեկությունը օգտագործի բացառապես ի շահ երեխայի:



- Ցանկալի չէ սովորողների հետ կիսվել սոցիալական մեդիայի կամ այլ անձնական կոնտակտային տվյալներով: Այնուամենայնիվ, ոչ մի վատ բան չկա, եթե անձնական էլեկտրոնային փոստի հասցեն կամ հեռախոսահամարը մասնագետը տրամադրի վստահելի սովորողին: Որոշ սովորողներ նախընտրում են կապ պահպանել սոցիալական ցանցի միջոցով:
- Չի կարելի ծնողների հետ քննարկել այլ սովորողներին կամ դպրոցին վերաբերող գաղտնի հարցեր (օրինակ՝ կրճատումներ, բյուջեի առաջարկվող կրճատումներ և այլն):
- Պետք է խոհեմություն դրսևորել սովորողների և որևէ գաղտնիքի մասին այլ մասնագետների հետ խոսելիս:

2. **Կարողունակություն** (Օվչարова 2003, Савинков, 2020, Дубровина 2022)

- Մասնագետը հաշվի է առնում սեփական կարողունակության սահմանները և գործում դրանց շրջանակներում:
- Մասնագետը պատասխանատվություն է կրում իր գործունեության և շահառուի հետ աշխատանքի մեթոդների ընտրության համար:
- Աշխատանքային գործունեության ընթացքում ցուցաբերում է մասնագիտական պատրաստվածության բարձր մակարդակ:
- Կարողանում է խթանել սովորողների դրական անձնային որակների և միջանձնային հատկանիշների զարգացումը՝ ճանաչողական ակտիվություն, ինքնուրույնություն, ինքնավերահսկում, ինքնակրթություն, նախաձեռնողականություն, ստեղծագործական կարողություններ, համագործակցում, ուրիշներին օգնելու պատրաստակամություն և այլն:



- Դրսևորում է անաչառ ու բարյացակամ վերաբերմունք բոլոր սովորողների նկատմամբ, պատրաստակամություն է ցուցաբերում խնդիրների լուծման համար իրականացվող գործողություններին մասնակից լինելուն:
- Կիրառում է ուսուցման փորձահեն և արդյունավետ ձևեր ու մեթոդներ:
- Հաշվի առնելով սովորողների հոգեֆիզիկական զարգացման առանձնահատկությունները՝ կարողանում է ստեղծել միջավայրային հարմարեցումներ ԿԱՊԿ ունեցող երեխաների կրթական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար:
- Բացառում է անձնական, ֆինանսական, շահադիտական հարաբերությունները, որոնք խոչընդոտում են աշխատանքային պարտականությունների բարեխիղճ կատարմանը:

3. Պատասխանատվություն (Օվչարովա, 2003, Савинков, 2020, Дубровина, 2022, Фертикова, 2017)

- Մասնագետը գիտակցում է իր մասնագիտական և անձնական պատասխանատվությունը շահառուի և հասարակության առջև իր մասնագիտական գործունեության համար:
- Հետազոտություններ անցկացնելով՝ մասնագետը հոգ է տանում նախ և առաջ մարդկանց բարեկեցության մասին և աշխատանքի արդյունքները չի օգտագործում ի վնաս նրանց:
- Մանկավարժահոգեբանական աջակցության, ինչպես նաև այլ գործառույթներ իրականացնելու նպատակով պլանավորված ժամերին մասնագետը ներկայանում է ժամանակին (նույնիսկ՝ վաղ): Ավելի շուտ հեռանալու անհրաժեշտության դեպքում նախօրոք տեղեկացնում է ղեկավարին:



- Մասնագետը հասարակական ելույթներում իրավունք չունի օգտվել չստուգված տեղեկատվությունից, մարդկանց զցել մոլորության մեջ:
- Սուր սթրեսային վիճակում գտնվող սովորողներին, ինչպես նաև մանկավարժահոգեբանական աջակցություն ստանալու պահին հուզական և վարքային խնդիրներ ունեցող անձանց մասնագիտական օգնություն ցուցաբերելու որոշում կայացնելիս հոգեբանը պատասխանատու է իր ընտրած և կիրառած միջամտության հետևանքների համար:
- Մասնագետը, մասնավորապես հոգեբանը, պատասխանատու է տվյալ էթիկական վարքականոնին հետևելու համար անկախ նրանից՝ մանկավարժահոգեբանական աշխատանքն ինքն է անցկացնում, թե այն իրականացվում է այլ մասնագետի կողմից՝ իր ղեկավարության ներքո:

4. Էթիկական և իրավաբանական իրավասություն (Овчарова, 2003, Савинков, 2020, Дубровина, 2022)

- Մասնագետը հետազոտություններ է պլանավորում և անցկացնում համաձայն գործող օրենսդրության և մասնագիտական գործունեություն իրականացնելու պահանջների:
- Սույն վարվելակարգի կանոնների և կրթական հաստատության վարչարարական կազմի կողմից մասնագետին վերագրվող պարտականությունների միջև հակասությունների առկայության դեպքում մասնագետն առաջնորդվում է տվյալ վարվելակարգի կանոններով:
- Սույն վարվելակարգի կանոնները տարածվում են միայն մասնագետի՝ շահառուի և կրթական գործընթացի այլ սուբյեկտների միջև մասնագիտական հարաբերությունների վրա:

- Մասնագետն իր պաշտոնական պարտականությունները կարող է կատարել միայն օրենքին համապատասխան: Ընդ որում, նրա վրա ամբողջությամբ տարածվում են մասնագիտական էթիկական կանոնները:

5. Շահառուի բարեկեցություն (Овчарова, 2003, Савинков, 2020, Дубровина, 2022)

- Իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս մասնագետը հիմնվում է շահառուների բարեկեցության ապահովման վրա և հաշվի է առնում կրթական գործընթացի բոլոր սուբյեկտների իրավունքները: Այն դեպքերում, երբ մասնագետի պարտականությունները հակասության մեջ են մտնում էթիկական նորմերի հետ, մասնագետն այդ կոնֆլիկտները լուծում է՝ առաջնորդվելով «մի՛ վնասիր» սկզբունքով:
- Աշխատանքային գործունեության ընթացքում մասնագետը բացառում է ցանկացած խտրականություն (անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակում) ըստ սոցիալական կարգավիճակի, տարիքի, սեռի, ազգության, կրոնի, սոցիալական, ընտանեկան կարգավիճակի, առողջական վիճակի, ինտելեկտի և այլ տարբերությունների:
- Մասնագիտական գործունեության մեջ գերակա են հայտարարվում երեխայի՝ որպես կրթական գործընթացի հիմնական սուբյեկտի, իրավունքները և շահերը:
- Մասնագետը շահառուի հանդեպ դրսևորում է բարյացակամ, ոչ կանխակալ և գնահատականներից զերծ վերաբերմունք:



- Մասնագետը դրսևորում է պատշաճ և հոգատար վերաբերմունք սովորողների, նրանց ծնողների (օրինական ներկայացուցիչների) և գործընկերների հանդեպ:
- Բացառում է կոպիտ, արհամարհական, կանխակալ վերաբերմունքն ու արտահայտությունները, անօրինաչափ և անհիմն մեղադրանքները, սպառնալիքները, չի հասցնում անձնական վիրավորանքներ, դասընկերների ներկայությամբ չի մատնանշում սովորողի անձնային խնդրահարույց կողմերը:
- Սովորողների ձեռքբերումները գնահատելիս պահպանում է անաչառությունը, անկողմնակալությունը:
- Պահպանում է հաղորդակցման կանոնները:

6. Մասնագիտական համագործակցություն

- Մասնագետի աշխատանքը հիմնվում է այլ մասնագետների և նրանց աշխատանքի մեթոդների հանդեպ հարգանք դրսևորելու իրավունքի և պարտավորության վրա՝ անկախ սեփական տեսական և մեթոդական նախապատվություններից:
- Մասնագետը զերծ է մնում շահառուների ներկայությամբ գործընկերների աշխատանքի միջոցների և մեթոդների մասին հանրային գնահատականներ տալուց և նկատողություններ անելուց:
- Եթե էթիկական խախտումը հնարավոր չէ վերացնել ոչ ֆորմալ ճանապարհով, ապա մասնագետը կարող է խնդիրը դնել մեթոդական միավորման քննարկմանը (Овчарова, 2003, Савинков, 2020, Дубровина, 2022)



7. Վերաբերմունքի դրսևորում և աշխատանքների պատշաճ կազմակերպում (Овчарова, 2003, Савинков, 2020, Дубровина, 2022)

- Օգտագործում է համապատասխան լեզու և հետևում համապատասխան վարքականոններին դպրոցում, հատկապես՝ սովորողների ներկայությամբ: Սա ներառում է այլ մասնագետներին պարոն/տիկին անվանելը: Սովորողներին չի կարելի քննարկել, եթե դա անհրաժեշտ չէ տվյալ իրավիճակի համար:
- Կարևոր է դպրոցական խոսակցությունները հեռու պահել հանրային ֆորումներից: Դպրոցի մասին մեկնաբանությունները պետք է լինեն դրական և բավականին ընդհանուր:
- Կարևոր է դպրոցական բոլոր, օրինակ՝ մանկավարժահոգեբանական խմբի, փոքր թիմերի հետ հանդիպումների ընթացքում հարգալից վարքի դրսևորումը: Ինչպիսին էլ լինի մասնագետի դերը հանդիպմանը, նա չպետք է ստուգի բջջային հեռախոսը կամ համակարգիչը, եթե չկա որևէ արտակարգ իրավիճակ: Եթե անհրաժեշտ է որևէ մեկի հետ կապ հաստատել ավելի երկար պարապմունքի ընթացքում, անհրաժեշտ է դուրս գալ սենյակից կամ սպասել ընդմիջմանը:
- Մասնագետն օգտագործում է աշխատաժամանակը արդյունավետ և պատշաճ կերպով: Վերջինս ներառում է նաև տեխնոլոգիայի օգտագործումը: Անձնական էլեկտրոնային փոստի տեղեկատվությունը աշխատանքի ժամին ստուգելը և ընկերների հետ հաղորդագրություններ փոխանակելու վրա երկար ժամանակ վատնելը պատշաճ աշխատանքային վարքագիծ չէ:



- Ժամանակն արդյունավետ տնօրինելու նպատակով մասնագետը կարող է հանձնարարել մեկ այլ համապատասխան մասնագետի՝ սրբագրել բոլոր մասնագիտական փաստաթղթերը (օրինակ՝ ԱՈԻՊ-ները, առաջարկները, դիտարկումները և այլն):
- Հարգալից վերաբերմունք է դրսևորում ուսումնական հաստատության բոլոր աշխատակիցների նկատմամբ, կարևորում նրանց աշխատանքը:
- Ցանկացած հանգամանքում հարգանք է դրսևորում սովորողների ծնողների նկատմամբ: Պատրաստ է լսել նրանց կարծիքը և ապրումակցել:
- Մասնագետն ընտրում է ծնողների համար ընդունելի հաղորդակցման միջոց: Կան ծնողներ, ովքեր չեն ցանկանում հեռախոսով կամ էլեկտրոնային փոստով տեղեկանալ իրենց երեխայի հետ կապված որևէ կարևոր խնդրի մասին, հատկապես, եթե այն բացասական է: Ցանկալի չէ նաև ծնողական ժողովին այդ մասին բարձրաձայնելը: Կարելի է նման դեպքերում հանդիպում կազմակերպել առանձին խոսելու և հարցը քննարկելու համար: Ծնողներն այդ դեպքում ավելի ընկալունակ են լինում և կարողանում են ավելի հստակ հաղորդակցվել, քան հեռախոսով կամ սոցցանցերի միջոցով: Մասնագետը պետք է իմանա ծնողի նախասիրության մասին և կապ հաստատի նրա հետ 24 ժամվա ընթացքում:
- Պահպանում է համագործակցային հարաբերություններ հստակ սահմանված կանոններով: Սովորողները մասնագետի ընկերները կամ սեփական երեխաները չեն: Սովորաբար նրանք ի դեմս մասնագետի՝ տեսնում են դրական հատկանիշներով օժտված անձի, և պետք է նրանց հետ հաղորդակցության ճիշտ հարթություն ընտրել:



- Հարգանքով է վերաբերվում սովորողներին: Տրամադրում է անհրաժեշտ ժամանակ նրանցից յուրաքանչյուրին լսելու, կարծիքներին ծանոթանալու համար: Երբեմն սովորողը կարող է ժամանակ խնդրել մեծահասակի հետ խոսելու համար պարզապես իրեն ունկնդրելու և ոչ՝ կարծիք հայտնելու կամ ինչ-որ հարցում օգնելու ակնկալիքով: Եթե հնարավոր չէ պարապմունքի ընթացքում ժամանակ հատկացնել, պետք է առաջարկել սովորողին գրուցել ճաշի, ընդմիջման ժամանակ: Նույնիսկ մի քանի րոպեն կարող է վճռորոշ լինել երեխայի համար (Епифанцева, Киселенко, Могилева, Соловьева, Титкова, 2005):



ՀՈԳԵԲԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Առաջին դպրոցական հոգեբանական ծառայությունները աշխարհի տարբեր երկրներում իրենց գործունեությունն սկսել են դեռևս 1800-ական թվականներից (Կարապետյան, 2010): Եթե սկզբնական շրջանում այն կենտրոնացած էր ինքնակրթության խնդիրների ուսումնասիրության վրա, ապա ավելի ուշ, լայնորեն կիրառելով թեստավորման մեթոդը, իրականացնում էր երեխաների ընդունակությունների բացահայտում, հատուկ ծրագրերով ուսուցման համար երեխաների ընտրություն, իսկ հետագայում՝ հոգեբանամանկավարժական օգնության խմբերի միջոցով՝ յուրաքանչյուր երեխայի հոգեբանական աջակցություն: Համընդհանուր ներառման պայմաններում հոգեբանական աջակցության կարևորությունն առավել, քան արդի է, և ներկայում դպրոցական հոգեբանական ծառայությունը դասվում է կրթական համակարգի հետ կապված ծառայությունների շարքին՝ պայմաններ ապահովելով երեխաների հոգեկան և անձնային զարգացման, հոգեբանական առողջության պահպանման համար (Савинков, 2020):

Հոգեբանական գրականության մեջ հոգեկան առողջության մեկ ընդհանուր սահմանում գոյություն չունի: Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունն (այսուհետ՝ ԱՀԿ) այն սահմանում է որպես անձի հոգեբանական բարեկեցության վիճակ, որում նա կարողանում է իրացնել իր անձնային ներուժը, հաղթահարել առօրյա սթրեսները, արդյունավետորեն աշխատել, ինչպես նաև ներդրում ունենալ հասարակական կյանքում: Հոգեկան հիվանդությունների բացակայությունը դեռևս հոգեկան առողջության երաշխիք չէ:



ԱՀԿ-ն առանձնացնում է հոգեկան առողջության հետևյալ չափանիշները.

- ֆիզիկական և հոգեկան ես-ի անընդհատության և ամբողջականության գիտակցում,
- նմանատիպ իրադրություններում ապրումների անընդհատության և նույնականության գիտակցում,
- քննադատական վերաբերմունք սեփական անձի և գործունեության արդյունքների նկատմամբ,
- հոգեկան ռեակցիաների համապատասխանություն միջավայրի ներգործություններին, պայմաններին և իրադրություններին,
- սոցիալական նորմերին, կանոններին և օրենքներին համապատասխան սեփական վարքագծի ինքնակառավարման կարողություն,
- սեփական կենսագործունեությունը պլանավորելու և այդ պլաններն իրականացնելու կարողություն,
- կենսական իրադրությունների փոփոխության դեպքում վարքագիծը փոխելու կարողություն:

Հանրակրթական դպրոցի հոգեբանի աշխատանքի հիմնական ուղղություններն ու բովանդակությունը

Հոգեբանի կողմից հանրակրթական դպրոցում իրականացվող աշխատանքներն արտացոլվում են վերջինիս կողմից կազմվող տարեկան աշխատանքային ծրագրում: Եթե դպրոցն ունի հոգեբանական ծառայություն, ապա տարեկան աշխատանքային ծրագիրը կազմում է ծառայությունը, և յուրաքանչյուր հոգեբան

ստանձնում է այդ ծրագրի իրականացման՝ իր համար նախատեսված մասը (Ալեքսանյան, 2011): Եթե դպրոցն ունի մեկ հոգեբան, ապա տարեկան աշխատանքային ծրագիրը կազմվում է ըստ՝

- դպրոցի տեսակի,
- տնօրենության և համայնքի առաջ քաշած ռազմավարական նպատակների,
- սեփական մասնագիտական դիտարկումների և կատարած ախտորոշիչ աշխատանքների արդյունքների:

Եթե դպրոցը չունի հոգեբանական ծառայություն իրականացնող մասնագետ, ապա հոգեբանական աջակցությունը տրամադրվում է ՏՄԱԿ-ի հոգեբանի կողմից:

Սովորողների հետ հոգեբանի աշխատանքի հերթական քայլերը.

1. Գնահատում

- Փաստաթղթերի ուսումնասիրում,
- Սոցիալական պատմության ուսումնասիրում,
- Տնայց (անհրաժեշտության դեպքում),
- Հոգեբանական ախտորոշում (խորքային),
- Եզրակացություն:

2. Կարիքների որոշում, խնդիրների հստակեցում

- Կարիքների հստակ ձևակերպում,
- Անհրաժեշտ միջոցների հստակեցում,
- Անհրաժեշտ մասնագետների որոշում:

3. Աշխատանքի պլանավորում, քայլերի հստակեցում

- Ե՞րբ սկսել աշխատանքը,
- Ի՞նչ ձևով (անհատական, խմբային),



- Ի՞նչ մեթոդով աշխատել,
- Ի՞նչ հաճախականությամբ (շաբաթական քանի՞ անգամ),
- Ո՞ւմ հետ աշխատել (ծնող, մանկավարժ),
- Ե՞րբ ավարտել (նախնական, մոտավոր ժամկետ):

4. Աշխատանքի իրականացում

5. Ընթացիկ գնահատում, մոնիթորինգ, քննարկում

- Որոշվում են մոնիթորինգի մասնակիցները,
- Մոնիթորինգի անցկացման ժամկետները,
- Անավարտ աշխատանքի ամփոփում:

6. Աշխատանքների վերջնական գնահատում, եզրակացություն, քննարկում

- Ամփոփիչ մոնիթորինգ,
- Աշխատանքի արդյունքների ամփոփիչ եզրակացություն:

Հանրակրթական դպրոցի հոգեբանը ուսումնական տարվա ընթացքում կատարում է մի շարք աշխատանքներ, որոնք կարող են դասակարգվել.

Ըստ գործունեության նպատակի՝

Հոգեդիագնոստիկ աշխատանքներ

Իրականացվում է հատուկ մեթոդների օգնությամբ, ուղղված է կոնկրետ սովորողի կամ խմբի հետազոտմանը և հանդիսանում է անձի անհատական առանձնահատկությունների ուսումնասիրման միջոց: Սովորողների հետ իրականացվող հոգեդիագնոստիկ աշխատանքները ենթադրում են սովորողի անհատական



առանձնահատկությունների ուսումնասիրում հետևյալ նպատակներով.

- ուսումնական գործընթացում կամ զարգացման ընթացքում ծագած խնդիրների պատճառների բացահայտում,
- անձի ուժեղ կողմերի, ներուժի բացահայտում, որը հնարավոր կլինի օգտագործել սովորողի խնդրի հաղթահարման գործընթացում,
- սովորողի ճանաչողական և մասնագիտական հետաքրքրությունների բացահայտում՝ ճանաչողական գործունեության անհատական ոճի բացահայտման նպատակով:

Կարող է իրականացվել ինչպես ընթացիկ աշխատանքների շրջանակներում, այնպես էլ սովորողների, մանկավարժների, ծնողների և դպրոցի վարչակազմի խնդրանքով կամ պահանջով:

Հոգեդիագնոստիկ աշխատանքների շրջանակում իրականացվող հետազոտությունը կազմված է հետևյալ փուլերից.

1. Ծնողների հետ առաջնային զրույցի, երեխայի հետ աշխատող մանկավարժների և այլ մասնագետների հետ զրույցի արդյունքում ձեռք բերված տեղեկույթի վերլուծում:
2. Անամնեզի հավաքագրում, որը ներառում է տվյալներ՝
 - երեխայի ծննդյան տարեթվի, ամսաթվի, ընտանիքի կազմի, սոցիալ-հուզական մթնոլորտի, ընտանիքի անդամների մոտ հոգեկան առողջության հետ կապված խնդիրների կամ ռիսկի գործոնների առկայության վերաբերյալ,
 - երեխայի ներարգանդային զարգացման, հղիության ընթացքում երեխայի ընդհանուր վիճակի, հղիության ընթացքի, ռիսկային գործոնների վերաբերյալ (ինֆեկցիաներ, դեղորայք, բժշկական միջամտություն և այլն),
 - նորածնության, վաղ մանկության և նախադպրոցական տարիների զարգացման ընթացքի մասին:



3. Նախնական հանդիպում-գրույց երեխայի հետ՝ կոնտակտի հաստատման և հոգեդիագնոստիկ աշխատանքներին նախապատրաստելու նպատակով:
4. Բուն հետազոտական ընթացք, որը ենթադրում է համապատասխան թեստերի, նկարների, առաջադրանքների և գործունեության այլ արդյունքների վերլուծություն՝ հետազոտության եզրակացությունը ձևավորելու նպատակով:
5. Ամփոփիչ գրույց ծնողների, երեխայի հետ, կատարված հետազոտության արդյունքների հիման վրա եզրակացության կազմում:

Հոգեդիագնոստիկ հետազոտությանը ներկայացվող պահանջները

- Հետազոտությունը կազմակերպել և իրականացնել հանգիստ, անկաշկանդ մթնոլորտում, հնարավորինս բացառել շեղող գործոնները:
- Հետազոտման նպատակով ներկայացվող առաջադրանքների կատարման ընթացքում զերծ մնալ երեխային գովելուց կամ քննադատելուց, սակայն օգտագործել հավանություն արտահայտող ժեստեր և դիմախաղ՝ համագործակցելու և առաջադրանքը կատարելու՝ երեխայի ջանքերը խրախուսելու համար:
- Ուշադրություն դարձնել երեխայի հուզական և ֆիզիկական վիճակին: Հետազոտական գործընթացում երեխան կարող է սթրես կամ հուզական լարվածություն ապրել, և այդ արձագանքները կարող են ի հայտ գալ հանկարծակի ու տարբեր հաճախականությամբ: Նման դեպքերում անհրաժեշտ է փոխել գործունեության տեսակը, երեխային լիցքաթափվելու,

հանգստանալու հնարավորություն տալ՝ հետո անպայման վերադառնալով առաջադրանքին:

- Հետազոտությունն անհրաժեշտ է կազմակերպել այնպես, որ հանդիպման սկզբում երեխային առաջարկվող խաղերն ու առաջադրանքները թուլացնեն նրա լարվածությունն ու հետաքրքրությունն առաջացնեն: Կարևոր է, որ այդ առաջադրանքներն ու խաղերը լինեն պարզ, վառ գունավորամբ, երեխայի հնարավորություններին համարժեք: Անկաշկանդ ու հուզական լարվածությունից զերծ իրավիճակում առաջադրանքներն աստիճանաբար կարելի է բարդացնել: Ճանաչողական ոլորտի հետազոտմանն ուղղված առաջադրանքներն անհրաժեշտ է ներկայացնել երեխային միայն այն ժամանակ, երբ հուզական լարվածությունը հաղթահարված է:
- Հետազոտությունը ցանկալի է կազմակերպել և իրականացնել առանց երեխայի ծնողների կամ խնամակալների, ուսուցիչների կամ այլ մասնագետների ներկայության: Բոլոր այն դեպքերում, երբ այս կամ այն պատճառով հնարավոր չէ ապահովել դա, հոգեբանը նախապես զգուշացնում է ներկաներին, որ վերջիններս բացարձակ լուռ պետք է լինեն և ոչ մի դեպքում չմիջամտեն հետազոտության ընթացքին:
- Հետազոտության նպատակով կազմակերպվող մեկ հանդիպման տևողությունը կախված է հետազոտվողի տարիքից: Կրտսեր դպրոցական և դեռահասության տարիքում այն 45 րոպե է (Савинков, 2020):
- Հետազոտության արդյունքում ձևավորված եզրակացությունը ծնողներին ներկայացվում է նրանց հասանելի լեզվով՝ խուսափելով մասնագիտական եզրույթներից կամ երկիմաստ



արտահայտություններից: Քննարկվում են նաև ծնողներին հուզող հարցերը, տրվում են անհրաժեշտ ցուցումներ:

Իրականացված հետազոտության արդյունքներն ամփոփվում են հոգեբանական եզրակացությամբ, որն արտացոլում է ինչպես հետազոտվողի անհատական առանձնահատկությունները, այնպես էլ ներկա վիճակը, ծագած խնդրի կամ խնդիրների առաջացման հնարավոր պատճառները: Հոգեբանական ախտորոշման մեջ ներառվում են նաև հոգեբանի ցուցումներն ու առաջարկություններն առ այն, թե ի՞նչը կարող է նպաստել սովորողի հոգեբանական վիճակի բարելավմանը:

Մանկավարժների, վարչակազմի և ծնողների հետ ևս կարող են իրականացվել հոգեդիագնոստիկ աշխատանքներ, որոնց մասին ավելի մանրամասն կխոսենք պլանավորվող և չպլանավորվող աշխատանքների շրջանակներում:

Կանխարգելող աշխատանքներն իրականացվում են հոգեբանական մասնագիտական աջակցության և ծառայությունների միջոցով՝ տարբեր հոգեբանական խնդիրների կանխարգելման նպատակով: Ուսումնական հաստատության հոգեբանի կողմից իրականացվող կանխարգելիչ աշխատանքների շրջանակներում կարևոր է այնպիսի ծրագրերի մշակումն ու իրականացումը, որոնք միտված են տարիքային տարբեր փուլերում գտնվող երեխաների համար ակտուալ խնդիրների լուծմանը:

Առանձնացվում է հոգեբանական կանխարգելիչ աշխատանքների մի քանի մակարդակ (Хухлаева, 2019, Хухлаева, 2022).

1. **Առաջնային մակարդակը ներառում է** հոգեբանի աշխատանքը նաև այն երեխաների հետ, ովքեր չունեն հոգեկան զարգացման խնդիրներ, բայց բխվում են որոշ հոգեբանական խնդիրների

(դպրոցական հարմարման, սթրեսի հաղթահարման հետ կապված դժվարություններ): Առաջնային մակարդակը ենթադրում է տվյալ հաստատության բոլոր սովորողների առաջնային ախտորոշում՝ անկախ նրանց մոտ այս կամ այն խնդրի առկայությունից: Բնականաբար, կանխարգելիչ աշխատանքների այս մակարդակը պահանջում է ժամանակային և մասնագիտական ռեսուրսներ և ենթադրում է ոչ թե մեկ, այլ մի քանի հոգեբանների համագործակցված աշխատանք:

2. **Երկրորդային մակարդակը ենթադրում է «ռիսկի խմբի» սովորողների հետ իրականացվող կանխարգելիչ աշխատանքներ:** Այս դեպքում հոգեբանն իրականացնում է հնարավոր տարաբնույթ խնդիրների վաղ հայտնաբերում՝ հետագա բարդությունների և դժվարությունների կանխարգելման նպատակով:
3. **Երրորդային մակարդակը ենթադրում է հոգեկան զարգացման տարբեր ոլորտներում այս կամ այն խանգարումն ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքներ՝ հետագա բարդությունները կանխելու նպատակով:** Հոգեբանը երեխաներին այս աշխատանքների մեջ կարող է ընդգրկել ինչպես իր նախաձեռնությամբ, այնպես էլ մանկավարժների և/կամ ծնողների խնդրանքով:

Զարգացնող աշխատանքներ

Իրականացվում են սոցիալ-հոգեբանական պայմանների ստեղծման միջոցով՝ հոգեբանորեն բարենպաստ զարգացում ունեցող անձի հոգեբանական լիարժեք զարգացումն ապահովելու նպատակով: Հոգեբանը յուրաքանչյուր սովորողի համար մշակում է անհատական աշխատանքի պլան, որտեղ ներառված են համապատասխան անհատական ցուցումները՝



ուղղված տվյալ երեխայի ինքնադաստիարակման, ինքնակատարելագործման, ինքնագարգացման կարողությունների ընդարձակմանը: Բոլոր այն դեպքերում, երբ երեխան սովորում է անհատական ուսուցման պլանով, հոգեբանի կողմից իրականացվող աշխատանքի նպատակը, խնդիրները, քայլերն ու ցուցումներն արտացոլվում են նաև այդ փաստաթղթում:

Շտկող աշխատանքներ

Իրականացվում են հոգեբանորեն անբարենպաստ զարգացում ունեցող սովորողների հետ՝ ուսուցման, հոգեբանական զարգացման, հուզական ոլորտի կամ վարքի խնդիրների լուծման նպատակով: Շտկողական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես անհատական, այնպես էլ խմբային ձևով: Աշխատանքների խնդիրներն ու նպատակները սահմանվում են՝ ելնելով նրանից, թե որ ոլորտում կամ ոլորտներում են ախտորոշվել երեխայի անբարենպաստ զարգացման հիմքում ընկած խնդիրները (հուզականային, ճանաչողական, վարքային և այլն):

Խորհրդատվական աշխատանքներ

Իրականացվում են որպես անհատական աշխատանքներ՝ շահառուի խնդրանքով և կամավոր համաձայնությամբ: Դպրոցի հոգեբանի կողմից հոգեբանական խորհրդատվություն կարող է տրամադրվել ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցներին: Խորհրդատվական աշխատանքները կարող են զուգակցվել թեմատիկ դասընթացների, խմբային քննարկումների հետ՝ ըստ անհրաժեշտության: Բոլոր այն դեպքերում, երբ հոգեդիագնոստիկ աշխատանքների արդյունքում հոգեբանը բացահայտել է զուգակցված խնդիրներ կամ այնպիսի խնդիր, որի դեպքում անհրաժեշտ է որևէ այլ, նեղ մասնագետի աջակցություն, ապա նա

պետք է կատարի տվյալ մասնագետի խորհրդատվության համապատասխան ուղղորդում:

Ուսուցանող, իրագեկող աշխատանքներ

Իրականացվում են տարաբնույթ ինտերակտիվ սեմինարների ու դասախոսությունների միջոցով կրթական գործընթացի բոլոր մասնակիցների, այդ թվում՝ դպրոցի վարչակազմի համար: Այս աշխատանքների հիմնական նպատակը երեխայի կյանքում ներգրավված անձանց հոգեբանական մշակույթի և գրագիտության բարձրացումն է, հոգեբանական հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը: Դպրոցի հոգեբանը իրականացնում է նաև ԿԱՊԿ գնահատման և ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրման կարգերի և ընթացակարգերի վերաբերյալ իրագեկման աշխատանքներ ծնողների և սովորողների շրջանում:

Փորձագիտական աշխատանքներ

Իրականացվում են որևէ խնդիր մասնագիտական տեսանկյունից ուսումնասիրելու և վերջնական մասնագիտական եզրակացություն ներկայացնելու նպատակով (փորձագիտական կարծիք տարբեր մանկավարժական նախաձեռնությունների, օժանդակ ձեռնարկների կամ նյութերի, հոգեբանամանկավարժական խնդրահարույց իրավիճակների՝ հստակ պատասխան պահանջող հարցերի վերաբերյալ):

Սոցիալ-վերահսկողական աշխատանքներ

Իրականացվում են, երբ առկա խնդիրը պահանջում է այնպիսի մասնագիտական միջամտություն և աջակցություն, որոնց հոգեբանը չի տիրապետում, կամ անհրաժեշտություն է



առաջանում խնդիրը լուծել դպրոցի սահմաններից դուրս (Ալեքսանյան, 2011, Хухлаева, 2019 Дубровина, 2022): Սոցիալ-վերահսկողական աշխատանքների անհրաժեշտություն կարող է ծագել, երբ.

- Սովորողի հոգեբանական խնդիրները պահանջում են խորը և երկարատև հոգեբանական աջակցություն, հոգեթերապիա:
- Հոգեբանական աշխատանքի համար անհրաժեշտ ֆիզիկական պայմանները բավարար չեն:
- Սովորողն ունի այնպիսի մասնագետների աջակցության կարիք, որոնք դպրոցում չկան (նյարդաբան, հոգեբույժ, էրգոթերապիստ, ֆիզիոթերապիստ և այլք):
- Սովորողն օրինական արարք է կատարել, և նրան ուստիկանության համապատասխան բաժին տեղափոխելու, հարցաքննելու և/կամ հսկողության տակ պահելու անհրաժեշտություն կա (Ալեքսանյան, 2011):

Սոցիալ-վերահսկողական աշխատանքները կազմակերպվում և իրականացվում են հոգեբանի և սոցիալական մանկավարժի համագործակցության շրջանակներում հետևյալ փուլերով.

- խնդրի որոշում և սահմանում,
- կոմպետենտ /կարողունակ/ մասնագետի որոնում,
- մասնագետի և սովորողի միջև կապի հաստատման գործընթացի կազմակերպում,
- համապատասխան փաստաթղթերի պատրաստում,
- հոգեբանական աջակցության տրամադրում սովորողին համագործակցության ընթացքում,
- իրականացվող աշխատանքների վերահսկում:



Հոգեբանի կողմից ուսումնական հաստատությունում իրականացվող աշխատանքներն ըստ շահառուների

Աշխատանք սովորողների հետ

Դպրոցում աշխատող հոգեբանն իրականացնում է հոգեդիագնոստիկ աշխատանքներ, հետազոտում, այդ թվում նաև՝ առաջնային գնահատում իրականացնում սովորողի ուսուցչի կամ ծնողի (օրինական ներկայացուցչի) խնդրանքով կամ պահանջով: Հոգեբանական հետազոտման արդյունքների հիման վրա մշակվում են հանձնարարականներ ուսուցիչների և ծնողների համար, պլանավորվում հետագա խորհրդատվական աշխատանքների և հոգեբանական աջակցության ուղղությունները: Անհրաժեշտության դեպքում հոգեբանը կապ է հաստատում երեխայի հետ աշխատող այլ մասնագետների հետ՝ վերջիններիս կողմից երեխային տրամադրվող հոգեբանամանկավարժական աջակցության բարելավման կամ առկա խնդիրների հաղթահարման միասնական ճանապարհի որոնման նպատակով: Կախված տվյալ սովորողի կարիքներից և հոգեբանական դիագնոստիկ աշխատանքների արդյունքներից՝ հոգեբանը տվյալ սովորողի կամ սովորողների հետ կարող է իրականացնել կանխարգելող, զարգացնող, շտկող, խորհրդատվական աշխատանքներ: Վերոնշյալ աշխատանքները կարող են իրականացվել ինչպես անհատական, այնպես էլ խմբային ձևով: Հոգեբանական աշխատանքների կազմակերպման ձևը սահմանվում է սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների անհատական պլանում՝ հիմնվելով երեխայի կարիքների և հոգեբանամանկավարժական գնահատման արդյունքների վրա:



Աշխատանք ուսուցիչների հետ

Կրթության հոգեբանի աշխատանքային գործունեության կարևորագույն ուղղություններից մեկը մանկավարժական թիմի ներսում համագործակցության արդյունավետության բարձրացումն է: Որպեսզի այդ աշխատանքն իրականում ծառայի իր նպատակին, կարևոր է, որ հոգեբանն ինքը ևս կարողանա ձևավորել արդյունավետ համագործակցային հարաբերություններ մանկավարժական անձնակազմի հետ: Հոգեբան-մանկավարժ արդյունավետ համագործակցության ձևավորումը հնարավորություն է տալիս՝

- կազմակերպել և իրականացնել սովորողի հոգեբանամանկավարժական գնահատում,
- արդյունավետորեն կիրառել այդ գնահատման արդյունքում ստացված տվյալների հիման վրա կատարած վերլուծությունները,
- մանկավարժական աշխատանքում կիրառել այն գիտականորեն հիմնավորված մոտեցումներն ու ռազմավարությունները, որոնք ներկայացվում են հոգեբանի կողմից կոնկրետ խնդիրների հաղթահարման նպատակով,
- մանկավարժներից ստանալ տեղեկություններ կոնկրետ սովորողների մոտիվացիայի, դասի ընթացքում նրանց վարքի, զարգացման առանձնահատկությունների և այլնի վերաբերյալ հոգեբանական աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով:

Կրթության հոգեբանի աշխատանքն ուսուցիչների հետ իրականացվում է հետևյալ ձևերով.



Անհատական և խմբային խորհրդատվություն

Խորհրդատվական աշխատանքներ իրականացնելիս կարևոր է, որ.

- հոգեբանի և մանկավարժի համագործակցության մեջ պահպանվի հավասարությունը,
- հոգեբանը և մանկավարժը համատեղ քննարկեն ծագած խնդիրը,
- հոգեբանը և մանկավարժը ստանձնեն պատասխանատվություն իրենց համատեղ որոշման համար,
- հոգեբանը և մանկավարժը նախապես որոշեն իրենց գործառության չափերը պարտականությունները քննարկվող հարցի վերաբերյալ:

Ե՛վ անհատական, և՛ խմբային խորհրդատվությունները կարող են իրականացվել ինչպես սովորողների ուսուցման, հոգեբանական զարգացման և նրանց հետ համագործակցության հետ կապված հարցերի, այնպես էլ մանկավարժական թիմում արդյունավետ համագործակցություն ձևավորելու կամ խնդրահարույց իրավիճակները հաղթահարելու ուղիների վերաբերյալ (Дубровина, 2022):

Խմբային խորհրդատվությունն իրականացվում է այն դեպքերում, երբ խնդրի լուծման մեջ ներգրավված են մի քանի մանկավարժներ: Նման դեպքերում կարևոր է նախապես այդ մանկավարժներին տրամադրել անհատական խորհրդատվություն, այնուհետև՝ աշխատանքը կազմակերպել խմբային տարբերակով: Խմբային խորհրդատվությունը կարող է որոշակի լարվածություն առաջացնել որոշ մանկավարժների մոտ, ուստի նպատակահարմար է նման հանդիպումների սկզբում ժամանակ հատկացնել նաև հուզական լարվածության լիցքաթափման և



խնդրի լուծման կառուցողական եղանակների նախանշման համար տարբեր խաղերի կամ վարժությունների միջոցով:

Կանխարգելող և իրազեկման աշխատանքներ

Այս աշխատանքները կարող են իրականացվել դասընթացների, խմբային քննարկումների, կլոր սեղանների, գիտաժողովների միջոցով: Աշխատանքների շրջանակներում մանկավարժներն ստանում են կրթական գործընթացի մյուս մասնակիցների հետ արդյունավետ համագործակցելու եղանակների, երեխաների հոգեկան զարգացման, տարիքային տարբեր փուլերի առանձնահատկությունների մասին տեղեկություններ: Այս աշխատանքների ընթացքում կարևոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե որքանով են մասնակից մանկավարժները հավասարաչափ ընդգրկված գործընթացում, մասնակցության և ակտիվության ինչպիսի մակարդակ են դրսևորում տարբեր խնդիրների քննարկման ժամանակ: Հոգեբանի կողմից մասնակից մանկավարժների վարքային արձագանքները հաշվի առնելը կարևոր է վերջիններիս հետ հետագա աշխատանքների պլանավորման համար (Кочиева, 2004; Хухлаева, 2022, Дубровина, 2022):

Հատկապես իրազեկող աշխատանքների ժամանակ կարևոր է, որ.

- ներկայացվող տեղեկությունները արդիական լինեն մանկավարժների համար,
- տեղեկությունները ներկայացվեն հնարավորինս պարզ, մատչելի, բայց ոչ պարզունակ լեզվով և ձևով,
- մանկավարժներին հիմնախնդիրը քննարկելու հնարավորություն տրվի,



- իրախուսվի մանկավարժների կողմից սեփական կարծիքի արտահայտումը,
- հնարավորություն տրվի մանկավարժներին հաջորդ հանդիպումների քննարկման թեմաների հետ կապված առաջարկություններ անել (Хухлаева, 2019):

Աշխատանք ծնողների հետ

Կրթության ոլորտում աշխատող հոգեբանի կողմից ծնողների հետ իրականացվող աշխատանքը ենթադրում է հոգեբանի և ծնողի /խնամակալի/ ընտանիքի անդամների հետ համատեղ աշխատանք և համագործակցություն, որտեղ հոգեբանի դերերը և աշխատանքի ձևերը կարող են տարբեր լինել՝ պայմանավորված յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկություններով: Այն ներառում է մի քանի ուղղություն (Подольская, 2022).

- երեխայի հետ իրականացվող հոգեբանամանկավարժական աշխատանքներում ծնողների ներգրավման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում,
- երեխաների արդի հիմնախնդիրների վերաբերյալ խորհրդատվական և իրազեկող աշխատանքների կազմակերպում,
- խորհրդատվության տրամադրում ծնող-երեխա փոխհարաբերություններին առնչվող հարցերի շուրջ (ինչպես ծնողների խնդրանքով, այնպես էլ իրականացվող հոգեբանական աշխատանքների համատեքստում),
- հոգեբանական աջակցության տրամադրում ծնողներին կամ խնամակալներին, ընտանիքի անդամներին:



Հոգեբանի կողմից ընտանիքի հետ իրականացվող աշխատանքն արդյունավետ կազմակերպելու համար կարևոր է հասկանալ, թե.

- ինչպես է ընտանիքն արձագանքում երեխայի մոտ այս կամ այն խնդրի, ախտանշանի դրսևորմանը,
- ինչ գնահատականներ է տալիս և ինչ խնդիրների է բախվում ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը այդ խնդրի կամ խնդիրների հետ առնչվելիս (Горбашова, 2014),
- ինչպես են անդրադառնում այդ խնդիրները երեխայի և ընտանիքի անդամների փոխհարաբերությունների և երեխայի նկատմամբ ունեցած վերաբերմունքի վրա:

Ինչպես երեխայի, այնպես էլ ծնողների հետ իրականացվող աշխատանքների արդյունավետության հիմքում ընկած է կոնտակտի ձևավորումն ու վստահելի մթնոլորտի ստեղծումը: Այս հանգամանքը կարևոր է հաշվի առնել հատկապես առաջին հանդիպումը կազմակերպելիս: Առաջին հանդիպման ընթացքում դրական մթնոլորտ ձևավորելու նպատակով ցանկալի է անդրադառնալ այն հարցերին, թե իրենց ընտանեկան փոխհարաբերություններում ինչ դրական կողմեր են առանձնացնում, ըստ իրենց՝ որո՞նք են երեխայի հետ իրենց հարաբերությունների, ընտանիքում առկա փոխհարաբերությունների դրական, ուժեղ կողմերը: Այս հանգամանքը թուլացնում է լարվածությունը և ձևավորում դրական տրամադրվածություն համագործակցության նկատմամբ:

Վերոնշյալ հարցերի քննարկումից հետո առաջին հանդիպման ընթացքում կարելի է անդրադառնալ այնպիսի հարցերի, ինչպիսիք են.



- Ե՞րբ և ի՞նչ իրավիճակում են ծագում խնդիրները (այն խնդիրները, որոնց հաղթահարման նպատակով ծավալվել է հոգեբան-ծնող համագործակցությունը),
- ինչպիսի՞ վերաբերմունք ունեն ծնողները կամ ընտանիքի առանձին անդամներ տվյալ խնդրի նկատմամբ,
- ի՞նչ ակնկալիքներ ունեն ծնողները երեխաներից,
- ի՞նչ առանձնահատկություններ ունի երեխայի հաղորդակցումը ծնողների կամ ընտանիքի տարբեր անդամների հետ (այս հարցի քննարկումը հատկապես կարևոր է ամուսնալուծված ընտանիքի հետ աշխատանքի դեպքում):

Անկախ ծնող-հոգեբան համագործակցության նպատակից և ձևերից, ուսումնական հաստատության հոգեբանն առաջին հերթին ներկայացնում է երեխայի շահերը և նպատակ է հետապնդում արդյունավետ համագործակցություն ծավալել՝ առավելագույնս նպաստելով երեխայի առաջնահերթ շահի պաշտպանմանը (Поздняякова, 2016):

Աշխատանք վարչակազմի հետ

Դպրոցի վարչակազմի հետ հոգեբանի աշխատանքն իրականացվում է տարբեր ուղղություններով և ձևերով, սակայն դրանց նպատակը մեկն է՝ բարելավել կրթական գործընթացը, նպաստել սովորողների ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետ միջավայրի ձևավորմանը:

Վարչակազմի հետ հոգեբանի համագործակցությունը կարևոր նշանակություն ունի նաև դպրոցի ներսում բարենպաստ հոգեբանական մթնոլորտի ձևավորման, նոր մասնագետների ընտրության, խնդրահարույց իրավիճակների կանխարգելման և հաղթահարման հարցերում:

Դպրոցի տնօրենի և, մասնավորապես, ուսումնական գծով տեղակալի հետ համագործակցության շրջանակներում հոգեբանը կարող է մասնակցություն ունենալ դաստիարակչական տարբեր միջոցառումների (օրինակ՝ տարբեր երեխաների վարքի կարգավորման նպատակով որոշակի կանոնների սահմանման և կիրառման անհրաժեշտություն ու դրանց բովանդակության քննարկում և այլն), տարբեր ծրագրերի ու դրանց միջանկյալ գնահատման, անհրաժեշտության դեպքում փոփոխությունների ներմուծման աշխատանքներին:

Դպրոցի տնօրենության կողմից հոգեբանի դերի մասին հստակ պատկերացումների առկայության դեպքում հոգեբանը կարող է մասնակցություն ունենալ նաև տարբեր տարիքի երեխաների համար առավել արդյունավետ դասընթացի կազմման գործընթացում (Обчарова, 2003):

Հոգեբանի կողմից ուսումնական հաստատությունում իրականացվող աշխատանքներն ըստ հոգեբանի դերի

- *Որպես խորհրդատու*

Հանդես գալով այս դերում՝ հոգեբանն իրականացնում է խորհրդատվական, տեղեկատվական և լուսավորչական աշխատանքներ սովորողների, նրանց ընտանիքների, մանկավարժների և դպրոցի վարչակազմի համար: Այսպես, օրինակ, երեխայի հետ իրականացվող տարբեր նպատակների վրա հիմնված (գարգացնող, կանխարգելիչ, շտկող և այլն) հոգեբանական ցանկացած աշխատանքի շրջանակներում հոգեբանը ստանձնում է նաև խորհրդատուի դեր:

Ուսուցիչների հետ իրականացվող աշխատանքների շրջանակներում այս դերը, ինչպես արդեն նշել ենք, դրսևորվում է այնպիսի գործողություններում, ինչպիսիք են սովորողների



ուսուցման, հոգեբանական զարգացման և նրանց հետ համագործակցության վերաբերյալ հոգեբանական խորհրդատվության տրամադրումը, հոգեբանական-լուսավորչական տարբեր աշխատանքների իրականացումը:

Ծնողներին երեխաների հոգեդիագնոստիկայի արդյունքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման, դաստիարակության, հոգեբանական զարգացման խնդիրների լուծման ուղղությամբ նրանց տրամադրվող խորհրդատվության և տարբեր սեմինարների շրջանակներում հոգեբանական իրազեկող աշխատանքներ իրականացնելիս ևս հոգեբանը հանդես է գալիս որպես խորհրդատու:

Վարչակազմի հետ իրականացվող աշխատանքում հոգեբանի՝ խորհրդատուի դերը դրսևորվում է այնպիսի աշխատանքներում, ինչպիսիք են, օրինակ՝ բազմաբնույթ հոգեբանական հարցերի շուրջ խորհրդատվության տրամադրումը և մասնակցությունը սովորողների դաստիարակչական տարբեր խնդիրների վերաբերյալ քննարկումներին:

- *Որպես մեթոդիստ*

Այս դերում հոգեբանը հանդես է գալիս մանկավարժական անձնակազմի և վարչակազմի հետ համագործակցության շրջանակներում: Այսպես, օրինակ, այս դերում դպրոցի հոգեբանը թեմատիկ ելույթներով մասնակցում է մանկավարժական խորհուրդներին, խնդրահարույց իրավիճակներում իրականացնում է հոգեբանական աշխատանք կոնկրետ սովորողի հետ մանկավարժական աշխատանքի կազմակերպման դժվարությունների հաղթահարման նպատակով, մանկավարժական աշխատանքներում ներգրավված նոր մասնագետներին օգնում է հարմարվել միջավայրին:



- *Որպես պատասխանատու (կուրատոր)* հոգեբանը կարող է հանդես գալ ինչպես սովորողների և նրանց ընտանիքների, այնպես էլ դպրոցի մանկավարժական և վարչական անձնակազմի հետ իրականացվող աշխատանքներում: Այսպես, օրինակ, սովորողի հետ իրականացվող ցանկացած հոգեբանական աշխատանք կազմակերպվում և իրականացվում է դպրոցի հոգեբանի առաջնային պատասխանատվության ներքո:

Ինչ վերաբերում է ծնողների հետ իրականացվող աշխատանքին, ապա այստեղ հոգեբանը որպես պատասխանատու է հանդես գալիս ընտանիքի հետ համագործակցություն ձևավորելիս, երեխայի հետ իրականացվող հոգեբանամանկավարժական աշխատանքներում ընտանիքին ներգրավելիս և այդ աշխատանքները պլանավորելիս:

Մանկավարժական անձնակազմի հետ իրականացվող աշխատանքներում հոգեբանը որպես պատասխանատու հանդես է գալիս կոնկրետ սովորողի հետ կապված դեպքերի առնչությամբ մանկավարժական քննարկումներ կազմակերպելիս և կոնկրետ մանկավարժների՝ երեխայի հետ իրականացվող աշխատանքներում տևական հոգեբանական և մեթոդական աջակցություն տրամադրելիս: Վարչակազմի հետ իրականացվող աշխատանքների շրջանակներում կուրատորի իր դերը հոգեբանն իրացնում է հոգեբանական աշխատանքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրմամբ, համապատասխան պատկերացումների ձևավորմամբ:



**Հոգեբանի կողմից ուսումնական հաստատությունում
իրականացվող աշխատանքներն ըստ պլանավորման
Պլանավորվող աշխատանքներ**

Սրանք այն աշխատանքներն են, որոնք դպրոցի հոգեբանը պլանավորում է ուսումնական տարվա սկզբին և իրականացնում սահմանված ժամկետներում՝ ըստ նախապես պլանավորված ժամանակացույցի:

Պլանավորվող աշխատանքները կարող են կրել դիագնոստիկ բնույթ: Այս աշխատանքները կարող են իրականացվել սովորողների, նրանց ընտանիքների, մանկավարժների և վարչակազմի հետ:

Սովորողների հետ դիագնոստիկ աշխատանքները ենթադրում են (Ալեքսանյան, 2011, Дубровина, 2022).

- դասարանի սոցիալ-հոգեբանական հետազոտում (սոցիալ-հոգեբանական մթնոլորտի, միջանձնային հարաբերությունների, համապատասխան դրդապատճառների և այլն բացահայտման նպատակով),
- առաջին դասարանցիների դպրոցական պատրաստվածության հետազոտում,
- միջին և ավագ դպրոցի սովորողների մասնագիտական ուղղվածության հետազոտում:

Մանկավարժների հետ պլանավորվող աշխատանքները ենթադրում են մանկավարժների հոգեբանական վիճակի, մասնագիտական սթրեսների, հուզական սպառման հետազոտում: Համանման աշխատանքներ են ենթադրում նաև վարչակազմի հետ իրականացվող հոգեդիագնոստիկ աշխատանքները:

Հիմնականում պլանավորվող են նաև կանխարգելող աշխատանքները: Սովորողների հետ իրականացվող կանխարգելող

աշխատանքներն իրականացվում են հետևյալ հիմնական ուղղություններով.

- առաջին դասարանցիների դպրոցական հարմարմանն ուղղված աշխատանքներ,
- կրտսեր դպրոցից միջին դպրոց անցում կատարող սովորողների հարմարմանն ուղղված աշխատանքներ,
- ավագ դպրոց կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն տեղափոխվող սովորողների արժեհամակարգի ձևավորմանն ուղղված աշխատանքներ,
- դեռահասության տարիքին բնորոշ հոգեբանական դժվարությունների հետ կապված բարդությունների կանխարգելմանն ուղղված աշխատանքներ,
- դպրոցականների շրջանում վնասակար սովորությունների կանխարգելմանն ուղղված աշխատանքներ:

Մանկավարժների հետ կանխարգելող աշխատանքները կարող են կազմակերպվել հետևյալ ուղղություններով.

- սկսնակ մանկավարժների՝ նոր միջավայրին, աշխատանքին և անձնակազմին հարմարմանն ուղղված աշխատանքներ,
- մանկավարժների սթրեսների, հուզական սպառման, մասնագիտական այրման կանխարգելմանն ուղղված աշխատանքներ,
- մանկավարժական անձնակազմի համախմբմանն ու համագործակցային աշխատանքի մշակույթի ձևավորմանն ուղղված աշխատանքներ:

Կանխարգելող աշխատանքներ կարող են իրականացվել նաև ծնողների հետ հետևյալ ուղղություններով.

- տարիքային ճգնաժամերի շրջանակներում ծագող հոգեբանական խնդիրների կանխարգելմանն ուղղված աշխատանքներ,



- սովորողների ուսումնական մոտիվացիայի վրա անդրադարձող ընտանեկան խնդրահարույց մոտեցումների և վերաբերմունքի կանխարգելմանն ուղղված աշխատանքներ:

Կանխարգելող աշխատանքները կարող են իրականացվել նաև չպլանավորված այն դեպքում, երբ դպրոցում տեղի է ունենում որևէ խնդրահարույց միջադեպ՝ պայմանավորված այս կամ այն երևույթով: Նման դեպքերում դպրոցը որոշում է իրականացնել տվյալ երևույթի կամ հիմնախնդրի կանխարգելմանն ուղղված աշխատանքներ:

Չպլանավորվող աշխատանքներ

Վերը նշված հոգեբանական աշխատանքների ուղղություններից յուրաքանչյուրը, որոշակի հանգամանքներով պայմանավորված, կարող է իրականացվել՝ նախապես պլանավորված չլինելով: Այսպես, օրինակ, սովորողների հետ իրականացվող հոգեդիագնոստիկ աշխատանքները կարող են իրականացվել չպլանավորված ձևով, եթե.

- ծնողը, մանկավարժը կամ երեխան դիմել են հոգեբանին՝ ներկայացնելով իրենց անհանգստացնող որևէ խնդիր, որը պահանջում է հոգեբանական աջակցություն,
- սովորողի մոտ ծագել են որոշակի վարքային կամ ուսումնական դժվարություններ, որոնք հոգեբանամանկավարժական հետազոտում և գնահատում են պահանջում՝ հետագա աջակցության պլանավորման համար (Дубровина, 2022, Савииков, 2020):

Մանկավարժների հետ ևս կարող են տարբեր նպատակներով իրականացվել չպլանավորված ախտորոշիչ աշխատանքներ, եթե տնօրենը և մանկավարժը դիմել են նման խնդրանքով՝ ըստ անհրաժեշտության:



Ծնողների հետ չպլանավորված հոգեդիագնոստիկ աշխատանքներ իրականացվում են.

- երեխայի հետ հոգեբանական աշխատանքի անհրաժեշտությունից դրդված, ծնող-երեխա փոխհարաբերություններում խնդիրների բացահայտման նպատակով,
- սովորողի մոտ ծագած հոգեբանական և ուսումնական դժվարություններում ծնող-երեխա փոխհարաբերությունների դերի բացահայտման նպատակով:

Վարչակազմի հետ չպլանավորված կանխարգելիչ աշխատանքներն իրականացվում են, եթե անձնակազմը համալրվել է նոր աշխատակիցներով և անհրաժեշտ է կատարել վերջիններիս համապատասխան կարողությունների ու հմտությունների ախտորոշում: Դպրոցի հոգեբանը չպլանավորված կերպով կարող է իրականացնել նաև զարգացնող, իրազեկող, խորհրդատվական աշխատանքներ կրթական գործընթացի մասնակիցներից յուրաքանչյուրի հետ՝ ըստ սովյալ ժամանակահատվածում ծագած անհրաժեշտության:

Հոգեբանի կողմից ուսումնական հաստատությունում իրականացվող աշխատանքներն ըստ հոգեբանական աշխատանքի ձևի

Անհատական աշխատանքներ

- Դպրոցում հոգեբանական աշխատանքի ձևը որոշվում և սահմանվում է՝ հիմնվելով սովորողի հոգեբանական ախտորոշման արդյունքում դուրս բերված հիմնախնդիրների և դրանց հաղթահարման ուղղությունների վրա: Սովորողի հետ անհատական աշխատանքներն իրականացվում են հոգեբանական աշխատանքի էթիկական սկզբունքներին համապատասխան: Հաստատությունը, որտեղ աշխատում է



հոգեբանը, իր առանձնահատկություններն է փոխանցում նաև իրականացվող հոգեբանական աշխատանքին, և այդ հանգամանքը կարևոր է հաշվի առնել դպրոցի շրջանակներում հոգեբանական աջակցություն տրամադրելիս: Բոլոր այն դեպքերում, երբ երեխան հոգեբանական աջակցություն է ստանում որևէ մասնագիտացված կենտրոնում, այդ աջակցության տրամադրման մասին կրթական գործընթացի մասնակիցները կարող են չունենալ որևէ տեղեկություն կամ ունենալ նվազագույն տեղեկություն (օրինակ, իմանալ այն մասին, որ այս կամ այն սովորողն ստանում է հոգեբանական աջակցություն): Մակայն բոլորովին այլ իրավիճակ է, երբ հոգեբանական աջակցությունը տրամադրվում է դպրոցում: Այս դեպքում հոգեբանական աջակցության տրամադրման մասին տեղյակ են մանկավարժական անձնակազմը, սովորողի համադասարանցիները: Կրթության հոգեբանի այցելուները ճանաչում են միմյանց և շփվում, հետևաբար առկա է տեղեկությունների արտահոսքի վտանգ: Այս հանգամանքը հոգեբանից պահանջում է սթափ, ուշադիր և զգոն վերաբերմունք շահառուներից յուրաքանչյուրի կողմից ներկայացված տեղեկությի նկատմամբ:

- Տեղեկությթր, որն ստացվել է հոգեբանի կողմից աշխատանքի անցկացման գործընթացում, որևէ կերպ ենթակա չէ գիտակցված կամ պատահական տարածման, քննարկման այլ անձանց, այդ թվում նաև՝ դպրոցի անձնակազմի անդամների հետ: Այն անհրաժեշտ է գաղտնի պահել՝ ելնելով հոգեբանական աշխատանքի կազմակերպման գաղտնապահության սկզբունքից:



- Եթե անհրաժեշտություն կա փոխանցել տեղեկույթը երրորդ անձանց, ապա անհրաժեշտ է այն ներկայացնել այնպիսի տեսքով, որ բացառի դրա օգտագործումն այցելուի շահերի դեմ:
- Բոլոր այն դեպքերում, երբ այցելուից ստացված տեղեկույթի վերաբերյալ հարցում է արվում փորձագետների կողմից (որպեսզի լուծվի հոգեբանի կոմպետենտության հարցը նրա ատեստավորման ժամանակ կամ որևէ այլ նպատակով), ապա անհրաժեշտ է այն տրամադրել այնպես, որ բացառվի այցելուի անձի նույնականացումը:
- Նույնը վերաբերում է նաև մասնագիտական գործունեության մասին հաշվետվություններին, հետազոտությունների արդյունքներին և հրապարակումներին, որոնք պետք է կազմված լինեն այնպիսի տեսքով, որը կբացառի այցելուի նույնականացումը շրջապատող այն մարդկանց կողմից, ովքեր ներգրավված չեն տվյալ այցելուի հետ աշխատող մասնագետների խմբի մեջ:
- Մանկավարժական անձնակազմի հետ սովորողների այս կամ այն խնդրի լուծման ուղիների որոնման նպատակով տարբեր հիմնախնդիրների բարձրաձայնման և քննարկման ժամանակ ևս անհրաժեշտ է պահպանել գաղտնիության սկզբունքը:
- Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ այցելուի մասին բոլոր տեղեկությունները գրանցվում և պահպանվում են խիստ գաղտնի պայմաններում:

Անհատական աշխատանքի իրականացման ընթացքում առաջնային կարևորություն է ձեռք բերում այցելուի հետ կոնտակտի հաստատումը: Այս հանգամանքը ևս իր առանձնահատկություններն է ձեռք բերում դպրոցի հոգեբանի աշխատանքում, քանզի, ի տարբերություն այլ դեպքերի, դպրոցում սովորող երեխան կարող է վաղուց արդեն ճանաչել

նրան՝ որպես իրենց դպրոցում աշխատող մասնագետի, բայց միևնույն ժամանակ կոնտակտի ձևավորման և վստահության խնդիր ունենալ, երբ հանդիպելու է վերջինիս հետ՝ հոգեբանական աջակցություն ստանալու համար (Хухлаева, 2022, Позднякова, 2016): Այս տեսանկյունից շատ կարևոր է հաշվի առնել մի շարք հանգամանքներ.

- Երեխայի համար ապահով ֆիզիկական միջավայր (սենյակում այլ անձանց ելքի ու մուտքի բացառում հանդիպման ընթացքում, աղմուկի և շեղող գործոնների բացառում կամ նվազեցում և այլն):
- Հուզականորեն չերանգավորված, չեզոք թեմայից զրույցն սկսելու հանգամանքը, նույնիսկ, եթե սովորողը տվյալ պահին որևէ արդիական խնդրով դիմել է մասնագետին: Այնպիսի նախադասությունները, ինչպիսիք են «Ինչպե՞ս ես», «Մի՞րո՞ւմ ես այսպիսի եղանակ», «Ինչպե՞ս են գործերդ» և այլն, լիցքաթափում են ավելորդ լարվածությունը՝ ստեղծելով ավելի ազատ, անմիջական ու անկաշկանդ միջավայր:
- Առաջին հանդիպման ընթացքում երեխայի հետ հաղորդակցվելիս կարևոր է հաշվի առնել վերջինիս տարիքային առանձնահատկությունները: Դեռահասների հետ հաղորդակցվելիս կարևոր է զերծ մնալ վերջիններիս որպես երեխա վերաբերվելուց, տարիքին անհամապատասխան խաղեր առաջարկելուց, մանկական թեմաներով զրույցներ ծավալելու փորձերից և այլն: Ցանկալի է տեղեկություններ ունենալ ժամանակակից դեռահասների ընդհանուր հետաքրքրություններից և օգտագործել դրանք առաջնային կոնտակտ հաստատելու նպատակով: Ավելի փոքր տարիքի երեխաների հետ կարելի է օգտագործել տարբեր խաղեր, արտթերապևտիկ տեխնիկաներ և այլն: Ընդ որում,



արտթերապետիկ տեխնիկաները կիրառելի են տարիքային բոլոր խմբերի հետ, սակայն դրանց ընտրությունը և այցելուին ներկայացնելու ձևերը ևս կարող են տարբեր լինել՝ պայմանավորված վերջինիս տարիքով: Այսպես, օրինակ, եթե կրտսեր դպրոցական տարիքի երեխային որևէ բան նկարել առաջարկելիս մենք կարող ենք ասել. «Հիմա մենք միասին կնկարենք», ապա դեռահասի համար նման ձևակերպումն այնքան էլ տեղին չէ:

- Հոգեբանի մարմնի լեզուն ևս մեծ նշանակություն ունի առաջնային կոնտակտի հաստատման համար: Նստած դիրքը, տեղը, կեցվածքը, ձայնի հնչերանգը կարևոր դեր են խաղում այս պարագայում: Կարևոր է, որ դրանք արտահայտեն հուզական դրական վերաբերմունք երեխայի նկատմամբ: Անհրաժեշտ է խոսել մեղմ ձայնով, բայց հստակ, երեխայի տեմպին համապատասխան ու պարզ, որպեսզի երեխան կարողանա հասկանալ այն, ինչ իրեն ասում են, առանց ավելորդ լարվածության:
- Երեխայի հետ առաջնային կոնտակտի հաստատման հարցում մեծ դեր է խաղում այն հանգամանքը՝ արդյո՞ք ծնողները կամ խնամակալը սենյակում են, թե ոչ: Որպես կանոն, ծնողները (խնամակալները) տարբեր կերպ (հաղորդակցման խոսքային և ոչ խոսքային միջոցներով) փորձում են ուղղորդել երեխային կամ որոշակի գնահատականներ տալ, ինչը չի կարող նպաստել մասնագետի հետ վստահելի հարաբերությունների ձևավորմանը: Ուստի, կարևոր է ծնողներին (խնամակալներին) նախապես տեղեկացնել այս հանգամանքի կարևորության մասին և երեխայի հետ հանդիպումն իրականացնել սենյակում նրանց բացակայության պայմաններում: Եթե այս կամ այն պատճառով դա հնարավոր չէ, ապա ծնողները



սպասում են հարևան սենյակում՝ բաց թողնելով դուռը, որ երեխան հարկ եղած դեպքում կարողանա տեսնել նրանց, կամ սպասում են սենյակում, բայց մեջքով դեպի երեխան ու մասնագետը և բացարձակ անհաղորդ են մնում սենյակում տեղի ունեցող իրադարձություններին (խոսքը վերաբերում է երեխայի հետ միայն առաջին հանդիպմանը):

Խմբային աշխատանքներ

Ինչպես արդեն նշեցինք, հոգեբանական աշխատանքի ձևը որոշվում և սահմանվում է՝ հիմնվելով սովորողի հոգեբանական ախտորոշման արդյունքում առանձնացված հիմնախնդիրների և դրանց հաղթահարման ուղղությունների վրա: Մի շարք դեպքերում կարող է անհրաժեշտություն ծագել սովորողի հետ հոգեբանական աշխատանքներն իրականացնել անհատական և /կամ խմբային ձևով: Խմբի ձևավորման ընթացքում կարևոր է հետևել մի շարք կանոնների (Смигдт, 2000), մասնավորապես.

1. Խմբի մասնակիցների թիվը սահմանվում է՝ ելնելով տարիքային առանձնահատկություններից, հոգեբանական հիմնախնդրից: Այսպես, օրինակ, կրտսեր դպրոցի հետ իրականացվող խմբային աշխատանքում ներգրավված երեխաների թիվը կարող է լինել 4-8, առավելագույնը՝ 10, մինչդեռ դեռահասներից կազմված խմբում կարող են ներգրավված լինել մինչև 16 մասնակից:
2. Տարիքային տարբերությունը երեխաների խմբում կարող է լինել մինչև 1 տարի:
3. Խմբերը կարող են լինել ինչպես բաց, այնպես էլ փակ: Այն խմբերը, որոնցում ներգրավված են սոցիալ-հուզական տարբեր խնդիրներ ունեցող երեխաներ (բարձր տագնապայնություն, վախեր, ամաչկոտություն, հաղորդակցման դժվարություններ



և այլն), աշխատանքներն իրականացնում են փակ խմբի սկզբունքով, քանզի բաց լինելու դեպքում անընդհատ նոր անդամների ավելացումը կարող է խաթարել խմբի աշխատանքների բնականոն ընթացքն ու վնասել մասնակիցների հոգեբանական վիճակին: Խմբի փակ լինելու հանգամանքը կարող է պայմանավորվել նաև խմբում ներգրավված մասնակիցների առավելագույն թվով:

4. Խմբային աշխատանքները կազմակերպելիս կարևոր է.
- Հստակ սահմանել խմբային աշխատանքի նպատակը, խմբի կազմը, ժամերը և տևողությունը, հաճախականությունը, ժամկետները:
 - Խմբի անդամներին տեղեկացնել վերոնշյալ հանգամանքների մասին:
 - Ի սկզբանե, խմբի անդամների հետ միասին սահմանել խմբային վստահության ձևավորման նախապայմանը՝ գաղտնապահությունը, որի համաձայն այն, ինչ տեղի է ունենում խմբի ներսում, խմբի շրջանակներից դուրս չի քննարկվում, հակառակ դեպքում խումբը պետք է տեղյակ լինի դրա մասին: Այս հանգամանքը դպրոցական հոգեբանից առավել մեծ զգոնություն և մասնագիտական նրբանկատություն է պահանջում՝ հաշվի առնելով դպրոցում տրամադրվող հոգեբանական աջակցության առանձնահատկությունները:

Խմբային աշխատանքների ընթացքում առանձնացվում է.

- Խմբային աշխատանքների մեկնարկ (ծանոթություն համապատասխան հոգեբանական վարժությունների միջոցով, խմբային կանոնների քննարկում և հաստատում խմբի անդամների կողմից):



- Աշխատանքային փուլ (այս փուլում խմբային աշխատանքի կոնկրետ նպատակին ծառայող վարժանքներից, խաղերից, խաղային վարժություններից ու քննարկումներից բացի կարևոր նշանակություն են ձեռք բերում նաև խմբային համախմբվածության և վստահության ձևավորմանն ուղղված վարժությունները, խմբում անկեղծության մղող խաղերն ու վարժությունները (համապատասխան վստահելի մթնոլորտի առկայության պարագայում)):
 - Խմբային աշխատանքների ավարտ (խմբային աշխատանքի նպատակին համապատասխան փոփոխությունների քննարկում, անդրադարձ խմբային աշխատանքի արդյունքներին՝ մասնակիցներից յուրաքանչյուրի ձեռքբերումների համատեքստում), որի մասին խելամիտ ժամկետներում պարբերաբար անհրաժեշտ է հիշեցնել մասնակիցներին, որպեսզի նրանք հոգեբանորեն պատրաստվեն բաժանմանը:
5. Խմբային աշխատանքներում կարող են ներգրավվել (Джинотт, 2005).
- ինքնամփոփ երեխաները,
 - հաղորդակցման հմտությունների պակաս ունեցող երեխաները,
 - ոչ հասուն (մանկամիտ) վարք դրսևորող երեխաները,
 - բարձր տազնապայնություն և վախեր ունեցող երեխաները,
 - կանացի վարք ունեցող տղաները,
 - ենթարկվող երեխաները,
 - վատ սովորություններ ունեցող երեխաները,
 - վարքային խանգարումներ ունեցող երեխաները (բացառությամբ գողության փորձեր կատարած երեխաների):
6. Խմբային աշխատանքները հակացուցված են.



- սիբլինգային մրցակցություն (սեփական քույրերի կամ եղբայրների հանդեպ թշնամական վերաբերմունք) ունեցող երեխաներին,
- սոցիոպաթիա ունեցող երեխաներին,
- ընդգծված սեքսուալ հակումներով երեխաներին,
- այլասերված սեքսուալ փորձ ունեցող երեխաներին,
- բազմիցս գողություն կատարած երեխաներին,
- չափազանց ագրեսիվ երեխաներին,
- սուր սթրեսային ռեակցիա ունեցող երեխաներին:

Հոգեբանի աշխատանքի տարեկան ծրագրի օրինակ

Հոգեբանի աշխատանքի տարեկան ծրագրից բացի մշակվում է նաև գործողությունների պլան աշխատանքի յուրաքանչյուր ուղղության վերաբերյալ, որտեղ հստակեցվում և կոնկրետացվում են թիրախային խումբը, նպատակը, նպատակի իրագործմանը միտված գործողությունները, հոգեբանական աշխատանքների կազմակերպման ձևը, անհրաժեշտ ռեսուրսները, ժամկետները:

	Աշխատանքի ուղղություններ	Իրականացվող գործողություններ	Կատարման ժամկետ
1.	Աշխատանք սովորողների հետ		
1.1.	Սովորողների հոգեդիագնոստիկա	1.1.1. Սովորողի կամ սովորողների խմբի հետազոտում անձի անհատական հոգեբանական	Սեպտեմբեր, ուսումնական տարվա ընթացքում՝ ըստ

		առաձևահատկությունների ուսումնասիրման նպատակով:	անհրաժեշտության
1.2.	Կանխարգելիչ աշխատանքներ	<p>1.2.1. Աշխատանք դպրոցական հարմարման, սթրեսի հաղթահարման հետ կապված դժվարություններ ունեցող սովորողների հետ՝ հետագա բարդացումները կանխարգելելու նպատակով:</p> <p>1.2.2. Աշխատանք «ոիսկի խմբի» սովորողների հետ՝ հետագա բարդությունները կանխելու նպատակով:</p> <p>1.2.3. Աշխատանք հոգեկան զարգացման տարբեր ոլորտներում այս կամ այն խանգարումն ունեցող երեխաների հետ՝ հետագա բարդությունները և երկրորդային խանգարումները կանխելու նպատակով:</p>	<p>Հոկտեմբեր, նոյեմբեր, ուսումնական տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության</p> <p>Պարբերաբար, յուրաքանչյուր ամսվա ընթացքում նվազագույնը 2 անգամ</p>



1.3.	Զարգացնող աշխատանքներ	1.3.1. Հոգեբանորեն բարենպաստ զարգացում ունեցող անձի հոգեբանական լիարժեք զարգացման ապահովում:	Պարբերաբար, ուսումնական տարվա ընթացքում
1.4.	Շտկող աշխատանքներ	1.4.1. Աշխատանք հոգեբանորեն անբարենպաստ զարգացում ունեցող սովորողների հետ ուսուցման, հոգեբանական զարգացման, հուզական ոլորտի կամ վարքի խնդիրների լուծման նպատակով:	Պարբերաբար, ըստ անհրաժեշտության
2.	Աշխատանք ծնողների հետ		
2.1.	Խորհրդատվական աշխատանքներ	2.1.1. Խորհրդատվության տրամադրում ծնող-երեխա փոխհարաբերությունների անչվող հարցերի շուրջ:	Ըստ անհրաժեշտության՝ ուսումնական տարվա ընթացքում
2.2.	Ուսուցանող, իրազեկող աշխատանքներ	2.2.1. Աշխատանք ընտանիքի հետ՝ սովորողների արդի հիմնախնդիրների և դրանց հաղթահարման անչվող հարցերի,	Հոկտեմբեր, հունվար, ապրիլ



		լուսաբանման նպատակով:	
2.3	Կանխարգելող աշխատանքներ	2. 3. 1. Սովորողների ուսումնական մոտիվացիայի վրա անդրադարձող ընտանեկան խնդրահարույց մոտեցումների և վերաբերմունքի կանխարգելում:	Նոյեմբեր, փետրվար, մայիս
3.	Աշխատանք ուսուցիչների հետ		
3.1.	Խորհրդատվական աշխատանքներ	3.1.1. Աշխատանք մանկավարժների հետ սովորողների խնդիրների լուծման համար նրանց հետ արդյունավետ համագործակցության ձևավորման նպատակով:	Սեպտեմբեր, պարբերաբար՝ ուսումնական տարվա ընթացքում
3.2	Ուսուցանող, իրազեկող աշխատանքներ	3.2.1. Աշխատանք մանկավարժների հետ երեխայի կյանքում ներգրավված անձանց հոգեբանական մշակույթի և գրագիտության բարձրացման, հոգեբանական	Եռամսյակը մեկ



		խնդիրների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման նպատակով:	
3.3	Կանխարգելող աշխատանքներ	3.3.1. Աշխատանք մանկավարժների հետ նրանց սթրեսների, հուզական սպառման, մասնագիտական այրման կանխարգելման նպատակով:	Եռամսյակը մեկ, ուսումնական տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության
4.	Աշխատանք շահագրգիռ կառույցների հետ		
4.1.	Սոցիալ-վերահսկողական աշխատանքներ	4.1.1. Սովորողների խնդիրների լուծմանը միտված այլընտրանքային միջամտության կամ աջակցության տրամադրման հնարավոր եղանակների որոնում, համապատասխան համագործակցությունների ձևավորում:	Պարբերաբար՝ ուսումնական տարվա ընթացքում



ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Հանրակրթական դպրոցներում հատուկ մանկավարժական ծառայությունը կարող է տրամադրվել հատուկ մանկավարժական ծառայություններ իրականացնող տարբեր մասնագետների կողմից.

- խոսքի զարգացմանն ուղղված ծառայության տրամադրում լոգոպեդի կողմից,
- մտավոր զարգացմանն ուղղված ծառայություն տրամադրում օլիգոֆրենոմանկավարժի կողմից,
- լսողական զարգացմանն ուղղված ծառայության տրամադրում սուրդոմանկավարժի կողմից,
- տեսողական զարգացմանն ուղղված ծառայության տրամադրում տիֆլոմանկավարժի կողմից,
- կենցաղային, ինքնասպասարկման և սոցիալական հմտությունների զարգացմանն ուղղված ծառայության տրամադրում էրգոթերապիստի կողմից:



ԼՈԳՈՊԵԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Լոգոպեդիան հատուկ մանկավարժության ուղղություն է, որը զբաղվում է խոսքի խանգարումների բացահայտմամբ, կանխարգելմամբ և հաղթահարմամբ: Լոգոպեդական աշխատանք իրականացվում է ինչպես խոսքի խանգարում ունեցող երեխաների, այնպես էլ մեծահասակների հետ՝ նպաստելով նրանց հաղորդակցման, զարգացման, ուսումնական և աշխատանքային գործունեության բարելավմանը (Елецкая, Горбачевская, 2005):

Լոգոպեդական աշխատանքը հիմնվում է հոգեբանամանկավարժական և բուն լոգոպեդական մեթոդների և սկզբունքների վրա: Արդյունավետ աշխատանք ապահովելու համար լոգոպեդներն ակտիվորեն համագործակցում են այլ մասնագետների՝ հոգեբանների, մանկավարժների, այդ թվում նաև հատուկ մանկավարժների, բժիշկների, ինչպես նաև խոսքի խանգարում ունեցող անձանց ընտանիքների հետ (Мазанова, 2009):

Հանրակրթության ոլորտում լոգոպեդական ծառայություն իրականացվում է ինչպես նախադպրոցական ուսումնական հաստատություններում (ՀՀ օրենքը նախադպրոցական կրթության մասին խմբ. 06.05.20 ՀՕ-267-Ն), այնպես էլ դպրոցներում և ՏՄԱԿ-ներում (ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04.2017 թվականի 370-Ն հրաման «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը հաստատելու մասին»):

Կրթական հաստատություններում իրականացվող լոգոպեդական աշխատանքի նպատակն է շտկել սովորողների բանավոր և գրավոր խոսքի խանգարումները՝ աջակցելով ուսումնա-



դաստիարակչական ողջ գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: Խոսքը կարևոր նշանակություն ունի ուսումնական գործընթացում: Ուստի խոսքի խանգարումները հաճախ խոչընդոտում են ուսումնական նյութի յուրացմանը, դժվարացնում են գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացները: Այդ է պատճառը, որ լոգոպեդական աջակցությունը խոսքի խանգարում ունեցող սովորողների կրթական գործընթացի արդյունավետ իրականացման կարևոր նախապայմաններից է (Аманатова, Андреева, Тосуниди, 2010):

Լոգոպեդական ծառայության ուղղությունները կրթական հաստատություններում

Լոգոպեդական ծառայության գործունեությունը, ընդհանուր առմամբ, իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

- աջակցություն սովորողներին,
- աջակցություն ուսուցիչներին,
- աջակցություն ծնողներին,
- աջակցություն վարչական անձնակազմին (Бессонова, 2010):

Աջակցություն սովորողներին

Լոգոպեդական ծառայությունն աջակցում է սովորողներին՝ հաղթահարել խոսքի խանգարումները և հաջողությամբ յուրացնել ուսումնական ծրագիրը: Այս համատեքստում կարևոր է ժամանակին բացահայտել բանավոր և գրավոր խոսքի խանգարում ունեցող սովորողներին և իրականացնել լոգոպեդական աշխատանք:

Սովորողներին ցուցաբերվող աջակցությունը ներառում է հետևյալ աշխատանքները.



1. դասալսումներ և դրանց վերլուծություն
2. բանավոր և գրավոր խոսքի հետազոտություն
3. պարապմունքների իրականացում (Кукушин, 2010):

Դասալսումներ և դրանց վերլուծություն

Ուսումնական տարվա առաջին իսկ օրերից լոգոպեդը կատարում է դասալսումներ, որոնց ընթացքում դիտարկում է սովորողներին: Դասալսումները կատարվում են հետևյալ նպատակներով.

- սովորողների բանավոր և գրավոր խոսքի հետազոտում (տարեսկզբյան, ընթացիկ, տարեվերջյան),
- ծանոթացում ուսուցիչների կողմից կիրառվող ուսուցման մեթոդներին, միջոցներին և եղանակներին,
- լոգոպեդական աշխատանքի միջոցով ձեռք բերված արդյունքների կայունության գնահատում (Мазанова, 2009):

Բանավոր և գրավոր խոսքի հետազոտում և գնահատում

Կատարվում է սովորողների՝

- խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման առանձնահատկությունների,
- հնչարտաբերման,
- արտաբերական ապարատի կառուցվածքի և շարժունակության,
- բառի վանկային կառույցի,
- խոսքի տեմպի, ռիթմի, արտահայտչականության,
- ձայնի,
- խոսքային շնչառության,
- բառապաշարի,
- խոսքի քերականական կառույցի,



- կապակցված խոսքի հետազոտում և գնահատում:

Ուշադրություն է դարձվում նաև տեսատարածական և ժամանակային ընկալման ու պատկերացումների ձևավորվածությանը, ինչպես նաև ընդհանուր և մանր շարժունակության վիճակին (Кужушин, 2010):

Պարապմունքների իրականացում

Գնահատման արդյունքների հիման վրա ձևակերպվում են սովորողների կարիքները և նրանց հետ աշխատանքի հիմնական ուղղությունները: ԿԱՊԿ ունեցող յուրաքանչյուր, այդ թվում՝ խոսքի խանգարում ունեցող, սովորողի համար կազմվում է ԱՈՒՊ, որում ուսուցիչների, աջակցության թիմի մասնագետների և սովորողի ծնողի հետ համատեղ քննարկման արդյունքում ձևակերպվում են անհատական աշխատանքի և մասնագիտական աջակցության նպատակները և քայլերը:

Լոգոպեդական աջակցությունն իրականացվում է անհատական և խմբային պարապմունքների ձևով: Պարապմունքների անցկացմանը զուգահեռ լոգոպեդը մշտապես կատարում է ընթացիկ դիտարկումներ առկա փոփոխությունների արձանագրման նպատակով, որոնց հիման վրա էլ քննարկումների արդյունքում փոփոխվում են աշխատանքի մեթոդական մոտեցումները (ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04.2017 թվականի 370-Ն հրաման «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը հաստատելու մասին»):

Խմբային պարապմունքներ իրականացնելիս պետք է հաշվի առնել, որ խմբի մեջ կարելի է ընդգրկել խոսքի նույն խանգարումն ունեցող նույն տարիքի երեխաներին՝ հաշվի առնելով խոսքի խանգարման տեսակը, արտահայտման աստիճանը, ինչպես նաև



յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները: Երեխաների թիվը յուրաքանչյուր խմբում կարող է լինել 2-8՝ կախված խոսքի խանգարման տեսակից, արտահայտման աստիճանից, լոգոպեդական աշխատասենյակի պայմաններից և այլն: Որոշ դեպքերում կարելի է կատարել ենթախմբային աշխատանքներ (օրինակ՝ եթե խմբի երեխաների մի մասը նյութը չի յուրացրել և այլն): Անհատական պարապմունքներ կազմակերպվում են այն երեխաների հետ, ում նպատակահարմար չէ ընդգրկել խմբի մեջ՝ ելնելով խնդրի բնույթից, դրա արտահայտման աստիճանից, անհատական առանձնահատկություններից: Աջակցության տրամադրման շաբաթական հաճախականությունը, ծավալը, տևողությունը կախված են սովորողի խնդրի բնույթից և դրա ծանրության աստիճանից:

Պարապմունքների իրականացման համար լոգոպեդը կազմում է աշխատանքային գրաֆիկ: Լոգոպեդական պարապմունքներն անցկացվում են դասերից հետո: Խմբային պարապմունքների առավելագույն տևողությունը 45 րոպե է, իսկ անհատական պարապմունքներինը կարող է լինել 30-45 րոպե: Շաբաթական հաճախականությունը 1-3 անգամ է՝ կախված խոսքի խանգարման տեսակից, արտահայտման աստիճանից, սովորողների անհատական առանձնահատկություններից, աշխատանքի փուլից և այլն (ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04.2017 թվականի 370-Ն հրաման «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը հաստատելու մասին»):

Աջակցություն ուսուցիչներին

Լոգոպեդական ծառայության աջակցությունն ուսուցիչներին իրականացվում է հետևյալ ուղղություններով.



1. խորհրդատվություն,
2. իրազեկող աշխատանք:

Խորհրդատվություն

Լոգոպեդը պարբերաբար խորհրդատվություն է իրականացնում ուսուցիչների համար սովորողների կրթական կարիքների բացահայտման, ուսումնական նպատակների և դրանց հասնելու քայլերի սահմանման, նոր նյութի բովանդակության և դրա մատուցման, գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացում կիրառվող մեթոդների, միջոցների, եղանակների ընտրության, լոգոպեդական աշխատանքի արդյունքում ձեռք բերված արդյունքների ամրապնդման վերաբերյալ:

Իրազեկող աշխատանք

Ուսուցիչների և լոգոպեդի արդյունավետ համագործակցության ապահովման համար կարևոր է, որ ուսուցիչներն իրազեկ լինեն խոսքի խանգարումների, ուսուցման գործընթացի վրա դրանց ազդեցության, ինչպես նաև այս երեխաների ուսուցման կազմակերպման առանձնահատկությունների՝ մեթոդների, միջոցների, հարմարեցումների մասին: Ուստի կարևոր է, որ լոգոպեդը պարբերաբար իրականացնի իրազեկող աշխատանքներ՝ քննարկելով խոսքի խանգարում ունեցող երեխաների դժվարություններին և նրանց հետ համատեղ աշխատանքը բարելավելուն առնչվող հարցեր, աշխատանքի նոր տեխնիկաներ, ուսումնական հարմարեցումներ և այլն:



Աջակցություն ծնողներին

Խոսքի խանգարում ունեցող սովորողներին արդյունավետ մասնագիտական աջակցություն ցուցաբերելու համար մեծ նշանակություն ունի նրանց ծնողների (խնամակալների) հետ համագործակցությունը, որը ներառում է խորհրդատվական և իրազեկող աշխատանքներ:

Ծնողների հետ համագործակցությունը կարևորվում է երեխայի հոգեֆիզիկական զարգացման մասին տեղեկություններ ստանալու, նրա անձնային առանձնահատկություններին ծանոթանալու, լոգոպեդական հետազոտությունն ու պարապմունքները կազմակերպելու և ձեռք բերված արդյունքներն ամրապնդելու համար: Լոգոպեդը խորհրդատվություն է տրամադրում ծնողներին երեխայի խոսքի զարգացմանը նպաստելու, նրա բանավոր և գրավոր խոսքում առկա խնդիրները հաղթահարելու, ինչպես նաև ուսուցման գործընթացը տանը կազմակերպելու մոտեցումների, միջոցների և հնարների կիրառման վերաբերյալ:

Բացի խորհրդատվական աշխատանքներից, կարևոր է նաև ծնողներին իրազեկել խոսքի զարգացման, այդ գործընթացում մեծահասակի (ծնողների, ընտանիքի մյուս անդամների) դերի, խոսքի խանգարում առաջացնող պատճառների, խոսքի խանգարումների կանխարգելման, երեխաների ուսուցման գործընթացում անհրաժեշտ հարմարեցումների և մի շարք այլ հարցերի վերաբերյալ:

Լոգոպեդ-ծնող համագործակցությունը կարևորվում է նաև լոգոպեդական պարապմունքները կազմակերպելու և լոգոպեդական աշխատանքում ձեռք բերված արդյունքներն ամրապնդելու համար (Аманатова, Андреева, Тосуниди, 2010):



Աջակցություն վարչական անձնակազմին

Լոգոպեդական ծառայությունն իրականացնում է խորհրդատվական աշխատանք վարչական աշխատակիցների համար ԿԱՊԿ ունեցող սովորողների կրթության կազմակերպմանն առնչվող խնդիրների հաղթահարման վերաբերյալ:

Աջակցություն ուսումնական ծրագրի իրականացմանը

Դպրոցի կրթական գործընթացի արդյունավետ իրականացման համար կարևոր է, որ լոգոպեդը մասնակցի դպրոցում անցկացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման և միջոցառումների կազմակերպման աշխատանքներին: Այդ նպատակով ցանկալի է, որ լոգոպեդը պարբերաբար ներկա գտնվի մանկավարժական խորհրդի, առարկայական մասնախմբերի հանդիպումներին, մեթոդական հավաքներին՝ ԿԱՊԿ ունեցող սովորողների խնդիրներին ծանոթանալու, նրանց համար անհրաժեշտ ուսումնական հարմարեցումներ առաջարկելու, լոգոպեդական աջակցության ընթացքի և արդյունքների մասին տեղեկացնելու և, ընդհանուր առմամբ, ներառական կրթության կազմակերպմանն աջակցելու նպատակով:

Լոգոպեդի կարևոր աշխատանքներից է մասնագիտական գիտելիքների բարելավմանը միտված միջոցառումներին՝ գիտաժողովներին, կլոր սեղաններին, վարպետաց դասերին մասնակցությունը, որոնց արդյունքում նա հնարավորություն է ստանում տեղեկանալ լոգոպեդիայի նորագույն նվաճումներին, սովորել աշխատանքի նոր մեթոդներ, միջոցներ, հնարներ և կիրառել դրանք ի նպաստ խոսքի խանգարում ունեցող սովորողների ուսուցման որակի բարելավման (Елецкая, Горбачевская, 2005):



ՕԼԻԳՈՖՐԵՆՈՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Իր գործունեության ընթացքում հատուկ մանկավարժը (օլիգոֆրենոմանկավարժը) հենվում է մանկավարժական, հոգեբանական գիտությունների տարբեր ոլորտների գիտելիքների վրա: Հաշվի առնելով ժամանակակից ուսուցիչների կողմից կիրառվող մանկավարժական տեխնոլոգիաների բազմազանությունը, հոգեբանական ազդեցության մեթոդների տարբերությունը՝ օլիգոֆրենոմանկավարժը որոշում է մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխայի ուսուցման կազմակերպման և շտկողազարգացնող աշխատանքների մոտեցումները, անհատական ծրագրի այն հիմնական բովանդակությունը, որը կնպաստի երեխայի հնարավորությունների ընդլայնմանը (Бородина, 2020):

Աշխատանքի ընթացքում հատուկ մանկավարժը հիմնվում է երեխայի զարգացման տարիքային և անհատական առանձնահատկությունների, ինչպես նաև մտավոր զարգացման խանգարման բնույթի և առաջատար գործունեության վրա (Бородина, 2020; ՀՄԿ, 2022):

Ծառայության տրամադրումն ըստ ուղղությունների

1. Հոգեբանամանկավարժական և բժշկական փաստաթղթերի վերլուծություն

Մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխայի կարողությունների և հնարավորությունների շրջանակն ուսումնասիրելու և ծանոթանալու ընթացակարգն սկսվում է հոգեբանամանկավարժական և բժշկական փաստաթղթերի վերլուծությու-



նից, որը կարող է ներկայացվել ծնողների (օրինական ներկայացուցիչների) կողմից: Որպես կանոն, դա կարող է լինել բժշկական քարտ, երեխայի անձնական գործ և այլն:

Հատուկ մանկավարժը ծանոթանում է երեխայի անձնական գործում ներկայացված հոգեբանական և մանկավարժական բնութագրերին, որոնցում նկարագրվում են այն գիտելիքները, ունակություններն ու հմտությունները, որոնց տիրապետում է երեխան, ինչպես նաև ուսումնական գործունեության ընթացքում առկա հաջողությունները/անհաջողությունները/: Դիտարկվում են ճանաչողական գործունեությունը, հուզականային ոլորտը և երեխայի անձի առանձնահատկությունները:

Մասնագետը ծանոթանում է երեխաների աշխատանքներին՝ նկարներին, ապլիկացիաներին, կատարված գրավոր աշխատանքներին և առանձնացնում այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են առարկաների պատկերները, առարկայի մասերի ձևերի և համամասնությունների համապատասխանությունը, գույնի սահմանափակ և սխալ օգտագործումը, թղթի չափերի և նկարի մտահղացման անհամապատասխանությունը, գրավոր աշխատանքների կատարման բնույթը և այլն: Ուղեկցող փաստաթղթերում ներկայացված տվյալները համադրվում են նախնական դիտարկման հետ:

2. Մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների ճանաչողական գործունեության հոգեբանամանկավարժական ուսումնասիրություն

Ուսումնասիրության նպատակն է բացահայտել մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխայի հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները: Դիտարկման ընթացքում արձանագրվում է համապատասխանությունը տարիքային



ցուցանիշներին: Օրինակ՝ ինքնասպասարկման հմտությունների ձևավորվածությունը, հրահանգների կատարումն ու դրանց նկատմամբ վերաբերմունքը, ընդհանուր տրամադրության ֆոնը, շարժունակության զարգացման առանձնահատկությունները, խոսքի զարգացման մակարդակը, հաղորդակցման հմտությունները, կաշուն կամ կարծրատիպային գործողությունների առկայությունը, խաղային գործունեության առանձնահատկությունները (խաղալիքների նկատմամբ վերաբերմունքը, խաղալիքներն ինքնուրույն ընտրելու և խաղը կազմակերպելու ունակությունը, խաղալիքներով գործողությունների համարժեքությունը, խաղային գործունեության նկատմամբ կայուն հետաքրքրությունը): Զրույցի միջոցով պարզվում է երեխայի՝ իր և շրջակա աշխարհի մասին պատկերացումները: Հատուկ մանկավարժն ուշադրություն է դարձնում հետևյալ ցուցանիշներին, որոնք շատ կարևոր են ավագ նախադպրոցական, կրտսեր դպրոցական տարիքի երեխայի ճանաչողական ոլորտի զարգացման առանձնահատկությունները հասկանալու համար.

- երեխայի պատկերացումների ճշգրտությունը իր, իր ծնողների, մերձավոր հարազատների, ընկերների մասին, «ընտանիք», «հարևաններ», «հարազատներ» հասկացությունները տարբերելու ունակությունը և այլն,
- ժամանակի մասին պատկերացումների բնույթը (ժամացույցով ժամանակ սահմանելու ունակություն, ժամանակի տևողության ըմբռնում),
- պատկերացումները բնության երևույթների մասին (տարվա եղանակների տարբերակումը՝ հաշվի առնելով դրանց հատկանիշները. ամպրոպ, ձյուն, անձրև և այլն),
- տարածության մեջ կողմնորոշվելու ունակությունը,



- հայրենիքի, նշանավոր իրադարձությունների մասին տեղեկությունների պաշարը, դիտած մուլտֆիլմերի, ֆիլմերի ըմբռնումը և այլն:

Երեխայի ճանաչողական գործունեության հնարավորությունները պարզելու նպատակով հատուկ մանկավարժն իրականացնում է համեմատական հոգեբանամանկավարժական հետազոտություն, վերլուծություն:

Չափազանց կարևոր է համապատասխան գործիքակազմի ճիշտ ընտրությունը՝ հաշվի առնելով տարիքային խումբը, հոգեկան գործընթացների՝ տվյալ տարիքային խմբին բնորոշ առանձնահատկությունները, առաջատար գործունեությունը: Կարևոր է հաշվի առնել առաջադրանքների կատարման մակարդակը և աջակցության ընդունումը, վերլուծել և գրագետ մեկնաբանել հետազոտության արդյունքները:

3. Հոգեբանամանկավարժական բնութագրի կազմում

Հետազոտության ընթացքում ստացված տվյալների հիման վրա, որոնք ձևակերպվում են հետազոտության համապատասխան արձանագրությունում, կազմվում է հոգեբանամանկավարժական բնութագիր: Հոգեբանամանկավարժական բնութագրում արտացոլվում են ինչպես երեխայի մտավոր զարգացման առանձնահատկությունները, այնպես էլ նրա ուժեղ կողմերն ու ներուժը:

Որպես կանոն, բնութագրում արտացոլվում են երեխայի մասին ընդհանուր տեղեկություններ՝ ֆիզիկական վիճակը, խոսքի, ուշադրության, ընկալման, հիշողության, ուսումնական նյութի յուրացման, հուզականային ոլորտի, անձնային դրսևորումների առանձնահատկությունները: Վերլուծելով հոգեբանամանկավարժական հետազոտության տվյալները՝ մասնագետը



բացահայտում է երեխայի առաջատար դժվարությունը ուսուցման ընթացքում, որոշում երեխայի ուժեղ կողմերը, ինչպես նաև ձևակերպում հետագա շտկող-գարգացնող աշխատանքի գերակա ուղղությունները (Ferrel, J. 2012; Tichá, R., Abery, B., Johnstone, C., Poghosyan, A., & Hunt, P., 2018):

Երեխայի ուսուցման անհատական պլանավորումը կարող է սահմանվել տարբեր ժամանակահատվածների համար՝ կախված ինչպես երեխայի, այնպես էլ հաստատությունում ստեղծված կրթական միջավայրի հնարավորություններից: Հոգեբանամանկավարժական հետազոտության անցկացման ընթացքում կատարվում է նաև ծնողներից (օրինական ներկայացուցիչներից) տեղեկատվության հավաքագրում, նրանց հետ քննարկվում են ինչպես կրթական, այնպես էլ մանկավարժահոգեբանական աշխատանքի հիմնական ուղղությունները:

Աջակցություն սովորողին

1. Մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների գործունեության կազմակերպում հարմարեցված կրթական ծրագրերի յուրացմամբ, նրանց զարգացման խանգարումների շտկմամբ, սոցիալական հարմարվողականությամբ: Այդ նպատակով անհրաժեշտ է.
 - կրթական ծրագրի հարմարեցում՝ հաշվի առնելով կրթության առանձնահատուկ և սոցիալ-հուզական կարիքները, մտավոր զարգացման խանգարման աստիճանն ու առանձնահատկությունները,
 - պարապմունքների պլանավորում /անհատական, խմբային/,
 - մտավոր զարգացման տարբեր աստիճանի խանգարում ունեցող սովորողների համար հատուկ կրթական միջավայրի

ստեղծում և ինքնուրույն կյանքի համար անհրաժեշտ կոմպետենցիաների զարգացում,

- սովորողների գործունեության հիմնական տեսակների կազմակերպում տարբեր մակարդակի կրթական ծրագրերի յուրացման ընթացքում՝ հաշվի առնելով մտավոր խանգարման աստիճանը, տարիքը, ընդհանուր զարգացման յուրահատկությունները,
 - սովորողների ակտիվ համագործակցության ապահովում գործունեության տարբեր տեսակներում, սոցիալական փորձի հարստացում՝ ընդլայնելով փոխգործակցությունը մեծահասակների և հասակակիցների հետ, ծանոթացում հասարակական-մշակութային կյանքին,
 - ճանաչողական ակտիվության զարգացման ուղղությամբ շտկողազարգացնող աշխատանքի իրականացում՝ հաշվի առնելով մտավոր խանգարման աստիճանը, տարիքը, ընդհանուր զարգացման յուրահատկությունները,
 - պլանավորված կրթական և շտկողական աշխատանքների համակարգված հսկողություն և ձեռքբերումների գնահատում, մշտադիտարկում,
 - կրթական գործընթացի կազմակերպման, բովանդակության և մեթոդների վերափոխում-ճշգրտում՝ հաշվի առնելով ընթացիկ և պարբերական մշտադիտարկման արդյունքները:
2. Մտավոր զարգացման խանգարում ունեցողների համար տարբեր աստիճանի կրթական և շտկողազարգացնող ծրագրերի ծրագրային-մեթոդական մշակումների ապահովում.
- կրթական ծրագրերի, դժվարությունների հաղթահարման, սոցիալական հարմարվողականության նպատակի, խնդիրների և բովանդակության որոշում,
 - կրթական ծրագրերի պլանավորում,



- պարապմունքների պլանավորում՝ հաշվի առնելով անձնակողմնորոշիչ և անհատական-տարբերակված մոտեցումները,
- պլանավորված աշխատանքների համակարգված հսկողություն, ձեռքբերումների գնահատում և մշտադիտարկում,
- փաստաթղթերի ձևակերպում՝ հաշվի առնելով նորմատիվ ակտերն ու կրթական, շտկողազարգացնող ծրագրերի իրականացման ընթացքը:

Խորհրդատվական և գնահատման աշխատանքների իրականացում.

- մտավոր զարգացման խանգարում ունեցող սովորողների վաղ բացահայտում անհատական և հոգեբանամանկավարժական արդյունավետ աջակցության կազմակերպման նպատակով,
- գնահատման և խորհրդատվության համար անհրաժեշտ մեթոդիկաների ընտրություն,
- հոգեբանամանկավարժական գնահատման անցկացում՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկություններն ու մտավոր զարգացման խանգարման աստիճանը,
- մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխայի հոգեբանամանկավարժական գնահատման անցկացում և արդյունքների վերլուծության իրականացում,
- հոգեբանամանկավարժական եզրակացության նախապատրաստում,
- մտավոր զարգացման տարբեր աստիճանի խանգարում ունեցող երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերհանում՝ հաշվի առնելով անհատական և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները,
- հոգեբանամանկավարժական բնութագրի կազմում,



- կրթության և սոցիալականացման իրականացման նպատակով խորհուրդների և առաջարկությունների մշակում, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ հետազոտման ուղղորդում այլ մասնագետների մոտ,
- խորհրդատվություն մասնագիտական կողմնորոշման և սոցիալական հարմարվողականության հարցերի շուրջ,
- մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխաների հետ աշխատող մանկավարժական անձնակազմի և ՄՀ աջակցության խմբի մասնագետների հետ խորհրդատվության անցկացում,
- մտավոր զարգացման տարբեր աստիճանի խանգարում ունեցող երեխաների զարգացման և սոցիալականացման դժվարությունների կանխարգելման միջոցառումների իրականացում:

Իրազեկող աշխատանք

Հատուկ մանկավարժն իրականացնում է խորհրդատվություն ուսուցիչների համար մտավոր զարգացման խանգարում ունեցող սովորողների կրթական կարիքների բացահայտման, ուսումնական գործընթացում ներառվելու և կիրառվող մեթոդների, միջոցների, եղանակների ընտրության, ձեռք բերված արդյունքների ամրապնդման վերաբերյալ:

Աջակցություն ծնողներին

ԿԱՊԿ ունեցող սովորողների ծնողների և մասնագետների առաջին հանդիպումը տեղի է ունենում մանկավարժահոգեբանական գնահատման ժամանակ: Ծնողները գնահատող թիմի կարևոր անդամներ են և մասնակցում են քննարկումներին,

խորհրդակցություններին և հանդիպումներին: Այս համագործակցությունն էական նշանակություն ունի ոչ միայն գնահատման, այլև կրթության արդյունավետության բարձրացման հարցում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երբ ընտանիքներն ու մանկավարժները հանդես են գալիս որպես գործընկերներ, ավելի հավանական է դառնում բոլոր երեխաների ուսումնառության հաջող ընթացքը (Թադևոսյան, 2008; Núñez, Suárez, Rosario; Vallejo, Valle & Epstein, 2015):

Ընտանիքի հետ աշխատելիս էապես կարևոր է զարգացնել այնպիսի հարաբերություններ, որոնք տարբերվում են անցյալում եղած հարաբերություններից: Երեխայի կարիքներն ու դժվարությունները կարող են ներկայացվել նաև նրան ճանաչող այլ մասնագետների կողմից: Ընտանիքի հետ գործընկերային փոխհարաբերություններ հաստատելու համար կարևոր են երկխոսությունն ու սերտ շփումները: Մասնագետին կարող է հետաքրքրել, թե.

- ի՛նչ ակնկալիքներ ունեն ծնողներն իրենց երեխայից,
- ի՛նչ մտավախություններ ունեն ծնողները երեխայի կրթության կազմակերպման հարցում,
- ինչպես են պատրաստ դպրոցին աջակցել երեխայի ուսումնառության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Նման հարցերն օգնում են ծնողների մոտ ձևավորել իրատեսական պատկերացումներ իրենց երեխայի մասին, ներկայացնել նրա հետ պլանավորվող աշխատանքները և այդ աշխատանքներում իրենց դերակատարումը: Համագործակցության այս արդյունքն ունենալու համար թե՛ ընտանիքից, և թե՛ մասնագետներից պահանջում է ժամանակ և նպատակադրում (Ferrel, J., 2012):



ՍՈՒՐԴՈՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Սուրդոմանկավարժությունը հատուկ մանկավարժության ուղղություններից է, որը զբաղվում է լսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության, շտկող-գարգացնող գործընթացների ուսումնասիրությամբ: Լսողության խանգարումներ ունեցող անձանց հիմնական խնդիրը բառային խոսքի յուրացման դժվարությունն է: Խոսքի բացակայությունը խոչընդոտում է իմացական, հուզական ոլորտների զարգացմանը, սահմանափակում է հաղորդակցումը: Հետևաբար սուրդոմանկավարժության նպատակն է հատուկ մեթոդական, մեթոդոլոգիական և տեխնոլոգիական հիմքերի մշակման շնորհիվ հասնել լսողական խնդիրներ ունեցող անձանց խոսքային կամ ոչ խոսքային հաղորդակցման զարգացման այնպիսի մակարդակի, որը հնարավոր կդարձնի նրանց լիարժեք սոցիալականացումը, ինքնադրսևորումն ու ներառումը (Речицкоѳ, 2004):

Սուրդոմանկավարժական բազմաբնույթ ծառայության հիմնական խնդիրը լսողության խանգարում ունեցող երեխայի բազմակողմանի զարգացմանը նպաստող պայմանների ստեղծումն է և լսողության խանգարման հետևանքով առաջացած երկրորդային խնդիրների հաղթահարումը: Սա ենթադրում է ճանաչողական գործունեության մեջ, հաղորդակցական իրավիճակներում, առօրյա կյանքում արտաբերման և լսողական մնացորդի կիրառման հմտությունների ձևավորում ու անընդհատ կատարելագործում, ինչպես նաև բանավոր և գրավոր խոսքի զարգացում (Карпова, 2008):



Աջակցության աշխատանքների արդյունավետության ապահովման նպատակով սուրդոմանկավարժները սերտ համագործակցում են այլ մասնագետների՝ հոգեբանների, ուսուցիչների, բժիշկների, ինչպես նաև լսողության խանգարումներ ունեցող անձանց ընտանիքների հետ:

Հանրակրթության ոլորտում սուրդոմանկավարժական ծառայություն իրականացվում է ինչպես նախադպրոցական ուսումնական հաստատություններում, այնպես էլ դպրոցներում և ՏՄԱԿ-ներում:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվող աշխատանքի նպատակը կրթական գործընթացներում լսողության խանգարումներ ունեցող երեխաների ներառման խոչընդոտների հաղթահարումն է, ակադեմիական հաջողությունների խթանումը՝ հստակ արտաբերման, ուրիշի խոսքը հասկանալու ունակության (լսողական ընկալման և շրթունքներից կարդալու ունակությունների զարգացման շնորհիվ), գրավոր խոսքի զարգացման, երբեմն էլ ժեստերի լեզվի ուսուցանման միջոցով: Հայտնի է, որ հաղորդակցման խանգարումները խոչընդոտում են ուսումնական նյութի յուրացմանը, դժվարացնում գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացները: Այդ է պատճառը, որ լսողության խանգարումներ ունեցող սովորողներին սուրդոմանկավարժական աջակցության տրամադրումը կրթական գործընթացի արդյունավետ իրականացման կարևոր նախապայմաններից է:



Սուրդոմանկավարժի ծառայության ուղղությունները կրթական հաստատություններում

Հատուկ մանկավարժի մասնագիտական գործունեության կարևոր բաղադրիչներն են գնահատման, զարգացնող, կազմակերպչական-մեթոդական, խորհրդատվական-իրազեկող և կանխարգելող աշխատանքները, որոնք իրականացվում են հետևյալ հիմնական ուղղություններով.

- աջակցություն սովորողներին,
- աջակցություն ուսուցիչներին,
- աջակցություն ծնողներին,
- աջակցություն վարչական անձնակազմին (Речицкая Е. Г., 2004):

Աջակցություն սովորողին

Լսողության խանգարումներ ունեցող սովորողներին տրամադրվող մասնագիտական աջակցության նպատակն է նպաստել հաղորդակցման խանգարումների հաղթահարմանը և ուսումնական ծրագրի արդյունավետ յուրացմանը:

Սովորողներին ցուցաբերվող աջակցությունը ներառում է հետևյալ աշխատանքները.

1. դասալսումներ և դրանց վերլուծություն,
2. միջավայրի դիտարկում և վերլուծություն,
3. պարապմունքների իրականացում,
4. ժեստերի լեզվի ուսուցանում խոսքի ծանր և խորը խանգարման դեպքում:

Դասալսումներ և դրանց վերլուծություն

Ուսումնական ողջ տարվա ընթացքում հատուկ մանկավարժը (սուրդոմանկավարժը) կատարում է դասալսումներ, որոնց



ընթացքում դիտարկում է սովորողներին: Դասալսումները կատարվում են հետևյալ նպատակներով.

- սովորողների բանավոր և գրավոր խոսքի կամ ոչ խոսքային հաղորդակցման ուսումնասիրություն (տարեսկզբյան, ընթացիկ, տարեվերջյան),
- ծանոթացում ուսուցիչների կողմից կիրառվող ուսուցման մեթոդներին, միջոցներին և եղանակներին,
- հատուկ մանկավարժական աշխատանքի միջոցով ձևավորված արդյունքների կայունության գնահատում (Հазарова Л.П., 2001):

Միջավայրի դիտարկում և վերլուծություն

- ուսումնառության միջավայրի հարմարեցումների դիտարկում,
- հարմարեցումների արդյունավետության գնահատում:

Արտաբերման (խոսքի) և լսողական ընկալման գնահատում

Գնահատման աշխատանքները ներառում են լսողության խանգարում ունեցող երեխայի համակողմանի ուսումնասիրությունը, լսողական ընկալման զարգացման և հաղորդակցման անհատական առանձնահատկությունների բացահայտումը, ինչպես նաև զարգացման, ուսուցանման և սոցիալականացման այլ խնդիրների բացահայտումը: Լսողական խնդիրներ ունեցող երեխաների գնահատման ժամանակ հատկապես կարևորվում է.

- Խոսքի զարգացման համակողմանի գնահատումը (խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման առանձնահատկություններ, հնչարտաբերում, ձայն, տեմպառիթմիկ բաղադրիչներ, բառապաշար, բանավոր հաղորդակցման հմտություններ, խոսքի քերականական կառույցներ, կապակցված և գրավոր խոսք) իրականացվում է խոսքի խանգարումների բնույթի և



աստիճանի բացահայտման նպատակով, որն անհրաժեշտ է զարգացնող աշխատանքների ու ծրագրերի մշակման համար:

- Խոսքային և ոչ խոսքային ձայների լսողական ընկալման գնահատումը, ընկալման առավելագույն հեռավորության որոշումը:

Գնահատման արդյունքների հիման վրա ձևակերպվում են սովորողների կարիքները և նրանց հետ աշխատանքի հիմնական ուղղությունները: Լսողության խանգարումներ ունեցող սովորողների համար կազմվում է ԱՈՒՊ, որում ուսուցիչների, աջակցության թիմի մասնագետների և սովորողի ծնողի հետ համատեղ քննարկման արդյունքում ձևակերպվում են անհատական աշխատանքի և մասնագիտական աջակցության նպատակները և քայլերը (Белущенко, Наумов, Седова, 2006):

Մասնագետն իրականացնում է լսողության խանգարում ունեցող երեխայի զարգացման առաջընթացի պարբերական ուսումնասիրում և ընթացիկ գնահատում ԱՈՒՊ-ի վերանայման և աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով: Նա անցկացնում է նաև ամփոփիչ գնահատում, որն առաջնային ու երկրորդային խնդիրների և ուսումնական գործունեության տարբեր ձևերի ձևավորվածության մակարդակի համալիր հետազոտություն է: Ուշադրություն է դարձվում նաև ընդհանուր և մանր շարժունակության վիճակին:

Պարապմունքների իրականացում

Սուրդոմանկավարժի աջակցող պարապմունքներն իրականացվում են նախօրոք մշակված ծրագրով, ԱՈՒՊ-ում նախանշված ուղղություններով, որի բովանդակությունը ներառում է.

- զարգացնող աշխատանքների արդյունավետ ծրագրերի մշակում, ուսուցման մեթոդների և միջոցների ընտրություն,



- բանավոր և գրավոր խոսքի, լսողական ընկալման և հաղորդակցման ունակությունների զարգացմանն ուղղված անհատական և խմբային պարապմունքների կազմակերպում և իրականացում,
- լսողության տարբեր խանգարումներ ունեցող երեխաների լսողական աշխատանքների իրականացում, անհատական և խմբային պարապմունքների անցկացում հանրակրթական ուսումնական նյութերի հիման վրա, բանավոր և գրավոր խոսքի զարգացում,
- տեսողական, լսողական, շոշափողական ընկալումների զարգացմանն ուղղված պարապմունքների իրականացում, երեխայի կենցաղային և սոցիալական հմտությունների հարստացում, հաղորդակցական հմտությունների զարգացում:

Մուրդումանկավարժական աջակցությունն իրականացվում է անհատական և խմբային պարապմունքների ձևով: Պարապմունքների անցկացմանը զուգահեռ մշտապես կատարվում են ընթացիկ դիտարկումներ առկա փոփոխությունների արձանագրման նպատակով, որոնց հիման վրա էլ քննարկումների արդյունքում փոփոխվում են աշխատանքի մեթոդական մոտեցումները (Հазарова, 2001):

Երեխայի լսողական ֆունկցիայի խանգարման աստիճանից կախված՝ որոշվում է նրա աջակցության ծավալը՝ պարապմունքների քանակը և տևողությունը: Անհատական պարապմունքներն ունեն երկու հիմնական ուղղություններ՝ արտաբերական ունակությունների (խոսքի) և լսողական ընկալման զարգացում: Պարապմունքներին տրամադրվում է հավասար ժամանակահատված: Բացառություն է միայն ուսուցման առաջին փուլը, երբ անհատական պարապմունքների ժամանակ իրականացվում են



լտղական հնարավորությունների գնահատման (խոսքի ընկալման մակարդակը, արտաբերման վիճակը և այլն) և արտաբերման հմտությունների ձևավորման աշխատանքներ: Խոսքի և արտաբերման ուսուցումն անց է կացվում ձայնաուժեղացուցիչ սարքերով տեսողական ընկալման հիման վրա, իսկ լտղական ընկալման զարգացման աշխատանքները՝ լտղական ընկալման հիման վրա, ընդ որում՝ հիմնականում անհատական լտղական սարքերով: Մակայն պարապմունքի ընթացքում հնարավոր են նաև որոշ լտղական մարզումներ առանց սարքերի, եթե երեխան ունի ընկալման բարձր մակարդակ, և սուրդումանկավարժը նպատակ է սահմանել մարզել լտղությունը նաև առանց սարքերի:

Արտաբերական հմտությունների ձևավորմանն ուղղված ամենօրյա պարապմունքները նպաստում են հնչյունների դրմանը և բառերում դրանց մշակմանը: Այս աշխատանքների ընթացքում ձևավորվում է նաև աշակերտների լտղական ուշադրությունը, հնչյունային լտղությունը: Մեկ պարապմունքի ընթացքում աշխատանքների երկու ուղղությունների համադրությունը (լտղական ընկալման և արտաբերական զարգացման աշխատանքներ) պայմանավորված է նրանով, որ 2 զգայարանների (լտղական և խոսքաշարժողական) փոխկապակցված գործունեության դեպքում կարողությունները ձևավորվում են ավելի արագ և ավելի հեշտությամբ են վերափոխվում հմտության:

Անհատական պարապմունքների ընթացքում կիրառվում են աշխատանքի տարբեր ձևեր՝ աշխատանք քարտերով, նկարներով, մանրակերտներով, նկարաշարերով և այլն, ինչպես նաև՝ տեքստերով (ավարտել, սկսել տեքստը և այլն): Անհատական պարապմունքների բովանդակությունը որոշվում է՝ հիմք ընդունելով ուսուցման տարին, սովորողի լտղության իջեցման



աստիճանը, խոսքի զարգացման մակարդակը և սովորողների անհատական այլ առանձնահատկություններ (Ջոհրաբյան Ջ., Բարայան Լ., Մանուկյան Ա. և ուրիշներ, 2007):

Խմբային պարապմունքների խնդիրը անհատական լսողական սարքերի միջոցով խոսքի տեսալսողական ընկալման ժամանակ լսողական բաղադրամասի ուժեղացումն է, իսկ նպատակը՝ հաղորդակցման կազմակերպման շնորհիվ լսողության խանգարումներ ունեցող երեխաների ներառումն ու հարմարումը լսողների միջավայրում: Մակայն աշխատանքների կազմակերպման այս ձևը պարտադիր չէ, այն կարող է փոխարինվել անհատականով, եթե աշակերտը հետ է մնում ընդհանուր զարգացման, խոսքային նյութի յուրացման մակարդակով կամ ունի արտաբերական խնդիրներ:

Խմբերի ձևավորման ժամանակ մասնագետը հաշվի է առնում հետևյալ պայմանները.

- սովորողների տարիքը. 1-9-րդ դասարաններում խմբերում ընդգրկվում են 2-3 սովորողներ, իսկ 9-12-րդ դասարաններում՝ 3-4,
- լսողական ֆունկցիայի խանգարման աստիճանը. խմբում ընդգրկվում են լսողության մակարդակով իրար մոտ կամ լսող երեխաներ (հաղորդակցման խթանման նպատակով),
- արտաբերման մակարդակը,
- խոսքի զարգացման մակարդակը (օպտիմալ, ցածր, սահմանափակ, կտրուկ սահմանափակ),
- ուսումնառության մակարդակը,
- սովորողների զարգացման ընդհանուր մակարդակը, հետաքրքրությունները (Մանուկյան Ա. և ուրիշներ, 2008):



Աջակցության տրամադրման շաբաթական հաճախականությունը, ծավալը, տևողությունը կախված են սովորողի խնդրի բնույթից և դրա ծանրության աստիճանից:

Խմբային պարապմունքներն ունեն մի քանի առանձնահատկություններ.

1. Անհրաժեշտ է ապահովել խմբի բոլոր անդամների ակտիվությունը: Դրա համար կազմակերպվում են ուսուցիչ-սովորող, սովորող-ուսուցիչ, սովորող-սովորող կառուցվածքի երկխոսություններ: Այստեղ կիրառվում են դասարանում ընթերցած տեքստեր, հանրակրթական առարկաների դասերից վերցված նյութեր:
2. Խոսքային նյութի ընտրությունը կախված է խմբի անհատական և տիպային առանձնահատկություններից: Ավելի ուժեղ խմբի համար ընտրվում է ավելի ծավալուն և ավելի բարդ խոսքային նյութ:
3. Նյութի հաղորդման հեռավորությունը համապատասխանեցվում է յուրաքանչյուր աշակերտի լսողական ընկալման առանձնահատկություններին, ընդ որում, սովորողը կարող է ինքն ընտրել իր համար արդյունավետ տարածությունը:

Խմբային և անհատական պարապմունքների ժամանակ կիրառում են կոահուրը: Դրա համար պետք է նախօրոք մտածել, թե ո՞ր իրավիճակներում ի՞նչ հարց տալ, որպեսզի աշակերտը, հիմնվելով ենթատեքստի վրա, կարողանա պատասխանել հարցին:

Սուրդոմանկավարժն իր գործունեությունն իրականացնում է անհատական և խմբային պարապմունքների համար հատկացված սենյակում և պարտավոր է հարստացնել դրա մեթոդական բովանդակությունը (Ալեքսանյան Թ., Բաբայան Լ. և ուրիշներ, 2008):



Ժեստերի լեզվի ուսուցում

Լսողական և խոսքի ֆունկցիայի ծանր և խորը խանգարման դեպքում սովորողները զգալի դժվարություններ են ունենում ուսումնառության ժամանակ: Հաղորդակցման խոչընդոտները բացասաբար են անդրադառնում կրթական բոլոր գործընթացների վրա: Լսողության խանգարումներ ունեցող սովորողների ներառական կրթության որակի բարելավման նպատակով կարիք է առաջանում նրանց ուսումնառությունը կազմակերպել հաղորդակցման այլընտրանքային միջոցի՝ Ժեստերի լեզվի հիման վրա: Այդ նպատակով սուրդոմանկավարժն իրականացնում է երկլեզու ուսուցում՝ երեխաներին և ուսուցիչներին սովորեցնելով Ժեստերի լեզուն: Սա հատկապես կարևոր է լսողության խանգարումներ ունեցող ծնողների չլսող երեխաների համար (Паленной, 2020):

Աջակցություն ուսուցիչներին

Հատուկ մանկավարժական ծառայության աջակցությունն ուսուցիչներին իրականացվում է հետևյալ ուղղություններով.

1. խորհրդատվություն,
2. իրազեկող աշխատանք,
3. Ժեստերի լեզվի ուսուցում՝ անհրաժեշտության դեպքում:

Խորհրդատվություն

Սուրդոմանկավարժը պարբերաբար խորհրդատվություն է իրականացնում լսողության խանգարումներ ունեցող երեխաներին դասավանդող և աջակցող բոլոր մասնագետների համար: Ներառական կրթությանը միտված գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով ուսուցիչների խորհրդատվության ընթացքում ներկայացվում են յուրաքանչյուր կոնկրետ սովորողի համար անհրաժեշտ միջավայրային



հարմարեցումները, լսողական և խոսքային միջավայրի ստեղծման և պահպանման սկզբունքները, կրթական կարիքները, ուսումնական նպատակները և դրանց հասնելու քայլերը, ուսումնառության բովանդակության և նյութի մատուցման, գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացում կիրառվող մեթոդները, միջոցները, աշխատանքի ընթացքում ձևավորված արդյունքների ամրապնդման եղանակները: Սուրդոմանկավարժն աջակցում է լսողության խանգարումներ ունեցող սովորողների ուսուցման պլանավորման, մեթոդական և ակնառու նյութերի ընտրության աշխատանքներին, ինչպես նաև դպրոցական փաստաթղթավարության իրականացմանը (Բաբայան Լ. և ուրիշներ, 2007):

Իրազեկող աշխատանք

Ուսուցիչների և սուրդոմանկավարժի արդյունավետ համագործակցության ապահովման համար կարևոր է, որ ուսուցիչներն իրազեկ լինեն լսողության խանգարումների, երեխայի ընդհանուր զարգացման և ուսուցման գործընթացի վրա դրանց ազդեցության մասին: Սուրդոմանկավարժն իր գործունեության ընթացքում պետք է առանձնահատուկ շեշտադրի չլսող երեխաների ուսուցման կազմակերպման գործընթացների արդյունավետության բարձրացմանը նպաստող մեթոդների, միջոցների, հարմարեցումների մասին ուսուցիչների իրազեկումը, ինչպես նաև աջակցող տեխնոլոգիաների (լսողական սարքեր, ՖՄ համակարգեր, աուդիո-ինդուկցիոն կոճեր և այլն), դրանց գործածության և խնամքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը (Ավագյան Ա., Բաբայան Լ., Հովհաննիսյան Մ. և ուրիշներ, 2020):



Ժեստերի լեզվի ուսուցում

Լսողական ֆունկցիայի ծանր և խորը խանգարման դեպքում հաճախ զգալիորեն տուժում է նաև խոսքի զարգացումը: Լսողության խանգարումներ ունեցող դպրոցահասակ սովորողների խոսքի զարգացման մակարդակը թույլ չի տալիս կազմակերպել նրանց ուսումնառությունը բառային խոսքի հիման վրա: Լսողության խանգարման հետևանքով առաջացած խոսքի ծանր և խորը խանգարումների դեպքում կարիք է լինում երեխայի ուսումնառությունը կազմակերպել հաղորդակցման այլընտրանքային միջոցի՝ Ժեստերի լեզվի հիման վրա: Այդպիսի իրավիճակում սուրդոմանկավարժն աջակցում է ուսուցիչներին սովորողների ուսումնառության կազմակերպման ժամանակ անհրաժեշտ Ժեստերի յուրացմանը՝ տրամադրելով նրանց խորհրդատվություն, առցանց աղբյուրներին հղումներ և անհրաժեշտ գրականություն (Паленной, 2020):

Աջակցություն ծնողներին

Քանի որ ծնողները (օրինական ներկայացուցիչները) երեխայի կրթության կազմակերպման գործընթացների իրականացման շահագրգիռ կողմերից են, նրանց հետ ևս մասնագետի համագործակցությունն իրականացվում է երկու հիմնական ուղղություններով՝ խորհրդատվություն և իրազեկում: Այս աշխատանքները ենթադրում են լսողության խանգարում ունեցող երեխաների ընտանիքներին անհատական և խմբային խորհրդատվություններ, որոնք ուղղված են երեխայի լսողական, խոսքային և հաղորդակցական ունակությունների զարգացմանը, ծնողների հոգեբանամանկավարժական կարողունակությունների ձևավորմանը: Ավագ դպրոցներում, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սուրդոմանկավարժը



աջակցում է նաև մասնագիտական կոմնորոշման հարցերում: Ծնողների հետ համագործակցությունը կարևորվում է նաև երեխայի զարգացման վերաբերյալ տեղեկություններ ստանալու, անամնեստիկ տվյալներ հավաքագրելու, նրա անձնային առանձնահատկություններին ծանոթանալու, ձեռք բերված արդյունքները ներկայացնելու և դրանք տանն ամրապնդելու համար, ինչպես նաև ուսուցման գործընթացը տանը կազմակերպելու մոտեցումների, միջոցների և հնարների կիրառման նպատակով:

Ծնողների հետ աշխատանքներում կարևոր է նաև նրանց իրազեկել խոսքի և լսողական ընկալման զարգացման, այդ գործընթացում մեծահասակի (ծնողների, ընտանիքի մյուս անդամների) դերի, լսողության պահպանման, խանգարումների կանխարգելման, լսողական սարքերի անհրաժեշտության և խնամքի, տանը և դպրոցում երեխաներին անհրաժեշտ հարմարեցումների, ուսումնառությանը նպաստող միջոցների և մի շարք այլ հարցերի մասին: Մուրդումանկավարժ-ծնող համագործակցության բարելավման նպատակով կարող են խրախուսվել համատեղ պարապմունքները, որոնք նպաստում են ծնողների մոտ գործնական հմտությունների ձևավորմանը, աջակցող աշխատանքում երեխայի ձեռքբերումների ճանաչմանը և տանը պարապմունքների արդյունքների ամրապնդմանը (բանավոր հաղորդակցման խթանում, ձևավորված բառապաշարի կիրառում բանավոր և գրավոր խոսքում, լսողական և խոսքային միջավայի ստեղծում, լսողական մնացորդի կիրառում և այլն):

Ավագ դպրոցներում, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում մասնագետն աջակցում է նաև մասնագիտական կողմնորոշման հարցերում (Բաբայան Լ. և ուրիշներ, 2007):



Աջակցություն վարչական անձնակազմին

Մասնագիտական աջակցության կարևոր գործընթացներից է կրթական հաստատության տնօրենության հետ համագործակցությունը: Այս համագործակցության շրջանակում սուրդոմանկավարժը վարչական աշխատակիցներին տրամադրում է լսողության խանգարումներ ունեցող սովորողների կրթության կազմակերպմանն առնչվող խնդիրների հաղթահարման վերաբերյալ խորհրդատվություն, իրազեկում է առկա խնդիրների վերաբերյալ, ներկայացնում է հնարավոր լուծումներ և իրականացվող աշխատանքների արդյունքները:

Աջակցություն ուսումնական ծրագրի իրականացմանը

Լսողության խանգարումներ ունեցող երեխաների արդյունավետ ուսումնառության կազմակերպման համար կարևոր է, որ հատուկ մանկավարժը ներգրավված լինի կրթական հաստատությունում կազմակերպվող ուսումնադաստիարակչական բոլոր աշխատանքների պլանավորման և իրականացման գործընթացներում: Դրա համար խիստ կարևոր է դասղեկների հետ սուրդոմանկավարժների համագործակցությունը, փոխադարձ կապը: Ցանկալի է նաև, որ մասնագետը պարբերաբար ներկա գտնվի մանկավարժական խորհրդի նիստերին, առարկայական մասնախմբերի հանդիպումներին, մեթոդական հավաքներին լսողության խանգարումներ ունեցող սովորողների կրթական կարիքները քննարկելու, ուսումնական գործընթացում դրսևորվող խնդիրներին ծանոթանալու, դրանց հաղթահարման համար անհրաժեշտ լուծումներ և ուսումնական հարմարեցումներ առաջարկելու համար: Մանկավարժական թիմի հետ փոխհամագործակցությունը կարևոր է նաև աջակցության



ընթացքի և երեխայի ձեռքբերումների վերաբերյալ տեղեկություններ փոխանցելու, կրթության գործընթացներում լսողության խանգարումներ ունեցող երեխաների մասնակցությունն ու ներառումն ապահովելու նպատակով (Белущенко В.А., Наумов А.Е., Седова М.Ю., 2006):

Ինչպես ցանկացած մանկավարժի, այնպես էլ լսողության խանգարումներ ունեցող երեխաների հետ աշխատող մասնագետի համար կարևոր է ինքնակրթությունը, մասնագիտական կարողունակությունների բարձրացմանը միտված միջոցառումներում ներգրավվածությունը (գիտաժողովներ, կլոր սեղաններ, վարպետաց դասեր), ինչպես նաև դրանց արդյունքում ձեռք բերված գիտելիքների և փորձի ներդրումն ու տարածումը պրակտիկ գործունեության ընթացքում:



**ՏԻՖԼՈՍԱՆԿԱՎԱՐԺԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
ԴՊՐՈՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՐԱԳԻՐ**

Տիֆլումանկավարժը կազմակերպում է տեսողության խանգարումներ ունեցող սովորողների ուսումնական գործունեությունը՝ հաշվի առնելով նրանց ճանաչողական ոլորտի առանձնահատկությունը և խանգարված (թերզարգացած) գործառույթների փոխհատուցումը (Ермаков, Якунин, 2000):

Մասնագետի աշխատանքի նպատակն է բացահայտել և փոխհատուցել տեսողական ընկալման, զգայական և ճանաչողական գործընթացների խանգարումները, խթանել սովորողների տեսողական, ճանաչողական, ստեղծագործական գործունեությունը: Նա սովորեցնում է երեխաներին տեղեկատվություն ստանալ շրջակա աշխարհի մասին, ձևավորում և զարգացնում է ինքնասպասարկման և տարածական կողմնորոշման կարողություններ և հմտություններ (Ferreira, Sefotho, 2020):

Հատուկ մանկավարժի աշխատանքի խնդիրներն են.

1. Բոլոր պահպանված վերլուծիչների օգնությամբ շրջակա աշխարհի մասին տեղեկատվություն ստանալու հմտությունների ձևավորում: Ստացված բազմազգայական տեղեկատվության օգտագործում, հաղորդակցման, առարկայագործնական, ճանաչողական, գործունեության և տարածական կողմնորոշման զարգացում:



Տիֆլումանկավարժի աշխատանքի հիմնական ուղղությունները կրթական հաստատություններում.

Տիֆլումանկավարժն իրականացնում է զարգացնող մանկավարժական աշխատանք հետևյալ ուղղություններով.

- Բացահայտել չտեսնող (կույր) և թույլ տեսնող սովորողների կրթական կարիքները և ուսուցման առանձնահատկությունները:
- Ունենալ անհրաժեշտ տեղեկություն սովորողներին հասանելի ծառայությունների և աջակցության ուսումնական ծրագրերի վերաբերյալ:
- Ձեռք բերել տեղեկատվություն սովորողների կրթության պետական և ազգային ռեսուրսների վերաբերյալ:
- Հստակեցնել սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

Մասնագետն իրականացնում է.

- սովորողների տիֆլումանկավարժական հետազոտում,
- բժշկական և ակնաբուժական փաստաթղթերի ուսումնասիրում,
- երեխաների դիտարկում, գնահատում,
- տեսողական ընկալման հետազոտում, զարգացում,
- զարգացնող պարապմունքների անցկացում,
- ինքնասպասարկման, ինքնակազմակերպման, կենցաղի կազմակերպման կարողությունների, հմտությունների ձևավորում, զարգացում,
- տարածական կողմնորոշման կարողության զարգացում,
- շոշափելիքի և մանր շարժունակության զարգացում (Ferreira, Sefotho, 2020):



Գնահատում

Մասնագետն իրականացնում է տեսողության և տեսողական վարքի, տարածական կողմնորոշման և շարժունակության գնահատում՝ ներառյալ բոլոր նախնական գնահատումները և վերագնահատումները: Տրամադրում է գրավոր հաշվետվություններ, որոնք փաստաթղթավորում են գնահատման արդյունքները և բացահայտում կարիքները, սահմանում է նպատակներ և խնդիրներ, որոշում սովորողին անհրաժեշտ ծառայությունների քանակն ու մակարդակը՝ ԱՌԻՊ-ի նպատակներին հասնելու համար: Մասնավորապես.

1. գնահատել՝ որոշելու տեսողական աջակցության ծառայություններ ստանալու իրավասությունը,
2. իրականացնել ֆունկցիոնալ տեսողության գնահատում,
3. իրականացնել ուսումնական միջոցների գնահատում,
4. գնահատել հիմնական ուսումնական ծրագրի կիրառելի ոլորտները՝
 - փոխհատուցման հմտություններ,
 - տարածական կողմնորոշման և շարժունակության հմտություններ,
 - սոցիալական փոխազդեցության հմտություններ,
 - ինքնուրույն ապրելու հմտություններ և անձնական կառավարում,
 - հանգստի և ժամանցի հմտություններ,
 - կարիերայի և մասնագիտական կրթության հմտություններ,
 - աջակցող տեխնոլոգիայի հմտություններ,
 - տեսողական արդյունավետության հմտություններ,
 - ինքնորոշման հմտություններ:
5. Կազմակերպել նախնական դիտում կամ ստանդարտացված գնահատման վերահսկում:



6. Համակարգել գնահատման ժամանակացույցն այն սովորողների համար, ովքեր լրացուցիչ ժամանակի կարիք ունեն:
7. Ձեռք բերել հատուկ ձևաչափով (էլեկտրոնային, բրայլյան, խոշոր տպագիր, աուդիո) ուսումնական և գնահատման նյութեր (Ravenscroft, 2015):

Բրայլյան համակարգի ուսուցում

Բացարձակ չտեսնող և մնացորդային տեսողություն ունեցող սովորողներին մասնագետն ուսուցանում է բրայլյան համակարգով կարդալ և գրել: Աշխատում է հաղորդակցումը հասակակիցների հետ բարելավելու, սոցիալական հմտություններն ու հարաբերությունները զարգացնելու ուղղությամբ (Ravenscroft, 2015):

Տարածական կողմնորոշման և շարժունակության զարգացում

Մասնագետն իրականացնում է աշխատանքներ տարածական կողմնորոշման զարգացման ուղղությամբ, որը նպաստում է տարածության մեջ սովորողի անկախ տեղաշարժման հմտության զարգացմանը:

Ցուցումների տրամադրում

Տեսողական խնդիրներ ունեցող երեխաներին սովորեցնում է հմտություններ և գիտելիքներ, որոնք թույլ կտան նրանց վստահորեն, անվտանգ, արդյունավետ և անկախ տեղաշարժվել ծանոթ և անծանոթ միջավայրերում:

Տրամադրում է տարածական կողմնորոշման և շարժունակության զարգացմանն ուղղված աջակցություն.

- սեփական մարմնի ընկալում,
- տարածական և դիրքային հասկացություններ,
- միջավայրային հասկացություններ,



- անկախ տեղաշարժման հետ կապված ընդհանուր և մանր շարժունակության հատություններ,
- զգայական իրազեկում, խթանում և մարզում,
- տեսնող ուղեկցողի աջակցությունից օգտվելու կարողություններ,
- հիմնական պաշտպանիչ, անվտանգության տեխնիկա,
- տեղեկատվության հավաքագրման տեխնիկա, ներառյալ խնդիրների լուծման ռազմավարություններ,
- կողմնորոշվելու հատություններ,
- ռելիեֆային քարտեզ կարդալու հատություններ,
- սպիտակ ձեռնափայտից օգտվելու տեխնիկայի տիրապետում և սպիտակ ձեռնափայտով տեղաշարժվելու հատություններ,
- մնացորդային տեսողության օգտագործում,
- փոքր և մեծ տարածություններում տեղաշարժվելու հատություններ,
- փողոցների հատման ռազմավարություն, ներառյալ խաչմերուկները, վերլուծություն, հատում լուսավորված և չլուսավորված խաչմերուկներում,
- հասարակական տրանսպորտից օգտվելու կանոնների տիրապետում,
- հեռախոսի օգտագործումը տեղեկատվության հավաքագրման և արտակարգ իրավիճակների համար,
- համապատասխան սոցիալական հատությունների օգտագործում,
- համայնքի հասցեների համակարգերի իմացություն և կիրառում,
- տեղորոշման համակարգերի օգտագործում (GPS),
- զգայական/շարժողական հատություններ՝ համաձայնեցված այլ մասնագետների հետ՝ ֆիզիոթերապիստ, էրգոթերապիստ
- և այլն (Nanjwan, Igba, 2019):



Աջակցություն ուսուցիչներին, ծնողներին

Հաղորդակցում, համագործակցություն, խորհրդատվություն.

1. Ցուցաբերել աջակցություն ուսուցիչներին, ծնողներին և ուսումնական հաստատության այլ աշխատակիցներին:
2. Պարբերաբար խորհրդակցել դասղեկի, դպրոցի անձնակազմի, ծնողների հետ՝ սովորողների համար ծրագրերն ու ծառայությունները համակարգելու և հարմարեցնելու նպատակով:
3. Համագործակցել դասղեկների հետ՝ բացահայտելու ուսուցման այն ոլորտները, որոնցում սովորողն աջակցության կարիք ունի:
4. Մասնակցել սովորողի ԱՌԻՊ-ի կազմմանը:
5. Համագործակցել դպրոցի անձնակազմի հետ, արդյունավետ ժամանակացույց սահմանել գնահատման, աշխատանքների պլանավորման նյութերի պատրաստման, դպրոցի ուսուցիչների և ծնողների համար համաժողովների կազմակերպման, կլոր-սեղան քննարկումների համար:
6. Համագործակցել ծնողների հետ երեխայի կարողությունների, առաջընթացի և ապագա նպատակների մասին ճիշտ պատկերացում ունենալու համար:
7. Վերապատրաստել դպրոցի ողջ անձնակազմին՝ տեսողության խանգարումներ ունեցող սովորողների անհատական կարիքների, հարմարեցումների և անհրաժեշտ ծառայությունների վերաբերյալ:
8. Համագործակցել դպրոցի ողջ անձնակազմի հետ:
9. Պարբերաբար խորհրդակցել դպրոցի համապատասխան անձնակազմի հետ փոփոխությունների, հարմարեցումների և



նկատառումների վերաբերյալ:

10. Աջակցել, գնահատել և ամրապնդել շարժունակության հմտությունները, ինչը կխրախուսի սովորողներին ինքնուրույն տեղաշարժվել:
11. Տրամադրել համապատասխան տեղեկատվություն և ուսուցում դպրոցի անձնակազմին և ծնողներին՝ սովորողի անհատականացված տարածական կողմնորոշման և շարժունակության կարիքների վերաբերյալ (Nanjwan, Igba, 2019):

Աջակցություն վարչական անձնակազմին

Աջակցել հաստատության ղեկավարությանը և ուսուցչին, սովորողի համար հարմարություններ ապահովել, ֆիզիկական միջավայրային հարմարեցումներ ստեղծել, ուսումնական նյութերի հարմարեցումներ իրականացնել (Ravenscroft, 2015):

Աջակցություն ուսումնական ծրագրի իրականացմանը

1. Համագործակցելով դպրոցի անձնակազմի հետ՝ ժամանակին տրամադրել սովորողներին և ուսուցչին անհրաժեշտ մատչելի նյութերը, հարմարեցումները, փոփոխությունները և սարքավորումները, ապահովել սովորողի առավելագույն մասնակցությունը դասարանում տեղի ունեցող բոլոր գործողություններին: Համապատասխան ուսումնական նյութերի պատրաստումը և հարմարեցումը պետք է ուղղորդվեն հատուկ մանկավարժի կողմից:
2. Պատրաստել կամ ձեռք բերել սարքավորումներ և նյութեր, ինչպիսիք են շոշափելի /ռելիեֆային/ քարտեզները, մոդելները, խոշորացնող սարքերը և սպիտակ ձեռնափայտերը՝ տարածական կողմնորոշման և շարժունակության հմտությունների ուսուցման/զարգացման համար (Ravenscroft, 2015):



ԷՐԳՈԹԵՐԱՊԻՍՏԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Էրգոթերապիա մասնագիտությունը պատկանում է էկլեկտիկ (համադրական) գիտությունների շարքին, որը, հիմնվելով բժշկական, սոցիալական, հոգեբանական և մանկավարժական գիտությունների վրա, կոչված է խթանել հաշմանդամություն ունեցող անձանց և, առհասարակ, շրջապատող միջավայրում հարմարվելու դժվարություններ ունեցող անձանց մասնակցությունը և ակտիվ գործունեությունը առօրյա և սոցիալական կյանքում: Մասնագիտությունը հիմքում ունի համընդհանուր ներառականության գաղափարը և միջամտության տարբեր մեթոդներ է կիրառում ինչպես հաշմանդամություն ունեցող անձանց, այնպես էլ նրանց հետ աշխատողների կամ նրանց խնամքն իրականացնողների հետ: Այն իր լայն կիրառությունն է գտնում (առանց տարիքային սահմանափակման) այն անձանց հետ աշխատանքում, ովքեր ունեն գործառնական խանգարումներ շարժողական, զգայաշարժական, զգայունակության, նյարդահոգեբանական և/կամ հոգեւոցիալական ոլորտներում:

Էրգոթերապիա մասնագիտությունը Հայաստանում հիմնադրվել է 2004 թ. Էրգոթերապիայի Բարձրագույն Կրթության Եվրոպական Ցանցի, Տեմպուս կրթական ծրագրերի, ԱրԲԵՄ ցերեկային կենտրոնի և Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի համատեղ ջանքերով: Շրջանավարտների մեծամասնությունը աջակցող, վերականգնողական և զարգացնող մասնագիտական ծառայություններ են մատուցում կրթական և մանկաբուժության ոլորտներում: Մասնագետների պահանջը, երկրում տարածվող ներառականության գաղափարի հետ մեկտեղ, օրեցօր աճում է:



Էրգոթերապիա մասնագիտությունն օգնում է մարդկանց իրենց կենսագործունեության մեջ լինել ինքնուրույն տարբեր տիպի զբաղվածությունների մեջ ներգրավվելիս: Այն ուսուցման, հարմարեցման, զարգացման և վերականգնման միջոցով հնարավորություն է ընձեռում մարդկանց ներգրավվել տարբեր ոլորտներում իրականացվող զբաղվածության գործընթացներում և առօրյա գործողություններում (AOTA, 2018):

Էրգոթերապիայի թիվ մեկ խնդիրն ու գլխավոր նպատակը ֆիզիկական ու մտավոր խնդիրներ ունեցող անձանց կյանքի բարելավումն է. Էրգոթերապիան օգնում է ֆիզիկական, մտավոր ու հոգեկան սահմանափակումներ ունեցող անձանց՝ ապրել անկախ ու արդյունավետ կյանքով, այլ խոսքով՝ Էրգոթերապիան բուժման ձև է զբաղվածության միջոցով (Christiansen, Baum, Bass, 2011):

Էրգոթերապիայի հիմքն այն մոտեցումները, մեթոդներն ու աշխատանքային կառուցվածքներն են, որոնք ուղղված են մտավոր և ֆիզիկական խնդիրներ ունեցող անձանց վերականգնմանն ու ինքնուրույնության ապահովմանը: Էրգոթերապետիկ միջամտություններն օգնում են մարդկանց բարելավել իրենց գործառնականությունը, ինքնուրույնությունը և ապահովել մաքսիմալ ներգրավվածություն առօրյա կյանքում (AOTA, 2018):

Էրգոթերապիստներն իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելիս օգտագործում են համապարփակ մոտեցում թերապետիկ գործընթացը պլանավորելիս: Նրանք հաշվի են առնում երեխայի և մեծահասակի ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական, հուզական, զգայական և ճանաչողական կարողությունները, նրանց ուժեղ, թույլ կողմերը և կարիքները (Cho, 2020):



Էրգոթերապիա մասնագիտության շրջանակներում որակավորում ունեցող մասնագետը, ով հնարավորություն ունի աշխատելու դպրոցում կամ ՏՄԱԿ-ում, որպես աջակցող թիմի անդամ, կարող է իրականացնել գործնական, ինչպես նաև հետազոտական, մասնագիտական գործունեություն՝ կիրառելով նորագույն վերականգնողական, էրգոթերապևտիկ գնահատման և միջամտության հատուկ մեթոդներ, աշխատելով կրթական հաստատություններում՝ որպես աջակցող, ուսուցանող և զարգացնող մասնագետ՝ ունակ կատարելու էրգոթերապևտիկ գնահատում և միջամտություն, հետազոտություններ, մշակելու և ներդնելու նոր և նորագույն մեթոդներ:

Այսպիսով, կրթական ոլորտում որպես աջակցող թիմի անդամ աշխատող էրգոթերապիստը պետք է.

- լինի այցելուակենտրոն,
- կարողանա գործնականում առաջարկել և կիրառել տարբեր մեթոդներ, աշխատանքային կառուցվածքներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ վերականգնողական ծառայություններ ստացող տարբեր կարիքներով այցելուների համար,
- մշտապես կապի մեջ լինի երեխայի, նրա ընտանիքի անդամների, ուսուցիչների հետ, ունենա միջանձնային և հաղորդակցման լավ հմտություններ այցելուներին, նրանց ընտանիքի անդամներին այցելուի իրավիճակը նկարագրելու, անհրաժեշտ միջոցառումները բացատրելու և ուսուցանելու, արագ վերականգնման հնարավոր ընթացքը մեկնաբանելու համար,
- ճկուն լինի և արագ հարմարվի տարբեր միջավայրային պայմաններին, ստեղծված իրավիճակներին, այցելուի վարքին՝ առաջարկելով օպտիմալ և հրատապ լուծումներ,



- լինի համբերատար, որպեսզի կարողանա որակյալ ծառայություններ մատուցել տարբեր խնդիրներով այցելուներին՝ երեխաներին և մեծահասակներին (AOTA, 2018):

Հանրակրթական դպրոցի էրգոթերապիստի աշխատանքի բովանդակությունը

Էրգոթերապիստները՝ որպես մասնագետներ, կարևորագույն դեր ունեն ԿԱՊԿ ունեցող երեխաների, հաշմանդամություն կամ զբաղվածության, կենսագործունեության սահմանափակումներ, դժվարություններ և խանգարումներ ունեցող անձանց վերականգնողական ծառայություններ մատուցելու գործընթացում: Նրանք գործում են ինչպես առանձին, այնպես էլ հանդիսանում են բազմամասնագիտական թիմի անդամ՝ երեխաներին կամ մեծահասակներին մատուցվող վերականգնողական ծառայություններում (Christiansen, Baum, Bass, 2011):

Դպրոցում աշխատող էրգոթերապիստը մատուցում է հետևյալ ծառայությունները՝

- ներկայացնում է մասնագիտական կրթության բովանդակությունը (բժշկական, սոցիալական բնագավառներում) և առանձնահատկությունները,
- համակարգում է էրգոթերապիստի աշխատանքի առանձնահատկությունները (մեթոդիկաներ, մոտեցումներ, աշխատանքային կառուցվածքներ, աջակցող սարքեր) և վերլուծում դրանց հիմնական դրույթները վերականգնողական բժշկության մեջ,



- պլանավորում է ԿԱՊԿ, հաշմանդամություն կամ զբաղվածության, կենսագործունեության սահմանափակումներ, դժվարություններ և խանգարումներ ունեցող երեխաների հետ իրականացվող էրգոթերապևտիկ միջամտության գործընթացի մասնագիտական գործունեությունը,
- ներկայացնում է ԿԱՊԿ, հաշմանդամություն կամ զբաղվածության, կենսագործունեության սահմանափակումներ, դժվարություններ և խանգարումներ ունեցող նախադպրոցականների, դպրոցականների, դեռահասների ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները, իրավունքները, էրգոթերապևտիկ միջամտության գործընթացում բարոյական նորմերը հաշվի առնելու և մասնագիտական գործունեության կանոններին ու նորմերին տիրապետելու անհրաժեշտությունը,
- վերլուծում է ԿԱՊԿ, հաշմանդամություն կամ զբաղվածության, կենսագործունեության սահմանափակումներ ունեցող երեխաների հետ իրականացվող էրգոթերապևտիկ աշխատանքի գործընթացում դրսևորվող խնդրահարույց մասնավոր դեպքերը,
- ներկայացնում է մասնագիտական կրթության բովանդակության (առողջապահական, սոցիալական և կրթական բնագավառներ) և միջամտության այլընտրանքային մոտեցումները, մեկնաբանությունները,
- համագործակցում է ԿԱՊԿ, հաշմանդամություն կամ զբաղվածության, կենսագործունեության սահմանափակումներ, դժվարություններ և խանգարումներ ունեցող երեխայի կրթության աջակցման ծրագրին և վերականգնողական



գործընթացին մասնակցող մյուս մասնագետների, ուսուցիչների և սովորողի ընտանիքի անդամների հետ,

- հստակ սահմանում, նշանակում, նախագծում, առաջարկում է աջակցող սարքավորումների կիրառումը՝ ներկայացնելով ցուցումներն ու օգտագործման եղանակները, ելնելով երեխայի հիմնախնդրից (հիմնախնդիրներից),
- պլանավորում, կազմակերպում, ղեկավարում, վերահսկում, գնահատում է ԿԱՊԿ, հաշմանդամություն կամ զբաղվածության, կենսագործունեության սահմանափակումներ ունեցող երեխաների դժվարությունների հաղթահարման և վերականգնման գործընթացը,
- ծանոթանում է ԿԱՊԿ, հաշմանդամություն կամ զբաղվածության, կենսագործունեության սահմանափակումներ ունեցող երեխաների անձնական գործի և կրթական, առողջապահական կամ սոցիալական ոլորտին առնչվող փաստաթղթերի հետ,
- պլանավորում, կազմակերպում, իրականացնում է ԿԱՊԿ, հաշմանդամություն կամ զբաղվածության, կենսագործունեության սահմանափակումներ, դժվարություններ և խանգարումներ ունեցող նախադպրոցականների, դպրոցականների, դեռահասների վերականգնողական գործընթացը, ուսումնական, արտաուսումնական գործունեությունն ու զբաղվածությունը, մասնագիտական աշխատանքի նախապատրաստման գործընթացը, վերլուծում և գնահատում էրգոթերապևտիկ միջամտության արդյունքները՝ պահպանելով մասնագիտական վարքի նորմերը,
- կիրառում է ժամանակակից էրգոթերապևտիկ մոտեցումներ, տեխնոլոգիաներ, աջակցող սարքեր, արդյունավետ ռազմավարություն, մարտավարություն և մեթոդներ՝ հաշմանդամության



կամ զբաղվածության, կենսագործունեության սահմանափակումների, դժվարությունների և խանգարումների կանխարգելման, հաղթահարման և վերականգնման գործընթացում,

- արդյունավետ հաղորդակցվում և համագործակցում է երեխաների ծնողների, ընտանիքի անդամների, ուսուցիչների, աջակցող թիմի մասնագետների և համայնքի հետ,
- դրսևորում է մասնագիտական վարպետություն (հասկանալ, գնահատել իրավիճակը և համարժեք լուծումներ գտնել՝ ցուցաբերելով պատասխանատվություն, գիտակցականություն, ապրումակցում և այլն) խնդրահարույց և հոգեբանական տարբեր իրավիճակներում,
- վերլուծում է ԿԱՊԿ, հաշմանդամություն կամ զբաղվածության, կենսագործունեության սահմանափակումներ, դժվարություններ և խանգարումներ ունեցող երեխաների հետ իրականացվող էրգոթերապևտիկ միջամտության ընթացքում ծագած խնդիրները և գնահատում դրանք գործնական տեսանկյունից,
- հիմնավորում է ԿԱՊԿ, հաշմանդամություն կամ զբաղվածության, կենսագործունեության սահմանափակումներ ունեցող երեխաների ֆիզիկական և սոցիալական սահմանափակումներին վերաբերող գիտելիքների նշանակությունը էրգոթերապևտիկ աշխատանքների արդյունավետության բարձրացման գործընթացում,
- գնահատում է սեփական մասնագիտական աճը, պլանավորում հետագա մասնագիտական զարգացումը շարունակական կրթության և ինքնակրթության ճանապարհով (AOTA, 2018):

Էրգոթերապիստի աշխատանքի տարեկան ծրագրից բացի մշակվում է յուրաքանչյուր երեխայի հետ իրականացվող անհատական աշխատանքի գործողությունների պլան, որտեղ



հստակեցվում են աջակցության երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակները, գործողությունները, անհրաժեշտ ռեսուրսները, ժամկետները, աշխատանքի մոտեցումներն ու մեթոդները (Fearing, Clark, 2000):

Ընդհանուր առմամբ՝ էրգոթերապիստի աշխատանքը երեխաների կամ նրանց խմբերի հետ ունի հետևյալ կառուցվածքը՝ համապատասխան քայլերով.

h/h	Քայլեր
1	Հիմնախնդրի վերհանում Նպատակի սահմանում
2	Տեսական և գործնական հիմքերի և մոտեցումների վերլուծություն
3	Գործողությունների կատարողականության և միջավայրային գործոնների առկայության/բացակայության, ազդեցության գնահատում
4	Ուժեղ կողմերի և աջակցող ռեսուրսների առկայության բացահայտում և արձանագրում
5	Վերջնարդյունքների սահմանում Գործողությունների պլանի կազմում
6	Գործողությունների պլանի ներդրում Միջամտության /աջակցության տրամադրում
7	Վերջնարդյունքների գնահատում Վերջնական գնահատում



Հատուկ մանկավարժի տարեկան ծրագրի օրինակ

Հատուկ մանկավարժն աշխատանքի ընթացքում վարում է պարտադիր փաստաթղթեր, որոնք միտված են աշխատանքների պլանավորման, կազմակերպման և վերլուծության գործընթացների բարելավմանը: Փաստաթղթերի ձևաչափերը, կառուցվածքը կամ բովանդակությունը կարող են վերանայվել օրենսդրական փոփոխությունների հիմքով, կրթական հաստատության առանձնահատկությունների և աշխատանքների բովանդակային նկատառումների հիման վրա: Հատուկ մանկավարժի պարտադիր փաստաթղթերից է տարեկան ծրագիրը, որի հիման վրա մշակվում է նաև գործողությունների պլան աշխատանքի յուրաքանչյուր ուղղության վերաբերյալ, որտեղ հստակեցվում են աշխատանքի նպատակը, նպատակի իրագործմանը միտված գործողությունները, աշխատանքների կազմակերպման ձևը, անհրաժեշտ ռեսուրսները, ժամանակացույցները:

N	Աշխատանքի ուղղություններ	Իրականացվող գործողություններ	Կատարման ժամկետ
1.	Նախապատրաստական, կազմակերպչական աշխատանքներ	Աշխատանքի պլանավորում, ժամանակացույցի կազմում, ԿԱՊԿ ունեցող սովորողների տվյալների հավաքագրում	Օգոստոս - սեպտեմբեր



		Տարեկան պլանի կազմում, ամսական, շաբաթական աշխատանքային պլանավորում, Աշխատանքի կազմակերպչական ուղղությունների սահմանում	սեպտեմբեր, հունվար
2.	Գնահատում	Փաստաթղթերի ուսումնասիրություն	Սեպտեմբեր
		Սովորողների հոգեբանական և տարիքային առանձնահատկությունների ուսումնասիրություն	Պարբերաբար
		ԿԱՊԿ ունեցող սովորողների ճանաչողական, ֆիզիկական, շարժողական ոլորտի և ուսումնական գործունեության դիտարկում և գնահատում,	Սեպտեմբեր
		ԿԱՊԿ ունեցող սովորողների գնահատման իրականացում	Սեպտեմբեր (ըստ անհրաժեշտության)



		Սովորողների զարգացման առաջընթացի գնահատում, կիրառվող հնարների և մեթոդների արդյունավետության գնահատում:	Մեպտեմբեր, հունվար, մայիս
3.	ԱՌԻՊ-ի կազմում	Սովորողի կրթական գործընթացում կիրառված արդյունավետ ռազմավարությունների և առաջացած դժվարությունների մասին տեղեկատվության տրամադրում ԱՌԻՊ-ի մշակման նպատակով:	Մեպտեմբեր
		Ուսումնական գործընթացում սովորողների մասնակցությունը և ներառումն ապահովող աշխատանքի ձևերի սահմանում:	Մեպտեմբեր



		Յուրաքանչյուր սովորողի՝ հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համապատասխան հարմարեցումների որոշում:	Սեպտեմբեր
		Մասնակցություն սովորողի ԱՌԻՊ-ի ընթացիկ, կիսամյակային և տարեկան ամփոփիչ գնահատման աշխատանքներին:	Ուսումնական տարվա ընթացքում
4.	Մանկավարժա- հոգեբանական աջակցության ծառայության տրամադրում	Անհատական և խմբային պարապմունքների անցկացում	Պարբերաբար
		Դասավտումների իրականացում	Պարբերաբար
5.	Մեթոդական աշխատանքներ	Աշխատանքային սենյակի կահավորում, հագեցում. ա) դիդակտիկ նյութերի ստեղծում և համալրում, բ) մասնագիտական, մեթոդական	Պարբերաբար



		<p>գրականության համալրում, գ) խաղերի, զարգացնող նյութերի, մեթոդական ուղեցույցների ստեղծում, համալրում, դ) մեթոդական, դիդակտիկ և կրթական աջակցող տեխնոլոգիաների ուսումնական նյութերի, հարմարեցումների ապահովում: Մասնակցություն ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ աշխատող ուսուցիչների մեթոդավորման հանդիպումներին: Մասնակցություն մանկավարժական խորհուրդներին, սեմինարներին: Ներառական կրթության և աջակցման վերաբերյալ</p>	
--	--	--	--



		<p>նյութերի ուսումնասիրում: Մասնակցություն տարբեր սեմինարների, վեբինարների, կլոր- սեղան քննարկումների:</p>	<p>Պարբերաբար՝ ուսումնական տարվա ընթացքում</p>
6.	Խորհրդատվու- թյուն	<p>Աշխատանք ուսուցիչների հետ. ա) գնահատման արդյունքների քննարկում, բ) համագործակցային դասալսումների, փոխայցելությունների արդյունքների քննարկում, գ) համատեղ դասավանդման արդյունքների քննարկում, դ) համագործակցության արդյունավետության քննարկում, ե) ուսուցիչներին և ուսուցչի օգնականներին գործնական աջակցության և խորհրդատվության տրամադրում ԿԱՊԿ ունեցող երեխաների ուսումնական գործընթացի</p>	<p>Ուսումնական տարվա ընթացքում</p>



		<p>կազմակերպման և միջավայրային հարմարեցումների վերաբերյալ</p>	
		<p>Աշխատանք ծնողների հետ. ա) Սովորողի հաջողությունների և կրթական գործընթացների խոչընդոտների քննարկում, բ) աջակցության ծրագրերի բովանդակության և ձևերի քննարկում, դ) անհատական խորհրդատվություններ և զրույցներ, զ) բաց դասերի (պարապմունքների) անցկացում</p>	<p>Ուսումնական տարվա ընթացքում</p>



7.	Աշխատանքների վերլուծություն, Հաշվետվությունների ներկայացում	Տարվա ընթացքում իրականացված աշխատանքների արդյունավետության գնահատում, սահմանված վերջնարդյունքների իրագործման գնահատում, խնդիրների և ձեռքբերումների վերլուծություն:	Մայիս, հունիս
----	--	--	---------------



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Սոցիալական մանկավարժությունը ինտեգրատիվ երիտասարդ գիտություն է, մանկավարժական գիտության կիրառական ճյուղ: Այն ձևավորվել է մանկավարժության, հոգեբանության և սոցիոլոգիայի հիմնախնդիրների հատման կետում: Ուսումնասիրության առարկան բոլոր տարիքային խմբերում անձի սոցիալականացման, հասարակությանն ինտեգրման մանկավարժական հիմնախնդիրներն են սոցիալական բոլոր գործոնների ազդեցությունների հաշվառմամբ:

Վերոնշյալից ենթադրվում է, որ աշխարհում համեմատաբար նոր է նաև սոցիալական մանկավարժի մասնագիտությունը: Սոցիալական մանկավարժի գործունեությունն ուղղված է կրթության, սոցիալական պաշտպանության և այլ ոլորտներում անձի սոցիալականացման գործընթացի ուղղորդմանը, առաջացող խնդիրների լուծման գործում սոցիալ-մանկավարժական աջակցությանը՝ կանխարգելող, ձևավորող, զարգացնող, դաստիարակող, վերականգնողական, խորհրդատվական, շտկողական գործառույթների իրացությամբ:

Հանրակրթական դպրոցում սոցիալական մանկավարժի կողմից տրամադրվող ծառայության հիմնական նպատակը կրթական միջավայրում սովորողների՝ հասարակությանը ներառման, ինտեգրման, հարմարման գործընթացներում սոցիալ-մանկավարժական աջակցությունն է, նրանց սոցիալականացման հաջողության, անձնային աճի ապահովումը (Василькова, 2001, Алмазов и др., 2002):

Հանրակրթական դպրոցում սոցիալական մանկավարժի աշխատանքի շահառուներ են ոչ միայն սովորողները, այլ նաև



ուսուցիչները, մանկավարժ մասնագետները, սովորողների ծնողները:

Հանրակրթական դպրոցի սոցիալական մանկավարժի աշխատանքի բովանդակությունը

ՀՀ հանրակրթական դպրոցներում սոցիալ-մանկավարժական գործունեության կազմակերպման համակարգի զարգացման անհրաժեշտությունը ենթադրում է հանրակրթական դպրոցներում և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում սոցիալական մանկավարժի գործունեության բովանդակության՝ հիմնական ուղղությունների, խնդիրների, գործառույթների, պարտականությունների, իրավունքների նախագծի կառուցում, ինչպես նաև սոցիալական մանկավարժի աշխատանքի որակի գնահատման չափանիշների մշակում (Թադևոսյան, 2012):

Հայաստանի Հանրապետության հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների ներկա փուլի համար բնութագրական է որակական զարգացումների, կրթության կազմակերպման և իրականացման բարձր որակի ապահովման աշխատանքների իրականացումը: Այս նպատակի իրականացումը ենթադրում է իրավական դաշտի բարեփոխում, ինստիտուցիոնալ համակարգի վերակառուցում, մասնագիտական կադրերի որակի, մեթոդական և ոլորտի նյութական ապահովման մակարդակի բարձրացում: Նշված բարեփոխումների հիմնական խնդիրներն են՝ ապահովել որակյալ կրթություն, բարձրացնել հանրակրթության արդյունավետությունը, կրթությունը դարձնել



արդիական, համապատասխանեցնել եվրոպական, և, ընդհանրապես, միջազգային չափորոշիչների պահանջներին, որոնք արտացոլված են ՀՀ Կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշման մեջ:

Հանրակրթության հիմնական նպատակը շրջանավարտներին հասարակության մեջ ինքնուրույն կենսագործունեությանը պատրաստելն է, մասնագիտության և կյանքի ուղու ընտրության հարցում կողմնորոշելը, տարիքային այդ փուլերում նրանց հաջող սոցիալականացման ապահովումը: Դպրոցականների սոցիալականացման, ժամանակակից հասարակության պայմաններում նրանց ինքնաիրացման համար բարենպաստ հնարավորությունների ապահովման, սոցիալ-իրավական պաշտպանվածության հետ կապված խնդիրների լուծման գործում մեծ է հանրակրթական դպրոցում սոցիալ-մանկավարժական գործունեության կազմակերպման համակարգի դերը: Այդ համակարգի արդյունավետ գործառնությունն, ըստ էության, պայմանավորված է ինչպես սոցիալական մանկավարժության՝ որպես ինքնուրույն գիտության, այնպես էլ հանրակրթական դպրոցում և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում սոցիալական մանկավարժների ինստիտուտի զարգացմամբ: ՀՀ հանրակրթական դպրոցներում և ՏՄԱԿ-ներում սոցիալական մանկավարժների ինստիտուտը գտնվում է դեռևս ձևավորման փուլում:

Վերոնշյալ բարեփոխումների անհրաժեշտությունն ավելի է կարևորվում՝ պայմանավորված այն իրողությամբ, որ մինչև 2025 թվականը հանրակրթության համակարգն անցնում է համընդհանուր ներառականության, և սոցիալական մանկավարժների աշխատանքի կարևոր ուղղություններից մեկը ԿԱՊԿ ունեցող սովորողների սոցիալականացման հիմնախնդիրների լուծումն է:



Հանրակրթության ոլորտում սոցիալական մանկավարժների գործունեության բովանդակության, մասնավորապես՝ միայն պարտականությունների մասին նշված է ՀՀ Կառավարության 14.10.2010 թվականի «Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին» 1391-Ն որոշման մեջ:

«Հանրակրթական դպրոցներում սոցիալ-մանկավարժական գործունեության կազմակերպման համակարգի զարգացման հեռանկարները» խորագրով հոդվածում ձևակերպվել են հանրակրթական դպրոցում աշխատող սոցիալական մանկավարժի աշխատանքի ուղղությունները, խնդիրները, իրավունքները, պարտականությունները, ինչպես նաև կարևորվել է որակի գնահատման կոնկրետ, չափելի չափանիշների մշակման անհրաժեշտությունը (Թադևոսյան, 2012):

«Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04.2017 թվականի 370-Ն հրամանում սահմանվել է անհատական ուսումնական պլանով նախատեսվող աջակցող ծառայությունների տեսակը, ժամանակահատվածը, տևողությունն ու ծավալները, որտեղ առանձին ներկայացվում են սոցիալական մանկավարժի ծառայությունների ժամկետային և ծավալային ցուցանիշներն՝ ըստ ԿԱՊԿ աստիճանի:

Վերոնշյալի հիման վրա գալիս ենք եզրահանգման, որ կարիք կա հստակեցնելու հանրակրթական դպրոցի սոցիալական մանկավարժի աշխատանքի հիմնական բովանդակությունը.

- ուղղությունները,



- գործառույթները,
- պարտականությունները,
- նրանց իրավունքները,
- այդ աշխատանքի արդյունավետության գնահատման չափանիշները,

ինչն էլ կնպաստի հանրակրթական դպրոցում սոցիալ-մանկավարժական գործունեության կազմակերպման համակարգի զարգացմանը:

Հանրակրթական դպրոցում սոցիալական մանկավարժի աշխատանքի բովանդակությունն ընդգրկում է հետևյալ հիմնական ուղղությունները.

1. մանկավարժահոգեբանական աջակցության թիմում համագործակցության և համատեղ աշխատանքի ուղղություն,
2. սովորողների ընտանիքների հետ համագործակցության, ծնողական կրթության ուղղություն,
3. մեթոդական աշխատանքների ուղղություն,
4. հետազոտական աշխատանքների ուղղություն,
5. տեղական ինքնակառավարման մարմինների, պետական և հասարակական կազմակերպությունների, սոցիալական ծառայությունների, զբաղվածության կենտրոնների, ոստիկանության համապատասխան բաժանմունքների հետ համագործակցային աշխատանքի ուղղություն,
6. սովորողների զարգացմանը, տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին համապատասխան անձնային աճին, սոցիալական հմտությունների զարգացմանն ու դպրոցական կրթության հաջորդ աստիճաններին նախապատրաստությանն ուղղված սոցիալ-մանկավարժական աշխատանքի ուղղություն,
7. սոցիալ-իրավական պաշտպանության ուղղություն:



Դպրոցում սոցիալական մանկավարժի աշխատանքի հիմնական գործառույթներն են.

1. **Դիագնոստիկ և կանխատեսող գործառույթ:** Ուսումնասիրում և գնահատում է սովորողների զարգացման տարիքային և անհատական հոգեբանական առանձնահատկությունները, նրանց անձի ուղղվածությունը՝ հետաքրքրությունները, պահանջմունքները, սոցիալական շփումների ոլորտը, կենսապայմանները, ռեֆերենտային խումբը, համայնքի սոցիալական խնդիրները, առանձնահատկությունները, երեխայի անձնային աճի մակարդակը, կատարված դիագնոստիկ աշխատանքների արդյունքում կատարում են կանխատեսումներ սովորողների սոցիալական զարգացման ընթացքի, դպրոցի սոցիալական քաղաքականության, զարգացման ռազմավարության, իր աշխատանքային պլանով նախատեսված ծրագրերի, նախագծերի հնարավոր արդյունքների վերաբերյալ (Шакурова, 2004):
2. **Համակարգող-կազմակերպչական գործառույթ:** Դիագնոստիկայի արդյունքների հիման վրա (հաշվի առնելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը) կազմակերպում և խթանում է սոցիալականորեն նշանակալի գործունեության տարբեր տեսակները, սովորողների ժամանցը, հատկապես շեշտը դնում է ժամանցի մշակութային ձևի վրա, իրականացնում մասնագիտական կողմնորոշում, խթանում սովորողների ակտիվությունը տարբեր բովանդակությամբ միջոցառումներով, կազմակերպում և համակարգում է մանկապատանեկան խմբակների ձևավորումն ու գործունեությունը, համակարգում դպրոցի և սոցիալ-մանկավարժական աշխատանք իրականացնող, բժշկական, կրթական, մշակութային,



մարզական, իրավապաշտպան հաստատությունների, սոցիալական ծառայությունների համագործակցությունը:

3. **Կանխարգելիչ գործառույթ:** Իր աշխատանքում փորձում է բացահայտել և հաշվի առնել սովորողի անձի զարգացման վրա ազդող բոլոր գործոնները, կանխատեսում է դրանց հնարավոր բացասական հետևանքները և կիրառում կանխարգելիչ մանկավարժական, սոցիալ-իրավական, հոգեբանական, տնտեսական (միջնորդավորված) մեխանիզմներ, նպաստում է դպրոցում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ստեղծմանը, մարդասիրական հարաբերությունների ձևավորմանը, իրականացնում սովորողների և դպրոցի աշխատակիցների, ուսուցիչների իրավական լուսավորում:
4. **Պաշտպանական գործառույթ:** Մշակում և իրականացնում է սովորողի և նրա ընտանիքի սոցիալ-մանկավարժական աջակցության ծրագրեր, սովորողների իրավական և սոցիալական պաշտպանության գործառույթներ, աշխատանքներ կատարում դպրոցում անվտանգ միջավայրի ստեղծման նպատակով, պաշտպանում սովորողների իրավունքները ինչպես դպրոցում, այնպես էլ իրավապահ, արդարադատության, առողջապահական, պետական այլ և տեղական ինքնակառավարման մարմիններում: Իրականացնում է սովորողների, մանկավարժ մասնագետների, ծնողների իրավական կրթությանը, իրավագիտակցության բարձրացմանն ուղղված աշխատանքներ:
5. **Սոցիալ-մանկավարժական վերականգնողական և շտկողական գործառույթ:** Սովորողների և ծնողների հետ իրականացնում է բացատրական աշխատանքներ, առաջադիմությանը հետ ընկնող սովորողներին փորձում է ներառել ուսումնական գործընթացում, մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կազմում մասնակցում է կրթության



առնձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների զարգացման տարբեր խանգարումների, կորցված կամ չձևավորված սոցիալական հմտությունների շտկման և վերականգնման աշխատանքներին:

6. Հետազոտական և մեթոդական գործառույթ: Մշակում և իրականացնում է հանրակրթության ոլորտում սոցիալ-մանկավարժական հիմնախնդիրների, սոցիալական մանկավարժի աշխատանքում առկա խնդիրների ուսումնասիրման հետազոտական ծրագրեր, վերլուծում արդյունքները, մշակում բացահայտված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններ, մեթոդական նյութեր, իրականացնում գործնականում դրանց ներդրման աշխատանքներ (Թադևոսյան, 2008):

Հանրակրթական դպրոցում սոցիալական մանկավարժն իրավունք ունի.

- մասնակցելու դպրոցի զարգացման ծրագրերի, դպրոցի սոցիալական քաղաքականության մշակմանը,
- մասնակցելու դպրոցում դաստիարակչական աշխատանքների համար պատասխանատու ենթակառուցվածքների գործունեության ծրագրերի կազմմանն ու համատեղ իրականացմանը,
- ներկայացնելու և պաշտպանելու սովորողների շահերն ու իրավունքները օրենսդիր, գործադիր և դատական մարմիններում, մասնավորապես՝ իրավապահ և արդարադատության մարմիններում,
- ուսումնասիրելու սովորողների անձնային որակները, անհատականությունը, նրանց դիրքն ընտանիքում, փոխհարաբերություններն ընտանիքի անդամների հետ,
- կատարելու դիագնոստիկ աշխատանք, սոցիալ-մանկավարժական հետազոտություններ տարբեր մեթոդներով ու մեթոդիկաներով,



- ակնկալելու դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքներ իրականացնող անձանցից՝ պահպանել մասնագիտական մանկավարժական էթիկայի պահանջներն ու նորմերը,
- կատարելու պաշտոնական հարցումներ պետական վիճակագրական ծառայությունից, ոստիկանությունից, սոցիոլոգիական կենտրոններից դպրոցում սոցիալ-մանկավարժական գործունեության վերաբերյալ, վերլուծելու, համադրելու և նպատակային օգտագործելու տրամադրված տեղեկատվությունը հետագա ծրագրերում, աշխատանքներում,
- դպրոցի տնօրենության հրահանգների, ցուցումների, հանձնարարականների հետ անհամաձայնության դեպքում (երբ դրանք հակասում են մանկավարժական մասնագիտական էթիկայի պահանջներին) հարցը ներկայացնելու քննարկման մանկավարժական խորհրդում (Дмитриева, Яркова, Черноусова, 2007): Ինչպես ցանկացած մասնագիտական գործունեություն, այնպես էլ սոցիալական մանկավարժի գործունեությունը հանրակրթական դպրոցում ենթակա է փորձաքննության, գնահատման՝ ըստ մի շարք չափանիշների կամ ցուցիչների: Այդպիսի չափանիշներ են.
- սոցիալական մանկավարժի աշխատանքային պլանի (շաբաթական, ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան) առկայությունը և որակը,
- սոցիալական մանկավարժի աշխատանքային պլանի կատարման արդյունավետությունը,
- դպրոցական մակարդակում սովորողների կարիքի գնահատման որակը, օբյեկտիվությունը,



- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար անհատական ուսումնական պլանների որակը,
- անհատական ուսումնական պլանների կատարման արդյունավետությունը,
- սովորողների սոցիալականացման և անձնային աճի ցուցանիշները հաշվետու ժամանակաշրջանում,
- դպրոցական աշխատակազմում բարոյահոգեբանական մթնոլորտի, դրսևորվող սոցիալ-հոգեբանական երևույթների բովանդակության համեմատությունը գործունեության հաշվետու ժամանակահատվածում,
- սովորողների, նրանց խմբերի միջև փոխհարաբերությունների բնույթի, առկա խնդիրների և դրանց լուծմանն ուղղված աշխատանքների բովանդակության վերլուծությունն ու համեմատությունը սոցիալական մանկավարժի աշխատանքային գործունեության հաշվետու ժամանակահատվածում,
- համամարդկային և ազգային արժեքների, բարոյական և իրավական նորմերի նկատմամբ սովորողների և նրանց ընտանիքների վերաբերմունքի փոփոխությունը սոցիալական մանկավարժի աշխատանքի արդյունքում,
- դպրոցում, համայնքում, հասարակական գործունեության տարբեր ոլորտներում սովորողների և նրանց ծնողների ներգրավվածության, համայնքի հասարակական կյանքում մասնակցության աստիճանական փոփոխությունը, զարգացումը,
- դպրոցում սոցիալական մանկավարժի մասնագիտության, նրա աշխատանքի նկատմամբ սովորողների և նրանց ծնողների վերաբերմունքի փոփոխության ցուցանիշները,



- սոցիալական մանկավարժի իրավասությունների վերլուծությունն ու համեմատությունը կոնկրետ ժամանակահատվածներում,
- դպրոցի և պետական, հասարակական կազմակերպությունների, սոցիալական ծառայությունների միջև համագործակցության շրջանակները հաշվետու ժամանակահատվածում,
- նախաձեռնողականությունը իր մասնագիտական պարտականություններն իրականացնելիս,
- գիտահետազոտական աշխատանքներում մասնակցության աստիճանը, գիտական ամսագրերում, տեղեկագրերում այդ հետազոտությունների տվյալներով հրապարակումների առկայությունը:

Սակայն միայն չափորոշիչների կամ ցուցիչների առկայությունը դեռևս բավարար չէ հանրակրթական դպրոցում սոցիալական մանկավարժի աշխատանքի արդյունավետությունը գնահատելու համար: Անհրաժեշտ է նաև համակարգել, պարբերաբար ուսումնասիրել, հաշվառել կատարված աշխատանքները, դրանց արդյունքները, վեր հանել դրանց թերություններն ու բացթողումները, գտնել պատճառները և շտկել:

Սոցիալական մանկավարժի կողմից իր աշխատանքի ընթացքում օգտագործվող փաստաթղթերի շարքում կարևորվում են սովորողների մանկավարժահոգեբանական բնութագրերը, նրանց ընտանիքների սոցիալական կարգավիճակի մասին փաստաթղթերը, դպրոցի տարեկան և կիսամյակային աշխատանքային պլանները, դպրոցական կոլեկտիվի, այդ թվում՝ մանկավարժական կոլեկտիվի սոցիալ-մանկավարժական բնութագիրը:

Հանրակրթական դպրոցում առանձնացվում են սոցիալ-մանկավարժական գործունեության հետևյալ փուլերը.



1. Սոցիալ-մանկավարժական աշխատանքի նախապատրաստական, տեղեկատվության ձեռքբերման, այսինքն՝ դիագնոստիկ աշխատանքի փուլ: Այս փուլում սոցիալական մանկավարժը.
 - ծանոթանում է սովորողների, նրանց ընտանիքների անդամների հետ,
 - ձևավորում է շփումներ և ամրապնդում դրանք տարբեր մասնագետների՝ հոգեբանների, հատուկ մանկավարժների, ինչպես նաև առարկայական ուսուցիչների, մեթոդախաղարման և ծնողկոմիտեի անդամների հետ,
 - դպրոցում, համայնքում կատարում է սոցիալ-մանկավարժական դիագնոստիկ աշխատանք,
 - ուսումնասիրում է իր նկատմամբ սովորողների և նրանց ծնողների, այլ մասնագետների վերաբերմունքը,
 - հստակեցնում է պետական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ձևերը, նախանշում ուղիները (Никитина, Глухова, 2007):
2. Համակարգման-կազմակերպչական փուլ, որի ընթացքում սոցիալական մանկավարժը.
 - հավաքագրում է մասնագիտական տեսանկյունից նշանակալի և արժեքավոր տեղեկատվություն,
 - ուսումնասիրում և գնահատում է դպրոցի աշխատակիցների և համայնքի դաստիարակչական ներուժը, հնարավորությունները,
 - կազմում է իր աշխատանքի ընթացիկ և հեռահար նշանակության պլանները,
 - դասակարգում, վերլուծում և համադրում է աշխատանքի ընթացքում առաջ եկած խնդիրները,



- մշակում է սովորողների սոցիալ-իրավական պաշտպանության համակարգի մեխանիզմները տվյալ դպրոցում և դրանց արդյունավետ գործառնության ուղիները,
 - ընտրում է նպատակահարմար կամ օպտիմալ սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաներ,
 - սովորողների ընտանիքներին ցուցաբերում է սոցիալ-մանկավարժական աջակցություն,
 - ձևակերպում է իր գործունեության ընթացքում անհրաժեշտ փաստաթղթերը:
3. Սոցիալական մանկավարժի աշխատանքի երրորդ փուլը ենթադրում է.
- մասնագիտական գործունեության բաղադրիչների՝ դիագնոստիկ, կանխատեսողական, կանխարգելիչ, խորհրդատվական, վերականգնողական, շտկողական գործառնությունների կատարելագործում,
 - մեթոդմիավորումների, տարբեր խմբակների աշխատանքներին ակտիվ մասնակցություն, սոցիալ-մանկավարժական աջակցություն,
 - գործընկերների մասնագիտական փորձի ուսումնասիրում և վերլուծություն, թերությունների և բացթողումների վերացում,
 - հանրակրթական դպրոցում սոցիալ-մանկավարժական գործունեության կազմակերպման համակարգի արդյունավետ գործառնությունը գնահատող չափանիշների և ցուցանիշների հստակեցում,
 - իր մասնագիտական աշխատանքի որակի գնահատում փորձաքննական աշխատանքի արդյունքում,
 - սեփական մասնագիտական որակավորման բարձրացում ինչպես ինքնակրթության, այնպես էլ վերապատրաստման



դասընթացներին, սեմինարներին, կլոր-սեղաններին, գիտա-
ժողովներին ակտիվ մասնակցության միջոցով:

Այսպիսով, հանրակրթական դպրոցում սոցիալական մանկա-
վարժի աշխատանքի հիմնական ուղղությունների նախագծումը,
գործառույթների, պարտականությունների, իրավունքների,
արդյունավետության չափանիշների հստակեցումը, սոցիալ-
մանկավարժական գործունեության գնահատման մեթոդիկայի
ստեղծումը կբարձրացնի սոցիալական մանկավարժների աշխա-
տանքի և սովորողների դաստիարակության, սոցիալականաց-
ման գործընթացների արդյունավետության մակարդակը, հասա-
րակական հարաբերություններում նրանց ինքնաիրացման հնա-
րավորությունները, կնպաստի ՀՀ հանրակրթական դպրոցում
սոցիալ-մանկավարժական գործունեության կազմակերպման
համակարգի, սոցիալական մանկավարժի ինստիտուտի
զարգացմանը:

Սոցիալական մանկավարժի տարեկան ծրագրի օրինակ

Սոցիալական մանկավարժի աշխատանքի տարեկան ծրագրից
բացի մշակվում է գործողությունների պլան աշխատանքի
յուրաքանչյուր ուղղության վերաբերյալ, որտեղ հստակեցվում են
թիրախային խումբը կամ շահառուները, նպատակը, գործողու-
թյունները, անհրաժեշտ ռեսուրսները, ժամկետները, աշխատանքի
ձևը:

Աշխատանքի ուղղություններ	Իրականացվող գործողություններ	Կատարման ժամկետ
-------------------------------------	---	----------------------------



Նախապատրաստական և պլանավորման աշխատանքներ	Ուսումնական տարվա, կիսամյակային աշխատանքային պլանների կազմում	<ul style="list-style-type: none"> • Սեպտեմբերի 1-ին շաբաթ (տարեկան և 1-ին կիսամյակի) • Հունվարի 2-րդ շաբաթ (2-րդ կիսամյակի)
	Շաբաթական, ամսական, աշխատանքային պլանների կազմում, փոփոխությունների կատարում ըստ անհրաժեշտության	<ul style="list-style-type: none"> • Յուրաքանչյուր ուրբաթ օր (շաբաթական) • Յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթ (ամսական)
Սոցիալ-մանկավարժական դիագնոստիկ և հետազոտական աշխատանքներ	Սովորողների անհատական հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման աշխատանքներ	<ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարվա ընթացքում • 1-ին դասարան ընդունվողներին՝ սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներ



	<p>Կրթական գործընթացներին և դրանց առնչվող հիմնախնդիրներին վերաբերող հետազոտական աշխատանքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարվա ընթացքում
<p>Միջոցառումների կազմակերպման և իրականացման աշխատանքներ</p>	<p>Պետական, ազգային (նաև եկեղեցական), մասնագիտական տոներին, տարելիցներին նվիրված միջոցառումների կազմակերպում և իրականացում.</p> <ul style="list-style-type: none"> - Սեպտեմբերի 21 - Հոկտեմբերի 5 - Հունվարի 6 - Հունվարի 28 - Ապրիլի 24 - Մայիսի 1 - Մայիսի 9 - Մայիսի 28 - Հունիսի 1 	<ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարվա ընթացքում նշված տոներին, տարելիցներին նախորդող օրերին



	Արտադպրոցական դաստիարակչական միջոցառումների կազմակերպում և իրականացում	<ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարվա ընթացքում
	Էքսկուրսիաների կազմակերպում հայրենաճանաչության նպատակով	<ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարվա ընթացքում • Տոներին նախորդող օրերին
	Բանակումների, ճամբարների կազմակերպում	<ul style="list-style-type: none"> • Արձակուրդների, հանգստյան օրերի ընթացքում
	Կլոր սեղանների, թեմատիկ բանավեճերի կազմակերպում	<ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարվա ընթացքում
Ծնողների հետ աշխատանքներ	Սովորողների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ իրազեկման, խորհրդատվական աշխատանքներ	<ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարվա ընթացքում



	<p>Սովորողների հետ հաղորդակցման, դաստիարակչական աշխատանքների վերաբերյալ գիտելիքների հաղորդման, կարողությունների ձևավորման ուղղությամբ աշխատանքներ՝ սեմինար, թրեյնինգ, խորհրդատվություն</p>	<ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարվա ընթացքում
<p>ԿԱՊԿ ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքներ</p>	<p>ԿԱՊԿ ունեցող երեխաների կարիքների գնահատման աշխատանքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարվա ընթացքում • Մեպտեմբեր
	<p>ԿԱՊԿ ունեցող երեխաների համար ԱՌԻՊ-ի կազմման աշխատանքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարվա ընթացքում • Մեպտեմբեր, հոկտեմբեր



	<p>Սոցիալ-մանկավարժական աջակցություն առարկայական ուսուցիչներին ԿԱՊԿ ունեցող երեխաների հետ աշխատանքներում</p>	<ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարվա ընթացքում
	<p>Անհատական սոցիալ-մանկավարժական աշխատանքներ ԿԱՊԿ ունեցող երեխաների հետ</p>	<ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարվա ընթացքում
<p>Համագործակցային աշխատանքներ</p>	<p>Համագործակցություն, համատեղ ծրագրեր ՏՄԱԿ-ների, համայնքային իշխանությունների, ոստիկանության անչափահասների բաժնի, գորամասերի, ստեղծագործական</p>	<ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարվա ընթացքում



	<p>միությունների և զարգացման կենտրոնների հետ</p>	
	<p>Համագործակցություն մշակութային օջախների, բուհերի, հիմնարկ-ձեռնարկությունների հետ</p>	<ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարվա ընթացքում
<p>Հաշվետվությունների ներկայացման աշխատանքներ</p>	<p>Եռամսյակային աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն</p>	<ul style="list-style-type: none"> • Յուրաքանչյուր եռամսյակի հաջորդ ամսվա 1-ին շաբաթ
	<p>Կիսամյակային աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն</p>	<ul style="list-style-type: none"> • Յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա 1-ին շաբաթ
	<p>Ուսումնական տարվա աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն</p>	<ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարվա վերջին շաբաթ



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալեքսանյան, Ա. (2011). Դպրոցի հոգեբանի մեթոդական ուղեցույց, Երևան, Անտարես Մեդիա հոլդինգ, 111 էջ:
2. Ալեքսանյան Թ., Բաբայան Լ., Վարդանյան Ա., Զոհրաբյան Զ. (2008). Լսողության խանգարում ունեցող երեխաների խոսքի զարգացման ծրագիր-ձեռնարկ, ԿԱԻ, «Աստղիկ գրատուն», Երևան, 120 էջ:
3. Ավագյան Ա, Բաբայան Լ., Հովհաննիսյան Մ., Մակարյան Թ., Մանուկյան Մ., Պետրոսյան Ս. (2020). Բարդ իրավիճակների պարզ լուծումներ, World Vision Հայաստան, Երևան, 132 էջ:
4. Բաբայան Լ., Վարդանյան Ա., Հակոբյան Ա., Եփրեմյան Ա., Պետրոսյան Ռ. (2007). Խոսքի զարգացում, ծրագիր-ձեռնարկ լսողության խանգարում ունեցող երեխաների 1-4-րդ դասարանների համար, ԿԱԻ, «Աստղիկ գրատուն», Եր., 145 էջ:
5. Զոհրաբյան Զ., Բաբայան Լ., Մանուկյան Ա., Հակոբյան Ա., Եփրեմյան Ա. (2007). Լսողական ընկալման զարգացման և արտաբերման ուսուցման մեթոդիկա, ծրագիր-ձեռնարկ լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ դպրոցների համար, ԿԱԻ, «Աստղիկ գրատուն», Երևան, 99 էջ:
6. Թադևոսյան Հ. (2008). Մոցիալական մանկավարժություն, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 174 էջ:
7. Թադևոսյան Հ. Վ., (2012). Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, Երևան, N3, «Զանգակ-97» հրատարակչություն, էջ 44-51:
8. Կարապետյան Վ. (2010). Հոգեբանական ծառայությունը կրթական համակարգում: Ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Երևան, «Զանգակ-97», 456 էջ:



9. «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04.2017 թվականի 370-Ն հրաման:
10. «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ ՀՕ-35-Ն օրենքի, Հոդված 1., 10.2-րդ կետ:
11. «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ ՀՕ-35-Ն օրենքի, Հոդված 17, կետ 1:
12. ՀՀ Կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1047-Ն որոշում «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները սահմանելու մասին»:
13. ՀՀ Կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1058-Ն որոշում «Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների օրինակելի կանոնադրությունները և ցանկը սահմանելու մասին»:
14. ՀՀ Կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1058-Ն որոշում «Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների օրինակելի կանոնադրությունները և ցանկը սահմանելու մասին», հավելված 2, 16 կետ:
15. ՀՀ Կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1058-Ն որոշում «Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների օրինակելի կանոնադրությունները և ցանկը սահմանելու մասին», հավելված 2:



16. ՀՀ Կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի 1391-Ն որոշում «Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին»:
17. ՀՀ Կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»:
18. ՀՀ օրենքը «Նախադպրոցական կրթության մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին», խմբ. 06.05.20 ՀՕ-267-Ն:
19. Մանուկյան Ա., Լսողական ընկալման զարգացման և արտաբերման ձևավորման ծրագիր-ձեռնարկ լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ դպրոցների 5-9-րդ դասարանների համար, ԿԱԻ, «Աստղիկ գրատուն», Երևան, 2008, 119 էջ:
20. Ուսուցչի օգնականի ձեռնարկ. մեթոդական ուղեցույց (2022). Ձեռնարկ. - Եր.: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն., 94 էջ
21. Алмазов Б. Н., Беляева М. А., Бессонова Н. Н. (2002), Методика и технологии работы социального педагога: Учеб. пособие для студ. высш. учеб. заведений; Под ред. М. А. Галагузовой, Л. В. Мардахаева. Москва: Издательский центр Академия, с. 59-74, 192 с.
22. Аманатова М. М., Андреева Н. Г., Тосуниди О. М. (2010). Справочник школьного логопеда. Изд. 2-е, Ростов н/Д: Феникс, 318 с.



23. Белущенко В. А., Наумов А. Е., Седова М. Ю. (2006). Педагогическая реабилитация детей с нарушением слуха, Санкт-Петербург. 108 с.
24. Бессонова Т. П. (2010). Содержание и организация логопедической работы учителя-логопеда общеобразовательного учреждения. Москва: АПК и ППРО, 56 с.
25. Бородина М. И. (2020). Внедрение в школах штатных должностей специалистов (педагог-психолог, социальный педагог, логопед, сурдопедагог, олигофренопедагог, тифлопедагог), Методические рекомендации для руководителей общеобразовательных организаций, Волгоград, 148 стр.
26. Василькова Ю. В. (2001). Методика и опыт работы социального педагога: Учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений. - Москва, Издательский центр Академия, с. 62-65, 160 с.
27. Горбашова А. В. (2014). Психологическое просвещение родителей, Материалы VI Международной студенческой научной конференции «Студенческий научный форум».
28. Дмитриева В. Г., Яркова И. В., Черноусова Ф. П. (2007). Социальный педагог в образовательном учреждении. Учебно-методическое пособие, Москва, 96 с.
29. Дубровина И. В. (2022), Психолого-педагогическое взаимодействие участников образовательного процесса в 2 ч. Часть 2 : учебник для вузов. -5-е изд., испр. и доп. — Москва: Издательство Юрайт, 2022. -280 с.
30. Джинотт Х. Дж. (2005). Групповая психотерапия с детьми. Теория и практика игровой терапии., Москва: Апрель-Пресс, 272 с.



31. Епифанцева Т. Б., Киселенко Т. Е., Могилева И. А., Соловьева И. Г., Титкова Т. В. (2005). Настольная книга педагога-дефектолога. Ростов: Изд-во Феникс, 576 с.
32. Елецкая О. В., Горбачевская Н. Ю. (2005). Организация логопедической работы в школе. Москва: изд. ТЦ Сфера, 190 с.
33. Ермаков В. П., Якунин Г. А. (2000). Основы тифлопедагогики: Развитие, обучение и воспитание детей с нарушениями зрения: Учеб. пособие для студ. высш. учеб. заведений. Москва: Гуманит. изд. центр ВЛАДОС, 240 с.
34. Карпова Г. А. (2008). Основы сурдопедагогики: учеб. пособие для студ. Екатеринбург, 354 с.
35. Кочиева Е. М. (2004). Психологические условия профессионального взаимодействия практического психолога и педагога в едином образовательном пространстве: автореф. Диссертация канд. псих. наук, Нижний Новгород.
36. Кукушина В. (2010). Логопедия в школе. Ростов-на-Дону: изд. Феникс, 368 с.
37. Мазанова Е. В. (2009). Школьный логопункт, документация, планирование и организация коррекционной работы. Москва: Изд. ГНОМ и Д, 120 с.
38. Назарова Л. П. (2001). Методика развития слухового восприятия у детей с нарушениями слуха: Учеб. Пособие. Москва.
39. Никитина Н. И., Глухова М. Ф. (2007). Методика и технология работы социального педагога: Учеб. пособие для студ. пед. Училищ и колледжей, обучающихся по специальности социальная педагогика. Москва, ВЛАДОС, 399 с.
40. Овчарова Р. В. (2003). Практическая психология образования: Учеб. пособие для студ. психол. фак. Университетов. Москва: Издательский центр Академия, 448 с.



41. Паленной М. (2020). Дверь в большой мир: билингвистическое обучение глухих. 443 с.
42. Позднякова А. В. (2016). Формы работы психолога с родителями учащихся, сборник статей МБОУ лицея №6, с.1-4 <http://micro.goruno-dubna.ru/wp-content/uploads/2016/10/Statya-Formy-raboty-shkolnogo-psihologa-s-roditelyami-uchashhihsya.pdf>
43. Речицкая Е. Г. (2004). Сурдопедагогика. ВЛАДОС, 770 с.
44. Савинков С. Н. (2020). Психологическая служба в образовании: учебное пособие для вузов / С. Н. Савинков, Москва: Издательство Юрайт.
45. Савинков С. Н. (2020). Психологическая служба в образовании: учебное пособие для вузов / С. Н. Савинков, Москва: Издательство Юрайт, 169 с.
46. Смид Р. (2000). Групповая работа с детьми и подростками / Пер. с англ. 2-е изд., исправленное, Москва. Генезис, 272с.
47. Фертикова Д. О. (2017). Профессионально-этические принципы в деятельности социального педагога, Международный журнал гуманитарных и естественных наук 11, с. 43-45.
48. Хухлаева О. В. (2019). Психологическая служба в образовании. Школьный психолог. Учебное пособие 1-е изд, 353 с.
49. Хухлаева О. В. (2022). Психологическое консультирование и психологическая коррекция: учебник и практикум для вузов, Москва: Издательство Юрайт, 423 с.
50. Шакурова М. В. (2004). Методика и технология работы социального педагога: Учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений. 2-е издание, стереотип. Москва: Издательский центр Академия, 272 с.



51. American Occupational Therapy Association (AOTA), (2018). School-based occupational therapy. AOTA. Retrieved July 25, 2018.
52. Ravenscroft, J., (2015), 'A discussion on what is a qualified teacher of pupils with visual impairment, editorial', *British Journal of Visual Impairment* 33(3), 161–166.
<https://doi.org/10.1177/0264619615603287>
53. Cho, M. (2020). OT Theories and Models. OT Theory. <https://ottheory.com/theories-and-models>.
54. Christiansen, C. H., Baum, M. C., & Bass, J. D. (2011). *Foundations for Practice in Occupational Therapy* (5th ed.). London: Churchill-Livingstone. pp. 84–104.
55. Fearing, G. & Clark, J. (2000). *Individuals in context: A practical guide to client-centered practice*. Thorofare, NJ: Slack Incorporated.
56. Ferrel, J. (2012). *Family engagement and children with disabilities. A resource guide for educators and parents*. Cambridge, MA: Harvard Research Project.
57. Ferreira, R., & Sefotho, M.M. (eds.), (2020), 'Understanding Education for the Visually Impaired', in *Opening Eyes Volume 1*, pp. i–414, AOSIS, Cape Town.
58. Nanjwan, J. D., Igba I. U. (2019). *Handbook for Educating Persons with Visual Impairment*, pp. 36-44, Calabar, Nigeria.
59. Núñez, J. C., Suárez, N., Rosário, P., Vallejo, G., Valle, A., Epstein, J. L. (2015). Relationships between Perceived Parental Involvement in Homework, Student Homework Behaviors, and Academic Achievement: Differences among Elementary, Junior High, and High School Students., *Metacognition and Learning*, 10-3, p.375-406.



60. Tichá, R., Aberly, B., Johnstone, C., Poghosyan, A., & Hunt, P. (Eds.) (2018). *Inclusive Education Strategies: A Textbook*. Minneapolis, MN, USA: University of Minnesota; Yerevan, Armenia: UNICEF Armenia & Armenian State Pedagogical University –259p.

